

„Droschak“

ORGANE

de la Fédération

Révolut. Arméniéne.

ԴՐՕՇԿԿ

Adresse:

RÉDACTION DU JOURNAL

„Droschak“

GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԳԱՆՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

„ԳԱՆՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ԳԼՏԸ

«Ռուսաց եւ նոյնիսկ ընդհանուր պատմութեան մէջ չէ եղած մի այլ կազմակերպութիւն, որ այսօր հակապետական ուժ պարուստիչ իր մէջ»...

(Բուստիստի նոտից):

Վարագոյրն իջաւ ուսական յնորագոյն արդարագատութեան՝ մեծաշառաչ գրեագի վրայ — և այժմ ի տես ամբողջ մասնող Ռուսաստանի, ամբողջ զգացող Հայութեան՝ նստած են մեղադրեալի նստարանի վրայ իսկական չարագործները, քննիչներ, դատախազներ, մինիստրներ հայտեաց և մարդատեաց վճռակը:

Նա ցոյց տւեց միանգամ ևս, որ փառութեան ուժիմը յաւերժացնելու նպատակով չի կանգ առնի ոչ մի զեղծման, ապօրինութեան ու բռնութեան առջև, որ կարելի է տարիներով գաղանային որսախուձապ կազմակերպել մի ամբողջ ժողովրդի դէմ, խուզարկել անդադար գիւղեր ու քաղաքներ, ահաբեկել խաղաղ աշխատաւոր ազգաբնակչութիւնը, փտեցնել բանտերի մէջ անմեղ երիտասարդ կեանքեր և ապա խմբագրել մի քստմենի մեղադրական, ծայրէ ծայր հիւսւած ամենալայնդակ կեղծիքներից:

94 հոգի — անպարտ հռչակած սենատական դատավճռով: 94 հոգու դէմ՝ ոչ մի փաստ, ոչ մի լուրջ ապացոյց — և սակայն... այդ մարդիկ բանի՛ տարիներ տառապել են բանտերի մէջ, Լիժինեան յնախնական քննութեան՝ ճիրաններում և աղի արցունք քամելով սպասել են անպարտութեան դատավճռին: Այսպիսի չարագործ տարկաննութիւններ հնարաւոր են... միայն ուսական տեսանների տարեգրութեան մէջ:

Աշխարհը անդադար վերիվայրուձներ ու փոթորիկներ է ապրում, շուրջը ամեն ինչ կերպարանափոխուած է, վերանորոգուած, արևմտեան նշանաբանների յաղթական որոտը հասնում է մինչև շինական վիթխարի պատնէշը — բայց այդ նողկալի տեսանները մնում են նոյնը, այդ արիւնոտ տարեգրութեան մէջ ոչինչ չի փոխուած Գեռ թւում է, հին սիստիմը շատ կողմերից գերագասելի էր...

Մտտ հարիւր հոգի անմեղ նահատակներ — նոյն

իսկ սենատի խոստովանութեամբ: 52 հոգի միայն դատապարտուած՝ կեղծիքների ու մասնութիւնների օգնութեամբ:

Լ. Յ. Դաշնակցութիւնը չի սարսափում պատասխանաւորութիւնից ու պատիժներից. մի անգամ որ նա ոտք է դրել ազատութեան և կուրի ճանապարհի վրայ՝ նա գրանով իսկ հաշուել է պատժի, հալածանքի, նահատակութեան հեռապատկերի հետ, որ անհրաժեշտ ճակատագիրն է յեղափոխական մարտիկների: Թո՛ղ գաննե՛ դահիճները դաշնակցական գործիչներին, հաստատեն փաստերով նրանց ըմբոստ թուիչքները և պատւեն ու զարգարեն նրանց գլուխը «Սիրիբի» ու տաժանակիր աշխատանքի լուսապսակով: — յեղափոխական գործիչը չէ, որ պիտի դողայ թշնամու այդ վրէժխնդիր հարւածներից, որ պիտի լայ, գանգատուի, ազաղակի ու աղբրսի... Հապա երբ «դաշնակցական» անւան տակ դատապարտում, տանջում ու մեռցնում են բանտերի կամ արտոյի մէջ անմեղ, անվնաս քաղաքացիներ, երկչոտ, խեղճ ու կրակ, երբեմն նոյնիսկ պահպանողական անհատներ, որոնց «դաշնակցական» անունով մկրտելն իսկ վերաւորանք է կուսակցութեան համար — այդ է ահա, որ թւում է անօրինակ, հրէշաւոր՝ ոչ միայն յեղափոխականների ու ազատամիտների, այլ և խոհեմ ու չափաւոր հասարակութեան աչքում:

Վերջացաւ Ի՛նչ շահեց ուսական Բիւրօկրատիան Ի՛նչ շահեցին ցարիզմի եռանդուն ու շահախնդիր սպասաւորները այնքան հաւաճ ու խուճապներով, շորսամեայ տանջալի հաւատաքննութեամբ, և այդ հսկայ ու բազմաղմուկ դատաւարութեամբ: Թաղթանակի դափնիներ չեն, այլ պարտութեան նոր ու նոր ամօթանքներ ու նւաստացումներ: Հայ ժողովրդական դատը չխաւարեց. ընդհակառակը՝ նա նոր փայլ ու հմայք առաւ: Լ. Յ. Դաշնակցութիւնը չթուլացաւ. ընդհակառակը. ամբողջ դատաւարութիւնը իր արտակարգ հանդիսաւորութեամբ, իր անսովոր պարագաներով կոչւած էր նոր անունդ բերելու կուսակցութեան հռչակին: Նա անցաւ Ռուսաստանի սահմաններից, հասաւ և եւրոպացոց ականջներին: Եւրոպացիք իմացան, որ թիւրքահայ ազատագրական շարժման կրող հինաւուրց կազմակերպութիւնը

առևտրական կայսրութեան մէջ ևս հանդիսանում է ազատութեան շարժումների պատկանելի մի գործոն: Սօցիալիստներ ու ազատականներ հետաքրքրեցին նրա էությունը, նրա ծրագրով ու պատմութեամբ, և «Դաշնակցութեան» խմբագրութեան ուղղեցին մի շարք դիմումներ Անգլիայից, Իտալիայից, Ֆրանսիայից, նմանապես առանցից և լեհերից, անգամ ռուս սօցիալ-դեմոկրատիայից ամենքն էլ գրել են ուզում «Դաշնակցութեան» մասին, որը լրագրի ու հանդեսի, որը գրքի, որը նոյնիսկ հանրագիտական բառարանի մէջ:

Ռուսական և նոյնիսկ ընդհանուր պատմութեան մէջ չէ եղած այսքան ահաւոր հակապետական մի կազմակերպութիւն — յայտարարում էր ցարական դատախազը իր եզրափակիչ ճառի մէջ...

Եւ անշուշտ, այդ համազում է, որ թեւորում էր կենսարանական կառավարութեանը՝ ձեռնարկելու պահանջներն ու հետադիմներ թերթերի ու հանդեսների մէջ, յօդածներ և ընդարձակ տեսութիւններ նաև երոպական մամուլի մէջ, «Դաշնակցութեան» անունը՝ բոլորի բերաններում և բոլոր բերանները՝ միանգամ ևս անիծելիս ու խարանելիս բռնակալական նզովելի աէժիմը: Այդ անէժքն ու խարանումները առանձին թափ առան հռչակաւոր — այժմից արդէն պատմական — կ ե զ ծ ի բ ն երի մերկացումով փակ դռները չ'արգիլեցին գաղափարների արշաւը դեպի անկախ մամուլի էջերը, ուսկից լսեց հրապարակախօսական խղճի ձայնը, լսեցին ցատու մի ու բողոքի զօրաւոր աղաղակներ Էնգելսիտովեան արատաւոր սխտեմի դէմ:

Եւ ինչպէ՞ս լռէր անկաշառ մամուլը, երբ ցինիօրեն ոտնահարում էին արգարութեան ամենատարրական հրահանգները, երբ շնայած առատարուխ զեղծումներին, անօրինակ — անգամ ռուսաց պատմութեան մէջ աննախընթաց — զեղծումներին՝ որոնք անպայման պահանջում էին նոր բնութիւն, ասեանք, այնուամենայնիւ, արհամարհելով փաստաբանների պահանջը, որոշում էր շտապ շտապ եղրակացնել, դատապարտել, հարուածել... Եւ մի՞թէ սոսկ մի ունայն ձեականութիւն չէր այդ, ահագին, ազմկայող դատապարտութիւնը, այդ ահագին շուքն ու շառաչը, հանդիսաւոր ասեանք, հարիւրաւոր վիանների փոխադրումը, հռչակաւոր փաստաբանների պաշտպանութիւնն ու ցոյցերը... Մի՞թէ արդէն նախօրօք պատրաստած չէր դատաւճիռը մինիստրական դահլիճի մէջ, որի հետ շարունակական յարաբերութեան մէջ էր ասեանի նախագահը...

Եւ անշուշտ, այդ համազում է, որ թեւորում էր կենսարանական կառավարութեանը՝ ձեռնարկելու պահանջներն ու հետադիմներ թերթերի ու հանդեսների մէջ, յօդածներ և ընդարձակ տեսութիւններ նաև երոպական մամուլի մէջ, «Դաշնակցութեան» անունը՝ բոլորի բերաններում և բոլոր բերանները՝ միանգամ ևս անիծելիս ու խարանելիս բռնակալական նզովելի աէժիմը: Այդ անէժքն ու խարանումները առանձին թափ առան հռչակաւոր — այժմից արդէն պատմական — կ ե զ ծ ի բ ն երի մերկացումով փակ դռները չ'արգիլեցին գաղափարների արշաւը դեպի անկախ մամուլի էջերը, ուսկից լսեց հրապարակախօսական խղճի ձայնը, լսեցին ցատու մի ու բողոքի զօրաւոր աղաղակներ Էնգելսիտովեան արատաւոր սխտեմի դէմ:

Ինչ շահեցին: Աշխուշ Մի աւելորդ անգամ պերճախօս լեզուներով նշաւակեց Գալիցիան և Պէդեյեան այն անարգ աէժիմը, որ երկար տարիներ կառավարել էր ռուսահայ ժողովրդին: Մի աւելորդ անգամ ի լուր ամբողջ աշխարհի հռչակեց նաև արդի աէժիմի անյատակ փտախոր, մերկացաւ այն գարշելի միջնորդը, որի մէջ հնարաւոր է Լիժնիների գոյութիւնը, մերկացաւ և հանրային ու յեղափոխական դատաստանին յանձնեց ինքը մեծ կեղծարար թշուառականը, քննիչ Լիժնի, որ չորս տարի շարունակ *carte blanche* ստանալով Պետերբուրգի կամարիլլայից, իր ձեռքն էր առել հայ ժողովրդի ճակատագիրը և անխնայ ու ամենուրեք հարուածում, ահարկում էր, նիւթելով միաժամանակ իր անլուր մեղադրականը:

Մի աւելորդ անգամ, վերջապէս, Ռուսաստանի հետաքրքիր շրջաններում շեփուկեց Հայ Մարտական Վարձակերպութեան պատկանելի անցեալը, նրա վեհ, ազատասեր և ազմասեր պատկերը, նրա անդուլ և անողբ արշաւները ժողովրդի բոլոր գաղան-հարստահարիչների դէմ: Հայ երիտասարդութեան կորովը խորտակել էին ձգտում, բայց նա այսուհետև, չորս տարւայ բանտային սարսփներից ու նահատակութիւններից յետոյ, աւելի ևս պիտի վառուի վրէժխնդրութեամբ ու ասելութեամբ: Նա երբէք չի մոռանայ իր խէչօններին, Չիչինեաններին ու Մեգնիկեաններին, որ բանտային անօրակելի աէժիմի սակ հիւժեհցին, խելագարեցին կամ մեռան. նա երբէք չի մոռանայ և իր Համօներին ու Մանաններին, որ պիտի երթան առանեակներով հիւժեւելու սիրիբեան խորշերի մէջ, արսորի կամ տաժանակիր աշխատանքի արեւակու նկուղներում: Նա չի մոռանայ և միւս հպարտ նահատակին — Վուկուենանին — որ 15 տարւայ սիրիբեան տառապանքից յետոյ, այսօր նորէն 15 տարով նեաւում է նոյն դժնդակ ցերբերների ձեռքով անդառնալի կորստեան զնդանները, միացնելով իր անունը համաշխարհային մեծագոյն յեղափոխական նահատակների ցանկին...

Աշխուշ շահեցին: Աշխուշ Մի աւելորդ անգամ պերճախօս լեզուներով նշաւակեց Գալիցիան և Պէդեյեան այն անարգ աէժիմը, որ երկար տարիներ կառավարել էր ռուսահայ ժողովրդին: Մի աւելորդ անգամ ի լուր ամբողջ աշխարհի հռչակեց նաև արդի աէժիմի անյատակ փտախոր, մերկացաւ այն գարշելի միջնորդը, որի մէջ հնարաւոր է Լիժնիների գոյութիւնը, մերկացաւ և հանրային ու յեղափոխական դատաստանին յանձնեց ինքը մեծ կեղծարար թշուառականը, քննիչ Լիժնի, որ չորս տարի շարունակ *carte blanche* ստանալով Պետերբուրգի կամարիլլայից, իր ձեռքն էր առել հայ ժողովրդի ճակատագիրը և անխնայ ու ամենուրեք հարուածում, ահարկում էր, նիւթելով միաժամանակ իր անլուր մեղադրականը:

Թե ոչ. և եթէ այդ, միշտ է արդեօք նա եղել այդպէս, թէ միայն որոշ շրջանում. և ո՞ր շրջանում: Պարոններ, շնայած մի շարք վկաների հակադասական քննադատին, ես պիտի պնդեմ, որ Գաշնակցութիւնը Ռուսաստանի համար եղել է իր ծագման օրից ի վեր (1890 թ.ից) հակապետական և յեղափոխական և շատ անելի վտանգաւոր, շատ անելի անհանդուրժելի, քան որեւէ այլ կուսակցութիւն: Ես չգիտեմ ոչ միայն մեր պատմութեան, այլ և ընդհանուր համամարդկային պատմութեան մէջ մի կազմակերպութիւն, որը իր մէջ պարունակէր այն աստիճան հակապետական ուժ և տնայտի թափով ու կատաղութեամբ կռիւ մղէր պետութեան դէմ, ինչպէս սա:

Մեզ տեսնում են, որ հին Գաշնակցութիւնը Ռուսաստանի համար հակապետական, յեղափոխական կուսակցութիւն չէր. պարոններ, դա մի մանեօվր է, մի խաղ, որին միայն երեխաները կարող են հաւատարմ լսող տեսակ մի գործունէութիւնը պէտք է դիտել երկու տեսակից, մի ջազգաւոր և ներքին պետական շահերի տեսակետից: Երբ նրանք, գաշնակցականները շինուում են դրացի պետութեան դէմ և դրա համար մեզ մօտ դիմում են անթողատրելի միջոցների, այդտեղ արդէն նրանք դառնում են յեղափոխական մեր դէմ: Մի օրինակ. երևակայեցէք, որ Ըւէյցարիայում հայերը անէին նոյնը, ինչ որ արել են մեզ մօտ՝ առձեռն հայերին փրկելու համար: Այսինքն բոլոր միջոցներով շէնք ձեռք բերելին, կազմակերպելին սեփական ջօրք Ըւէյցարիայի մէջ և ուղարկելին Յաճկաստան. դրա համար նրանք դիմէին բուն հանգամանակութեան, այսինքն կոտորելին հակառակորդներին և, որ գլխաւորն է, անխնայ ոչնչացնելին ուէյցարական իշխունութեան այն ներկայացուցիչներին, որոնք արգելք լինելին իրենց այդ ներքին անկարգութիւններին... Թող կը տա՞ր արդեօք Ըւէյցարիան այդպիսի գործունէութիւն և չէ՞ր համարի այդ յեղափոխական գործունէութիւն: Իսկ այդ խմբերը, որոնք անցնում էին և վերագառնում, դրանք կատարեալ յեղափոխական օճախներ էին: Պարոններ, երբ մահմադականները ուխտի են գնում Մեկկա, վերագարձին մենք նրանց չենք ընդունում, եթէ նրանք ժանտախտի վայրերից են գալիս: Եւ սակայն մեզ ասում են, որ այդ յեղափոխական ժանտախտը մեզ մօտ բերողները վտանգաւոր չեն. ես կասեմ, որ դա շատ անելի վտանգաւոր է, բան իսկական ժանտախտը:

Ես չեմ շոշափում եկեղեցական գոյքերի գրաւման շրջանը: Կայսերական ուկազով այդ գոյքերը վերագարձած են և ուրեմն դրա շուրջն եղած շարժումը ես համարում եմ մեր քննութիւնից դուրս, և դրա համար ոչ ոք չի մեղադրուում: Եւ ես անցնում եմ միւս շրջանին — հայ-թուրքական կոտորածներին: Այստեղ երկար բացատրութիւններ անն նրանց պատճառների

մասին, ես չեմ հետաքրքրուում դրանով: Ասում են — Գալիցիանեան ռեժիմ, պրօվօկացիա, պանիւլամիզմ... Ես չեմ ուզում մտնել այդ ենթադրութիւնների աշխարհը. սակայն չեմ կարող ամենախիստ կերպով չորոգրել «պրօվօկացիայի» մեղադրանքի դէմ: Եւ այդպիսի դէպքում, ես կարող եմ թող տալ, որ եղել է իշխանութեան անգործութիւն, կրաւորականութիւն, բայց պրօվօկացիա՝ երբէք: Ենթադրութիւնները վտանգաւոր են. չէ՞ որ ես նոյն իրաւունքով կարող եմ պնդել, որ պատճառներից մէկն էլ Գաշնակցութեան յեղափոխական գործունէութիւնն էր, որ գրգռում էր մահմադականներին: Եւ շատ նշանակալից է այն հանգամանքը, որ նոյնիսկ Յաճկաստանում, ուր կան շատ քրիստոնեաներ, կոտորածի ենթարկուում են միայն հայերը. չէ՞ որ այդ մի բան նշանակում է...

Ինչ հետաքրքրում է կոտորածների փաստը: Ասում են ինքնապաշտպանութիւնը սուրբ գործ է, ոչ միայն թողատրելի, այլ և պետական մի ծառայութիւն. այդ ես ընդունում եմ ես չեմ մեղադրում հայ ժողովրդին, այլ այն կուսակցութեան, որ ղեկավարելով այդ գործը, դիմում էր յեղափոխական միջոցների: Նա անխնայ կոտորում էր պետական չինօմիկներին, իշխանաւորներին, միայն նրա համար, որ նրանք իրեն դուր չէին գալիս: Նա բուն կերպով փող էր հաւաքում, դիմելով սպանութիւնների: Նա իր ձեռքն էր հաւաքել պետական ֆունկցիաները, դատարան, վարչական իշխանութիւն և այլն և այլն: Ահա թէ ինչու՞մ է յանցաւոր գործունէութիւնը և յեղափոխականութիւնը Գաշնակցութեան՝ այդ շրջանում: Ենթադրական արատը, ուր որ էլ գցես՝ նա կը մնայ յեղափոխական:

Այդ շրջանի սկիզբն է, որ կատարուում է Գաշնակցութեան պաշտօնական մկրտութիւնը սօցիալ-յեղափոխութեան աւազանում: Յեղի է ունենում 1905ի ռայոնական ժողովը, որ մշակում է յայտնի և ախաբիժը: Մեզ ասում են, թէ դա սոսկ նախագիծ էր, պաշտօնական ծրագիր չէր, միայն բարոյական նշանակութիւն ունէր և ոչ իրաւական, որ կարելի էր մնալ գաշնակցական և չ'ընդունել այդ: Սակայն պարոններ, մենք գիտենք, թէ ինչ են նշանակում այդ խօսքերը. մենք գիտենք, որ նոյնիսկ պաշտօնական ծրագրի ու կանոնադրութեան շատ կէտերը, իրաւական լինելով հանդերձ, մնում էին մեռած տառ, իսկ այն, որ ծրագրից էլ, կանոնադրութիւնից էլ դուրս էր, կեանքի մէջ անցնում էր, եթէ միայն ցանկանում էին այդ կուսակցութեան ղեկավարները: Մենք գիտէինք, որ այդտեղ ամեն ինչ կախած էր բարոյական ճշնումից... Այդ մօմէնտից սկսում է կուսակցութեան սօցիալիստ-յեղափոխական գործունէութիւնը. մի շարք կուսակցական թերթեր, ամբողջ մի գրագարան, թուուցիկներ, պրօպագանդիստներ, պրօֆէսիօնալ միութիւններ և այլն և այլն... Եւ

դրանից յետոյ վեր կենալ և ասել, որ դա միայն նախագիծ էր և ուրիշ ոչինչ—Թիւրիմացութիւն է: Դաշնակցութեան պատուութիւնը ջոյց է տալիս, որ նրա պաշտօնական ժողովները միայն գալիս են *post factum* վաւերացնելու այն, ինչ որ կեանքում արդէն վաղուց իրականացրել է:

Սակայն ամենից զարհուրելին, ամենից անըմբռնելին մեզ համար, որի առաջ դողում է իմ ձայնը, ոչ թէ իբրև մեղադրողի, այլ իբրև մարդու,—դա Դաշնակցութեան տեքստի մասնակցական գործունէութիւնն է: Իմ ուժերից վեր է նորէն կրկնել այդ զոհերի շարանների անունները: Ես կը խնայեմ ձեր լսողութիւնը: Սակայն, չեմ կարող մատնանիչ չ'անել այն գաղանաբարոյ վերաբերմունքը, որ ջոյց էր արւում դէպի չինոսները: Ով որ կը համարձակէր դիպչել Դաշնակցութեան, ով խուզարկութիւն կատարէր, ձերբակալէր՝ նա դատապարտւած էր անխուսափելի մահուան և ինչպիսի մահուան: Այնպիսի տանջանքների, որոնց առջև կը սարսափի միջնադարեան ինկվիզիցիան: Կարգացէք այն թռուցիկը, որ կոչւում է «Պրիկազ բուսակիմ չինովնիկամ» (հրաման ուս պաշտօնեաներին) և ձեզ համար ամեն ինչ պարզ կը լինի: Ո՛հ, Ասուած իմ, ի՞նչ սարսափելի կուսակցութիւն և ո՞րպիսի շարանիւթ ուժ ունէր

կուսակաւծ իր մէջ: Լսեցէ՛ք նրա նշանաբանը. «Մահ կամ Ազատութիւն»: Աշխատեցէք խորասուզել նրա մտքի մէջ, ըմբռնել նրա իմաստը և կը հասկանաք, որ այդ կուսակցութիւնը միջին ճանապարհ չունէր, նա ազատութիւնը հասկանում էր միայն մահի միջոցով... Պէ՛տք է սպանել, պէտք է ոչնչացնել, որպէս զի ինքդ ազատ զգաս բեզ... և նա այդ անում էր: Եթէ ես լինէի արձանագործ, Դաշնակցութիւնը կը պատկերացնէի մի արձանով, որի պատւանդանի վրայ կը փորագրէի այդ արեան բաղանիքի մէջ գալարւող բոլոր զոհերին, աջ կողմը կը կանգնեցնէի Համազասպ Օհանջանեանին, ձախ կողմը Խաժանկեանին, իսկ վերևը, գագաթին՝ Ահարոնեանին: Արծաի ձեռով, որ ծծում է անվերջ հոսող արիւնը (այստեղ դատախազը բերում է Ահարոնեանից մի հատուած):

Արանով վերջացաւ ընդհանուր մասը: Ես ձեզ տւի ճառի կմախքը: Դա համեմաւծ էր բազմաթիւ քնարական դարձածներով, յաճախ կրօնական մարզանքներով քրիստոնէական պատգամների ցուցադրութեամբ: Երբեմն էլ — փիլիսոփայական կնճիռների լարերինթ էր նետւում, երբ կամենում էր մահու և կեանքի առեղծւածը լուծել... Այդտեղ արդէն նա իր լիրիզմով ու փիլիսոփայական միամտութեամբ ծիծաղ էր շորժում:

Հ Ո Ւ Ե Տ Ո Ր Ը Գ Ե Ր Ի Ն Ե Ր Ո Ւ Ն

ԳՐԵՆՃՈՒ ԵՐԵՎԱՆԻՆ

Ըմբոստութեամբ կարմիր օր մը՝ երբ ամեն օրէմք պիտի փշրէր, Դուռ, հոնտոր, կրամիդէ պատւամղամի մը վրայ, Ուր քու ոտքիդ հմչեղ հարւածը կը լսէր, Ծովածաւալ մարդերում դէմ պերճ գլուխդ ցնցելով՝ Ու քու ծայրովդ ամմահօրէ՛մ ոսկի, Քու խօսքերուդ ճառագայթը Կամքերում մէջ գծելէմ, Իշխամութեամ և աշխատամքի ամօգնական գերիմներում, Ահաւասիկ իմչ որ ըսիր...

— Ձեզ եղբայրներ չեմ կոչեր ես, ո՛չ ալ ըմկերք պայքարի, Ձեր ամուրը ձեր ցաւերէմ, ես կը կարդամ ձեր վրայ, Ձեր ամուրը ձեր ճակատիմ ես կարդացի... ԳերՈՒԿՆԻՆՆԻՐ, ԳերՈՒՆՆԻՐ, ողջո՛յմ ձեզի այս իրիկում, ողջո՛յմ ձեզի, Բայց՝ ո՛չ աւետիս կուտամ ձեզ ո՛չ արբեցում ո՛չ մահազուժ, Այլ միմիայն ես կուզեմ ձեր դիակները սմուցամել, Նոր կամքերու և կորովի համոզումը ձեզ ցողելով...

— Յառաջացէ՛ք, յառաջացէ՛ք ո՛վ ամօթութեամ ամապատմե՛ր. Յառաջացէ՛ք դուք իմ սրտիս և սաստկութեամը իմ խօսքերուս, Յառաջացէ՛ք դուք սովամահ մշակներ և մերկամղամ՝ Ղուհակներ, Դուք արիւթթաթաւ բամբուրներ և դուք ամհաց հմծողմներ, Դուք ամբողիք որմնադիրներ և դուք ամսո՛ր դարբիմներ, Դուք երկաթներու ըմբիշ և դուք՝ ս՛ն համքերու ուրուսկամք, Դուռ ամապատմեք զործաւոր և ցնցոտիներու՛ իշխամ, Եւ աղքատներ, ամաշխատներ, ամժառանգներ, ժուռեկամներ, Դուք կորաքամակ ցորտե՛ր և սապատող ստրուկներ, Դուք բոլորը ձեր ամնծօրեայ թափուր սեղամը՝ Խաչակնքող յիմարմներ...

Դուք ամբողջներ, հաւատարիմ հպատակներ, դուք՝
 Որ՝ ձեր ետևը տարածող այս պորտաբոյսը ըմպիրութեամբ,
 Յճմանեղանքը ճոխացուցիք, իր ընդերքը պղծ բաժակիմ
 Ձեր ամբարբառ ստորուկի արիւնտը լեցնելով...
 երբ՝ ձեր շրթները պտպակներու հուրերով վար կը թափիմ,
 երբ՝ ձեր բերանը միմիայն ափ մը մոխիր կը ծամէ... Ե

Գերուհիներ, Գերիներ, գաղափարէմ գրկածներ, Գիտութեամբ դէմ ապշահարներ,
 Դուք քուրդը Փարիզներու և Լոնդոններու ճամբաներէմ սովալլուկ անցրողներ,
 Դուք մրտաւածներ, մարտիրոսներ, ամեցումներ, ամճակատներ,
 Դուք ոտքի վրայ հազիւ շարժող կմախքներ,
 Որ ձեր կուսմամբ պողպատներովը, տիրապետները ձեր խնդութեամբ,
 Ձեր ձեռքերը ձեր ըմպիրիմ դէմ կը զինեն... Ե

— Բայց ովսամմա՞ ձեզ, ովսամմա՞ ձեզ, հերոսական աշխատողներ՝
 Եւ համբուրեցէք այս պանուս, համբուրեցէք արտասուքով,
 Դուք ձեր ձեռքերն և քաղուկներն, ձեր շրթներով ստեղծողի,
 Գերուհիներ, Գերիներ, համբուրեցէք, համբուրեցէք դուք զիրար,
 Որովհետև սոսն՝ հմոց, տեսնոց տեսնամ, ամեն արդիւմք,
 Ամեն երդիք, ամեն հանգիստ, ամեն բարիք և ամեն բերք,
 Ձեր աշխուժէմ, ձեր կորովէմ, ձեր քաղուկն մեզի կուգամ...
 Բնակութիւն և պոզոտայ և քաղաքներն շուայտութեամբ,
 Թագադարաշտերն արիւնի, և կառափմատները ձեր վզին,
 Ա կամուրջներն ամեն եզերք զիրար զօրող,
 Բուր զծերն երկաթի, հողամասէ հողամաս, վայրաշարժի և թոխչի,
 Որ՝ երկիրներն չարաշահ մէկգնէկու՝ կը հանգուցեն... Ե
 Բուր շարժումը և շահնը ձեզ գաւաճան ըմպիրութեամբ
 Եւ ստութեամբ սակարամները ոսկեկուտ,
 Եւ հանթուղիկէմ, ուր ձերադիր կաղօթն և ապարամքները զազիր,
 Այս քոյրը ձեր մահատակ քարտէսներն են ձեր... Ե

— Գերուհիներ, Գերիներ, որպէս զի դուք այլ ևս, անթութեամբ ձեր օրերուն,
 Դուք ձեր ոսկորը չի կրծոտէք, ձեր տէրերը օրհնելով,
 Որպէս զի դուք այլ ևս ուժայծօրէմ չի քանդակէք,
 Եւ ոսկի գահը և դուռները և դագաղը, ճոխակեացիմ կամ Արքայիմ,
 Այսուհետև արդարօրէմ և կատարութեամբ մախ և առաջ վայելեցէք
 Իմը որ ձեր կեանքը շուայտըմ, քիրտ մարդկութեամբ կը բաշխէ... Ե
 Ա որչափ որ ըլլաք ստորուկ, ըլլաք գերի, ըլլաք թշառ,
 Թող մարդասէրի իմ մտրակս և մրրիկներս հոնտորի
 Ձեր չուսուցութեամբ վրայ, անգթութեամբ շառաչեն...
 Գերուհիներ, գերիներ, ահաւասիկ վերջիմ խօսք ձեր բոլորիմ,
 Մի՞նչ որ դուք և բուժեցրով և բարկութեամբ,
 Իրատմքի և կեանքի ձեր տաճարը չի հիսմէք,
 Ոչ ձեզ հղբայր պիտի կոչեմ, ոչ ըմպիրներ, ոչ քոյրեր... Ե

Ս Ի Ա Մ Ա Ն Թ Օ

Կ Ե Ն Մ Ա Գ Ի Ր Ա Կ Ա Ն

Զ Ո Ւ Լ Ո Ւ Մ Ա Ք

(ԳԱՍԵՑԻ ՅՈՂՎԱՆՆԷՍ)

Ասոյ մը եր հայ հայդուկներու շրեղ շարքերուն մէջ
 Պարսկաստան, Խայի ձոտ, Բէդգամար գիւղը, պատմական
 Աւարայրի դաշտին մէջ Ազատականներու, Արաւմաբա-
 կաններու հետ մղած կռիւ միջոցին 1911 թ. փետրարին,
 ինկու մեր կործանելիքը հերոսական մահով:
 Պարսկաստանի տղատական կռիւը, որուն մեծ ուժերով
 մասնակցեցաւ Հ. Յ. Գալստիանցիութիւնը, մեզմէ խելչ շատ
 թանկագին զոհերու Ասոյց մէկն ալ մեր Զուլումաթը եղաւ:
 Շատ կանուխեն ոտք դրած ազատութեան զինուորի փշտ
 ճանապարհին վրայ, նա զինակիցներէն էր անմահ Աբրար-
 Արշիւրի և զո՛՛հ գնաց համաշխարհային ազատամարտի որ-
 բազան կռիւն... Ե

Երկրի երեսին որբան ճգճիմ, ճահճային կեանքով, պղտիկ

հաշիւներով ապրող մարդիկ կան, և որբան հերոսներ,
 որքան կ'ապրին ճահճներէն դուրս, ապականած միջո-
 յութիւններէն վեր... Ապրախա մարդկութիւն միշտ զոհեր
 կուզէ մարքելու, բարձրանալու համար... Ե

Ահա զո՛՛հ մը ալ բեզ, բու անկուշտ որկորից... Թող բու
 արիւնուշտ հակամեները յազենան, թող բու կեզտերը,
 արտաները սրբին մեր զոհերու մարտը արիւնով: Ե

Յովհաննէսը Բաղէշի նահանգի Տատիկ գաւառի Պա-
 դիզի համեստ գաւառն էր Անոր մայրը զիբը ծնաւ պան-
 դրիսութեան մէջ, Ա. Պալիս, բայց մասնակ Կովհաննէսը
 հայրենի բնագաւառը բերելով հոն մեծացաւ, ծնելով ազատ
 լեւոններու, ձորերու հպարտութիւն և արիւթիւն ներշնչող
 օգը... Ե

Բնականէն բնգունակ, նա շուտով աչքի բնկաւ գաւառին
 մէջ իր ժրութեամբ և բազմութեամբ Ասիս, երկիւղ բուած
 բանը գոյութիւն շունք անոր համար Իսկ ժամանակները,
 որու մէջ ան պարծած էր արդէն հասուն երիտասարդ, լե-
 ցան էին անունկիւններով, փոփոքիկներով Հայկական յե-
 դափստութիւնն էր որ կը ծնէր, կը կազմակերպէր, և
 կըսկեր անհասարկ կռիւ բնագրեմ տիրող բռնակալութեան
 զոհը կ'ըմբոստանար իր դահճին դէմ: Եւ ի՛նչ աւելի գրա-

Այնուհետև Զուլումաթ ընկերներով մնաց Ալիաթ, զէնքի փոխադրութեան գործով մինչև կախիք Սաունէն իջաւ Մշոյ դաշտը։ Էս միացաւ Անդրանիկի խմբին և մասնակցեցաւ բոլոր կախիներուն, — Բերդակ, Արաւու, Էամիրամ, Աղթամար։ Ամենակատարի կաւի մէջ, Յովհաննէս ամենահամարձակներէն էր։ Էամիրամի կուլին նա եկեղեցու տանիքն էր, և կաւի ամենակատարի ժամանակ սպիտակ թաշկնակը ձեռքին կը խաղար ու պար կը պարէր, կատաղեցնելով ու հիացնելով իր քաջութեամբ թշնամիները...

Արևներէն վերջ նա խմբի հետ անցաւ Պարսիստան ու հին մնաց Թարսիի ինքնապաշտպանութեան գործին մէջ, երբ Ասիական հայ-թրքական ընդհարումներու պատճառով Թաւրիզի հայութեան ևս փոստը կը սպառնար։ Անկէ անցաւ սահմանադիւի և ինչպէս վերը յիշեցինք, եղաւ սահմանազիւային գործունէութեան ստատորդ ընկերներէն մէկը, մինչև պարսկական այս վերջին յեղափոխութիւնը, որուն մասնակցեցաւ Գրանակցութիւնը։

Նա կոչուած չէր անկողնի մէջ սովորական մարդու, բնական մահով մեռնելու ծնունդով հերոս, հերոսական մահ գրկեց խոյի մաս։

Աւարայրի դաշտը, շատ հայ հերոսներ ինկած են. Զուլումաթն ալ միացաւ անոնց։ Վարդան Մամիկոնեան բարձր բլուրի մը վրայէն, իր աւանդական մատուռէն կը հսկէ անոնց բոլորի վրայ...

Հանգիստ ունենալու, թանկագին ընկեր, բու յիշատակ մենք շնոր մտնար...

ՄԱՐՁԳԵՏ

Հ Ա Ս Ա Ր Ա Կ Ա Գ Ի Տ Ա Կ Ա Ն

ՍՅՅՈՒՆԱԿԱՆ ՏԱՐԻՔ ՌՈՒՍԱՆԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՉ

ՋԱՌԱՍՆԱԿԱՆ ԹԻԱԿԱՆՆԵՐ

Խ ա չ ա տ ու ը Ր Ա թ ո վ ե ա ն . — Ա զ գ ե յ ու թ իւ Ն ն ե Ր . — Ռուսահայ գրականութեան հայրը իրաւամբ համարուում է Խաչատուր Աբովեան։ Ցասնիններորդ դարի առաջին կիսուս, Աբովեանին գրեթէ ժամանակակից, երևացին նաև երկու ուրիշ մատենագիր—Յարութիւն Ալամդարեան և Մեսրոպ Թաղիադեան։ Բայց սրանք— իրենց բոլոր առաւելութիւններով հանդերձ— չկարողացան խորապէս ըմբռնել ժամանակը և արձագանքել դարը։ Երկուսն էլ չկարողացան թօթափել գրաբարեան կապանքը, չկարողացան ապրել նոր հայութեան զգացումները։ Աշխարհիկ խօսքը նրանց գրականութեան հիմունքը չդարձաւ։ Եւ իբրև այդպիսին՝ այդ գրականութիւնը մնաց հին, մնաց գրաբար։

Ռուսահայ և թիւրքահայ գրականութիւնները միմեանցից բաժանուում, զձուլուում են նախ և առաջ լեզուով։ Եթէ մէկը թիւրքաց-Հայաստանում հին հայերէնով մի գիրք գրէր — այդ գիրքը կը պատկանէր ոչ թէ թիւրքահայ գրականութեան, այլ գրաբար մատենագրութեան։ Նոյնը և արևելեան Հայաստանի վերաբերմամբ։ Թիւրքահայ և ռուսահայ անւանումները երևան են գալիս այն ժամանակ, երբ

գրաբարը— իբրև ընդհանուր գրականութիւն— տեղի է տալիս Ազայ արևմտեան հայոց գրաբար գրականութիւն, ինչպէս չկայ նաև արևելեան հայոց հին մատենագրութիւն։ Քաղաքակրթական այդ ստեղծագործութիւնը երկու հատուածների համար էլ, երկու հայութեան համար էլ՝ նոյնն է, մի է, ընդհանուր է։ Թիւրքահայ և ռուսահայ գրականութիւնները ծագում են այն ժամանակ, երբ արևմտեան հայերը առանձին, արևելեան հայերը առանձին՝ հրաժեշտ են տալիս հին լեզուին և սկսում են գրել իւրաքանչիւրը իր յատուկ բարբառով, իւրաքանչիւրը իր նոր հայերէնով։

Ցասնիններորդ դարից առաջ, թէ արևմտեան և թէ արևելեան հայոց մէջ, սկսած է եղել բարբառային գրականութիւնը— իբրև հակադիր՝ գրաբար մատենագրութեան և իբրև սաղմ՝ աշխարհիկ գրականութեան— բայց երկու տեղն էլ տասնիններորդ դարում միայն հիմք ստացաւ այդ նոր, աշխարհիկ մատենագրութիւնը։

Որքան էլ կամենանք Խաչատուր Աբովեանի նախորդների մէջ նոր ուղղութեան կարապետներ տեսնել, որքան էլ կամենանք նրա ժամանակակիցների մէջ նրան գործակիցներ և աշխատակիցներ փնտրել — այնուամենայնիւ քառասնական թւականներին Աբովեան երևում է միայնակ, իբրև հուժկու վերանորոգիչ, իբրև մտքի յեղափոխիչ։ Նրա գործը մի դարագլուխ է, մի արգասաւոր ու հրահանգիչ դարագլուխ։ Գրաբարեան աւանդութիւնները, հին աշխարհահայեացքը, նախնական ու դարաւոր ըմբռնումները այստեղ կանգ են առնում։ Եւ սկսում է 19-րդ դարի մեր վերածնունդը, այնքան հաստատ շեշտով և այնպիսի անկեղծ համոզմունքով։

Այս վերածնունդը ուրիշ պայմանների մէջ է վաթսուական թւականներին։ Այդտեղ յառաջադիմական, ազատական երիտասարդութիւն կայ։ Այդտեղ վերանորոգիչները յատուկ օրգան ունին և նոր ուղղութեան կողմնակիցները բաւական շատ են։ Այդտեղ գործում է հրապարակագիրների, վիպասանների, բանաստեղծների մի բեղմնաւոր համաստեղութիւն։ Քառասնական թւականները, սակայն այդպէս չեն։ Թւում է թէ կեանքը տակաւին չէ կատարելագործւած, չէ հասունացած՝ արտադրելու համար իր գաղափարական, իդէական ծնունդը։ Թւում է թէ՛ առարկայական-նիւթական պարագաները տակաւին ի վիճակի չեն նոր քաղաքակրթութեան մտաւոր կերպարանքը կաղապարելու։ Եւ թւում է թէ Աբովեան ժամանակից, վայրկեանից առաջ է կեանքի կոչել և պատմական ասպարէզ իջել։ Յամենայն դէպս՝ նա այն վաղաժամ ծնունդներից է, որոնք կարողանում են հասունանալ, զարգանալ, կազմակերպւել տակաւին անկատար հասարակական միջավայրում, տակաւին թերատ ընկերական մթնոլորտում։ Նա այն վաղահաս անհասականութիւններից է, որոնք քիչ բարոյական սննդից, փոքրիկ մղումից իսկ կարողանում են պատուել հասարական արգանդը և ելնել հրապարակ։

Քառասնական թուականների գրական, փիլիսոփայական, մտաւոր ամառութեան մէջ Արովեանի դէմքը ընկերներ չունի, գործակիցներ չունի: Այստեղ է նրա ճակատագրի բովանդակ դառնութիւնը և նրա հոգեբանութեան խորունկ ողբերգութիւնը: Այստեղ է նաև նրա մեծութիւնը...

Միայնակ և վաղահաս ստեղծագործութիւն լինելով հանդերձ՝ Արովեան այնուամենայնիւ իր դարի արաւայտիչը հանդիսացաւ և այդ դարից իր բարոյական սնունդն առաւ: Չենք կարող մանրամասն ու հանգամանօրէն ներկայացնել այն պայմանները, որոնց մէջ զարգացաւ այդ վերանորոգիչ ոգին: Մեր աշխատանքի նպատակը Արովեանի կենսագրութիւնը չէ: Բայց մեր հասարակական մտքի ծագումն ու հիմքերը պատկերացնելու համար՝ անհրաժեշտ ենք համարում մի բանի իրողութիւններ ընդգծել:

Ռուսահայոց մէջ 19-րդ դարի առաջին քառորդում երեք կրթական հաստատութիւն երևացին — Ատրախանի Աղաբաբեան դպրոցը 1810 թուականին, Մօսկվայի Լազարեան ճեմարանը 1816-ին և Թիֆլիսի Ներսիսեան վարժարանը 1823-ին: Այս երեք դպրոցներն էլ մեր կեանքի մէջ բաւական յայտնի դեր կատարեցին: Առանձնապէս նշանաւոր եղաւ երկրորդը և մանաւանդ վերջինը՝ Ներսիսեան վարժարանը: Մեր մտաւոր վերածնունդը, մեր գրական զարթոնումը, մեր գաղափարական շարժումը 19-րդ դարի առաջին կիսում այսպէս թէ այնպէս, ուղղակի թէ անուղղակի, առաւել կամ նազ կապած են այդ հաստատութիւնների հետ: Մտաւորականութեան սաղմը այդ դպրոցներից էր առաջանում և նոր գրականութեան հիմքերը այդտեղ էին նախապարասուում: Ժամանակի փոփոխութեան հետ միասին՝ առաջ եկան նոր մանկավարժութիւն, դաստիարակութեան նոր սկզբունքներ, որոնք փոխադարձաբար ազդեցին ժամանակի վրայ և առաջ բերին նոր իրականութիւն: Յարութիւն Ալամդարեան, ռուսահայ այդ առաջին մանկավարժն ու բանաստեղծը, Ատրախանի Աղաբաբեան վարժարանից անցաւ Մօսկվայի Լազարեան ճեմարանը, այստեղից էլ Թիֆլիսի Ներսիսեան նորարաց դպրոցը, ուր սնօրէնի պաշտօն վարեց մինչև 1830 թուականը: Նրա տեսչութեան ժամանակ Ներսիսեան վարժարանը խոշոր քայլերով առաջադիմեց և դարձաւ կովկասեան հայերի միակ կենտրոնը, լուսաւորութեան միակ աղբիւրը: Արովեան շատ բան դուրս բերաւ այդ դպրոցից: Այդտեղ նա առաջին անգամ տեսաւ նոր մանկավարժութեան հետքերը: Տեսաւ Ալամդարեանի ուսուցման ձևերը, որոնք կենտրոնացած էին իրի վրայ և որոնք այլ ևս չէին դառնում բառերի, անշունչ, անմարմին խօսքերի շուրջը: Այդտեղ տեսաւ նա Ալամդարեանի բարոյական դաստիարակութեան առաջին

փորձերը, երբ աշակերտներն այլ ևս ծեծի ու բիրտ վերաբերմունքի զոհեր չէին, այլ բարեացակամ կրթութեան, ընկերական յարաբերութեան և հայրական խնամքի առարկաներ: Այդ միջավայրը, անշուշտ, Արովեանի զարգացման գործում կարևոր դեր է խաղացել: Ներսիսեան դպրոցում տեսաւ նաև, առաջին անգամ, աշխարհաբար լեզուի դասուանդումը: Անդամի խօսքը, որ մինչև այդ արհամարհուած ու հալածուած էր կրթական հաստատութիւնների միջից՝ Արովեան լսեց, սովորեց, կարգաց Աշտարակեցու հիմնած դպրոցում: Եւ այս պարագան մեծապէս կաղապարեց հայ անդրանիկ վիպագրի բարոյական, մտաւոր կերպարանը: Յետագայ մարտնչողի հոգեբանութիւնը, ժողովրդական լեզուի սէրը այս սկզբնական միջնորդի մէջ է սաղմնաւորում...

Այս տեսակետից է, ահա, նշանակելի Ներսիսեան վարժարանի դերը Արովեանի զարգացման խնդրում և առհասարակ մեր վերածնութեան մէջ...

Բայց Ներսիսեան դպրոցի այն ժամանակայ կրթութիւնը մանաւանդ բաւարար չէր մի այնպիսի խորունկ ու արմատական վերանորոգչի համար, որպիսին հարկաւոր էր մեզ և որպիսին եղաւ Քանաքեռի մեծանուն զաւակը: Այդ խոշոր դերի համար անհրաժեշտ էր եւրոպական բազմակողմանի ու լայն զարգացում: Մեր վերածննդը, մեր իրականութեան յեղաշրջողը պէտք է տեղեակ լինէր նրան, ինչ կատարել և կատարում էր յառաջագեմ ազգերի քաղաքակրթութեան մէջ: Եւրոպայից կովկաս անցած հրատարակութիւնները շատ անհամարձակ և ըստ ամենայնի անկշիռ էին մի այնպիսի մեծ վերանորոգութեան համար: Վենետիկը, որ երկար ժամանակ մտաւոր սնունդ էր մատակարարում թէ արևմտեան և թէ արևելեան հայերին՝ չէր կարող այդ կարևոր դերն ստանձնել, չէր կարող հին, աւանդական կեանքը լքել և վերստեղծել մի նոր աշխարհ: Մի վանական Միաբանութիւն կղզիացած իր կրօնական ու բանասիրական մասհոգութիւնների մէջ՝ չէր կարող զգալ մեր միջավայրի բովանդակ պահանջը:

Հին Հայաստանում Ոսկեդար ստեղծելու համար՝ մեր նախնիք հասկացան, որ պէտք էր այն ժամանակայ քաղաքակրթութեան կենտրոններում սովորել, գիտութեան տաճարներում նախապարասուելը: Առանց արևմտեան երկար ու վտանգաւոր շրջանների՝ չէր լինի մեր հինաւուրց քաղաքակրթութիւնը, մեր հրաշալի հինգերորդ դարը:

Տարաբախտաբար, այնքան երկար ժամանակ յետոյ, 19-րդ դարում, մեր կեանքը այնպէս լեցուն ու կորովի չէր, որ կարողանար մի միայն իր ուժերի համադրութեամբ նոր քաղաքակրթութիւն իրականացնել: Նրա մէջ անշուշտ պակաս չէին կարողական, ծածկեալ ուժերը, բայց այս ուժերի դրսևորման ու գործունէութեան համար՝ հարկաւոր էր քաղաքակրթ ազգերի և ուսեալ երկիրների գործակցութիւնը:

Միջազգային յարաբերութիւնների մէջ ընաւ նւաս-
տացուցիչ հանգամանք չեն ժողովուրդների փոխադարձ
ընդօրինակումն ու փոխառումները: Մէկը աւելի նպաս-
տուոր պայմանների մէջ ապրելով՝ Գարող է աւելի շուտ
զարգանալ, կարող է աւելի շատ ճշմարտութիւններ
գտնել: Միւսը, կամ նոր մանելով պատմական ասպարէզ
և կամ դժբախտ միջավայրի զոհ գտնւալով՝ ուշանում
է, սատր է մնում մարմն քաղաքակրթութեան:

Յունաստանն ու Հռոմը՝ արևելեան ազգերից շատ
բան առան և յետագայում կերտեցին իրենց հռչակա-
ւոր քաղաքակրթութիւնը: Յրանսիան, ներշնչում ստա-
ցաւ հին Յունաստանից ու Հռոմից, նաև միջնադարեան
խոյանեան վերածնութիւնից և ապա ստեղծեց իր չքնազ
քաղաքակրթութիւնը: Գերմանիան դասեր առաւ վօշ-
տերի հայրենիքից ու յետոյ դարձեց իր կուռ քաղա-
քակրթութիւնը: Ռուսաստանը ոչակերտեց Յրանսիային
և Գերմանիային՝ որպէս զի կարողանայ իր սեփական
քաղաքակրթութիւնը զուգահեռել: Եւ այսպէս շարունակ
Հայերը, փոքրիկ, հաշտեան ժողովուրդ լինելով,
մշակմանական ստրաստիներէ մէջ ապրելով, չէին կարող
մասնակցել մեծ ազգերի երջանիկ նւածումներին: Իրենց
վերաւոր պատմութիւնը բուժելու և իրենց մշուշապատ
ոգին լուսաւորելու համար՝ նրանք պէտք ունէին այդ
ազգերի քաղաքակրթական յաղթանակներին:

Խաչատուր Աբովեան այս իրողութեան խորունկ գի-
տակցութեամբ և իր հայրենիքը վերանորոգելու բուն
ցանկութեամբ, Եւրոպայի ուղին բռնեց: Ու այդ օրերից,
Գորպատի համաշարսանը 19-րդ դարի հայկական վե-
րածնունդի համար նոյն դերը կատարեց, ինչ որ Աթէնքը
հինգերորդ դարում: Սկսեց կենդանի յարաբերութիւն,
գաղափարական, բարոյական շփում՝ քաղաքակրթ ազ-
գերի հետ...

Այն ժամանակայ Եւրոպան՝ ծանր և տաժանելի
պայքարներից յետոյ՝ ձեռք էր բերել մի բանի էական
նւածումներ մտքի, հասարակական կեանքի ասպարի-
զում: Տեղի էր ունեցել Յրանսիական Մեծ Յեղափո-
խութիւնը, ժողովուրդների գեղեցիկ զարթնումը: Ու
թէ և պառաւ Եւրոպան՝ երեք կայսրների ստեղծած
դսրբազան դաշնակցութեամբ՝ ճգնում էր խեղդել նոր
քաղաքակրթութեան ոգին՝ այնուամենայնիւ այդ վեր-
ջինը երևում էր ամենուրեք, արևմտեան բոլոր երկիր-
ներում, առաւել կամ նւազ ուժգին: Այդ այն ժամա-
նակն էր, երբ կղերականութիւնն ու ազնւականութիւնը
հեռանում էին իրենց գարաւոր, չարաշուք տիրապե-
տութիւնից. այն ժամանակն էր, երբ բռնակալութիւն-
ները կործանուում էին, երբ միապետութեան սիւները
տապալում էին, երբ ազգերն ու ժողովուրդները ան-
կախ ու ազատ էին յայտարարում, երբ կրօնը իրրև
մի հնադարեան բացասական ուժ՝ կորցնում էր իր
գոյութեան իրաւունքը, երբ միտքը ամրապնդուում էր

քննադատութեամբ և ազատութիւնը ձեռք էր բերում
կաւով ու յեղափոխութեամբ...

Աբովեան վեց տարի ապրեց այդ միջավայրում, դաս-
տիարակեց այդ գաղափարներով, սովորեց, ուսումնա-
սիրեց ազգերի պատմութիւնը, կարգաց Ռուսոս, Շիլ-
լեր, Կէօթէ, պէտրեց նրանց ազատասիրական շուն-
չով: Տեսաւ, որ ազգերի կեանքում հին ու նոր
կարգեր ու սովորութիւններ կան, հին ու նոր լեզու-
կայ, տեսաւ և հասկացաւ հնի անպէտքութիւնը և նորի
իրաւունքը:

Եւրոպական միժնոլորտում շարժեցին նրա սեփական
ուժերը, դրսևորեցին նրա գաղափարները, մտքերը,
զարնւեցին քաղաքակրթ աշխարհի ուժերին ու մարե-
րին, և այդ հանդիպումից առաջացաւ մի ներդաշնակ,
մի հուսասարակչած աշխարհահայեացք, բարոյական-
կենսական մի հարթ ու համաշար փիլիսոփայութիւն:

Աբովեանի անձնաւորութեան մէջ հին, ալևոր, բայց
և դիմացկուն Հայաստանն էր շփում արևմտեան քա-
ղաքակրթութեան հետ: Եւ այս շփումը, այս ընդհա-
րումը այնքան նշանակալից է ու այնքան խորհրդաւոր:

Աբովեան ընդունեց, իւրացրեց եւրոպականը, խորա-
պէս հայ մնալով: Կա կարողացաւ հայկական ծառի
վրայ սեփական բունի վրայ պատաստել արևմտեան
քաղաքակրթութիւնը այնպէս, որ այդ պատաստից
առաջացաւ մի կենսունակ, առողջ, համերաշխ ու բեղմ-
նաւոր գոյութիւն:

Բունը փարթամացաւ ու ճոխացաւ՝ առանց աղար-
տելու իր սկզբնական, իր հարազատ բնոյթը: Աբովեան
դարձաւ եւրոպացի, բայց և միաժամանակ մնաց կատա-
րեալ հայ, անաղաւաղ ու անկորուստ: Հրաշալի է այս
երկու տարրի, այս երկու ուժերի համադրութիւնը: Կա
ապացոյց էր, որ հայ ժողովուրդը իր դարաւոր աղէտ-
ներից ու անկումներից, իր խորունկ վէրքերից յետոյ՝
կարող էր կարճ ժամանակում նորանալ ու վերածնելի:

Աբովեանի անհատական կեանքը, նրա անհատական
պրօգէսները չափազանց խորհրդանշանակուն են: Կրանք
հայ ժողովրդի կեանքն ու պրօգէսներն են...

Եւրոպան ընդհանրապէս իր բովանդակ քաղաքա-
կրթութեամբ և Գորպատը մասնաւորապէս աչքի ընկ-
նող դեր կատարեցին Աբովեանի կազմակերպման և հայ-
կական վերածնութեան գործում:

Արթական-մտաւոր գործօններից բացի՝ 19-րդ դարի
պատմական անցուդարձերը ևս — և մասնաւոր այդ
անցուդարձերը — մեծ ու վճռական ներգործութիւն
ունեցան մեր բովանդակ կեանքում: Հայաստանի մի
խոշոր բաժինը պարսկական իշխանութիւնից դուրս
եկաւ և անցաւ Ռուսաստանին: Այս ծանրակշիռ ակաւ
իր հեռաւոր արձագանքն ունեցաւ մեր ժողովրդի ճա-
կատագրի վրայ և հղորակեւ սահմանաւորեց նրա յե-
տագայ զարգացումը:

Հայը, որ դարերից ի վեր, արիւնահեղ ու սարսափելի դարերից ի վեր, մինչև անգամ իր բաղաբական հինաւուրց անկախութեան ժամանակ՝ իրապէս գտնուում էր մահմեդական ժողովուրդների տիրապետութեան տակ— 19-րդ դարում ազաւեց այդ ընդհանրութեան տակ— քրիստոնեայ պետութեան: Աստուծոյ նրա վաղեմի փափագը, իրականացաւ նրա այնքան փայտալից իղձը:

Կեր ժողովրդի լուսագոյն գործիչները, մեր հայրենասէր բաղաբագէտները սկսած Եսայիէ Օրիից մինչև Ներսէս Աշտարակեցի՝ դրա համար էին աշխատել, այդ էին երազել այնպիսի անկեղծ ոգևորութեամբ:

Ուսուստանի՝ տիրապետութիւնը Արուսեանքը են եկել ու անցել՝ այդ միակ նշանաբանը մտքներում, այդ միակ նպատակը հոգիներում...

Ի՞նչ տւեց հայերին, ի՞նչ տւեց հայ ժողովրդի մեծամասնութեանը այդ տիրապետութիւնը: Ի՞նչ փոփոխութիւն առաջ բերեց մեր հայրենիքում: Ի՞նչ բարենորոգում ժողովրդի տնտեսական կացութեան մէջ. ի՞նչ պիտի մեղմացում՝ դասակարգային յարաբերութիւնների մէջ:

Ահաւասիկ խնդիրներ, որոնք այնքան կարևոր են Ռուսաստանի տիրապետութեան ճշգրիտ հետեւանքները չափելու, իսկական պատկերը տեսնելու համար: Եւ սակայն մինչև օրս՝ ընդհանուր մտքերից բացի՝ մեր պատմական գրականութիւնը չի աղողել մանրամասն ու հանգամանորէն պատասխանելու այդ հարցերին:

Ի՞նչ էր առաջ և ի՞նչ էր յետոյ: Ի՞նչ սօցիալական, տնտեսական վիճակի մէջ էր գտնուում Հայաստանը պարսկական տիրապետութեան ժամանակ և ի՞նչ այնուհետև: Ի՞նչ էր վերջապէս ընկած ուժերը, հին հասարակարգը իր բոլոր արտայայտութիւններով, իր բոլոր ձևերով, և ի՞նչ նորը, տիրապետողը:

Այս երկու շրջանների հիմնաւոր ու բազմակողմանի ուսումնասիրութիւնից յետոյ միայն հնարաւոր կը լինէր հասկանալ պարսկական ու ռուսական տիրապետութիւնների տարբերութիւնը, նրանց բնորոշ ու էական կողմերը: Ըստ էլ գիւրին չէ այդ աշխատանքը— երկու շրջանների պարզ ու վաւերական նկարագրութիւնը, նրանց ճիշտ ու արդար մեկնաբանութիւնը: Պատմական և ընկերաբանական նիւթերը բաւական առատ չեն այդ խնդրի վերաբերեալ: Այնուամենայնիւ, փորձենք, շատ համառօտ կերպով, պատկերացնել և լուսաբանել պարսկական և ռուսական ուժերի ետեւում այնքան, որքան ներում են մեր համեստ ուժերը և մեր գրքուածքի սահմանները: Կեր հասարակական մտքի և մեր հեղինակների կազմաւորման համար չափազանց արժէքաւոր է այդ հարցը...

Հայերի վիճակը Պարսկաստանում առհասարակ նախանձելի չէ եղել: Նրանք միշտ կրել են իրենց ճակատագրի վրայ մի անբաղաբակ իրութիւն, անիրաւ-

ւական պետութեան ճնշումը և կիսավայրենի ու բարբարոս դրացիներ ի հարուածները: Եւ մեր կարծիքով, պարսկահայոց ամբողջ թշուառութիւնը այս երկու գործօններով է պայմանաւորւած եղել առաւելապէս: Գրանց վրայ յաճախ աւելացել են արիւնարբու միապետների ու սարդարների անհատական, բացառիկ տրամադրութիւնները և մահմեդական կրօնքի հայափոխ կիրառումները: Եւ ամեն անգամ, երբ այս վերջին ազդեցութիւնները գործել են՝ մեր ժողովրդի վիճակը ուղղակի դժոխային ու յուսահատական է դարձել:

ԲաժՖին, որ ծնւել ու երկար տարիներ ապրել է Պարսկաստանում, և որ «Աւրբի»-ի մէջ շատ յաջող նկարագրել է պարսկահայոց կացութիւնը՝ այսպէս է խօսում իսլամական գործօնի մասին. «Ըստիւթը՝ խարդախ մ ու լ լ ա ն եր ի խ որ ա մ ա ն կ ու թ ե ա մ բ փ ո խ ե լ ո վ ի Ր ար ա բ ա կ ա ն պ ար զ և բ ն ա կ ա ն կ եր պ ա Ր ա ն ք ը՝ դարձել է իսլամի ուլեմաների շահորտութեան միակ ուղեկցի»: ԲաժՖին, անշուշտ, չափից աւելի էր գեղեցկացնում նախնական Շարիաթը *): Բայց այս որոշ ու յստակ նախադասութեան մէջ հնչում է արձագանքը այն պատմական ճշմարտութեան, որ մեր օրերում անգամ բաւականաչափ լուսաբանւած ու բացատրւած չէ և որի համաձայն կրօնական ատելութիւնը արդիւնք է մեծ մասամբ տիրող դասերի գիտակցական ու սիստեմատիկ գործունէութեան:

Արեւմտեան, որ ընդհանրապէս մեծ կարևորութիւն էր տալիս իսլամական գործօնին— ապրելով արիւնահեղ ու փոթորկալից ժամանակաշրջանի մէջ, տեսնելով մահմեդական տիրապետութեան դժոխային հետեւանքները... «Վէրք»-ի անմահ հեղինակը ևս, այնուամենայնիւ, շատ բան էր կապում ցեղի և տիրապետող անձերի հետ: Այս տեսակետից հետաքրքրական է նրա հետեւեալ ականգումը և իր պարզութեամբ իսկ շատ հրահանգիչ յերեւանու բնիկ թիւրքերը, որ հայի հետ մէկտեղ մեծացել, ախպոր պէս էին վարուում՝ Սարգարին, Հասանխանին անիծում, թքում էին, զղլրաշի վրայ առաջները կրճատացնում ու ասում էին. «Տէր Ասուած, երբ կը լինի, որ քո ողորմութեան գուռը բացւի ու մենք էս անիծած զղլրաշի ձեռից մի օր ազատւինք»: Չունքի սրանք եր լ ու լ ի ն ե լ ո վ չ է ի ն ու զ ու մ նրանց ծառային ու շատ անգամ հայերի հետ միացել, բշել էին նրանց **): Ուրեմն ըստ Արեւմտեանի, հայերի և «Երեւանի բնիկ թիւրքերի»՝ մէջ չկար որեւէ դաւանական թշնամութիւն,

*) Տես սոյն համարի մէջ Արեւմտեանի հակամարտութիւն գլուխը: Ծ. 10.
**) Արեւմտեանի այս հատուածը լեզուի կողմից թեթեւ փոփոխութեան ենթարկեցիւր:

գոյութիւն չունէր կրօնական տեսութիւնս Ընդհակառակը — Արտիանի խոստովանութեամբ — նրանք շատ յաճախ միացել են իրար հետ՝ մասնագական տիրապետողների և կառավարիչների դէմ... Թիւրք ազգաբնակչութիւնը ևս գտնել է շարաշուք պայմանների մէջը, ուս էլ ամբողջ հոգով ցանկացել է, որ «Աստուծոյ որոմութեան դուռը բացւի» և ինքն «սաղարիս զղլըրաշի ձեռքից»։ Այս պարագան շատ բան է ապացուցանում և, յամենայն դէպս, ցոյց է տալիս, որ հասարակական յարաբերութիւնների մէջ կրօնական տեսակետը ամենակարող և վճռական չէ եղել...

Պարսկահայոց անտանելի կացութիւնը նախ և առաջ հետևանք էր երկրի ընդհանուր յետամնացութեան, պետական, քաղաքական, իրաւական, հասարակական կեանքի անբաւարար զարգացման։ Այդ երկրում կենտրոնական պետութիւնը այնքան զօրեղ և այնքան կազմակերպւած չէր, որ կարողանար բոլոր նահանգները, գաւառները իր իշխանութեան տակ պահել։ Մի քառասական ու ցրիւ վիճակի էր մատնւած պետական ամբողջ օրգանիզմը։ Մանր իշխանութիւններ, միմեանցից անկախ, յաճախ միմեանց թշնամի ու դաւադիր խրաքանչիւր նահանգապետ իր շրջանի իրական տէրն էր, իսկական միապետը նրկրի ընդհանուր միապետը ունենով միայն բովանդակ Պարսկաստանի օրէնսդիրն ու վարիչն էր համարոււմ։ Երօք, նրա իշխանութիւնը սահմանափակոււմ էր մայրաքաղաքով և մի քանի մօտակայ մեծ քաղաքներով։ Մնացեալ վայրերում փոխարքանների, սարդարների կամքն էր թագաւորում։ Օրէնքի փոխարէն իշխում էր «պօրինութիւնը։ Արդարութեան փոխարէն կամայականութիւնն ու քամահայրը։ Հարկային սխտեմը բնաւ կանոնաւորւած չէր։ Սարդարները տարեկան որոշ հարկ խոստանալով կենտրոնական պետութեան՝ իրենք ժողովրդից հաւաքում էին, որքան կարելի է շատ։ Ոչ մի բանի առջև կանգ չէին առնում՝ գրաւում էին տան իրերը, ծախում էին, թալանում էին, բանտարկում էին Գաւառներն ու գիւղերը մատնւած էին մի մարդու տնօրինութեան և կենտրոնական կառավարութիւնը գրեթէ չէր միջամտում, չէր կարողանում միջամտել նրա գործերին։

Քաղաքական իշխանութիւնն նոյնպէս թույլ, նոյնպէս անկազմակերպ։ Զինւորները կանոնաւոր ոտճիկ չէին ստանում։ Երկրի վարիչները սպառում, դատարկում էին ժողովրդին՝ իրենց գրպանների, իրենց փարթամ ու շքեղ կեանքի համար։ Զինւորին մնում էր կողոպտել, թալանել, աւերել ժողովրդի, գլխաւորապէս աղքատ ու թշուառ դասերի ունեցածը։ Եւ որովհետև պետութիւնը զինւորին ոչինչ չէր տալիս՝ այդ պատճառով էլ չէր պատժում նրա նմանօրինակ արարքները, և հասարակութեան գանգատներն անհետեւանք էր թողնում։

Պետական այս ընդհանուր անկանոնութիւնը աւելի

ցայտուն կը պատկերանայ, եթէ ի նկատի առնենք Պարսկաստանի ժողովուրդների բարոյական, մտաւոր ոյրալի վիճակը։ Յաճախ բարբարոս ու կիսավայրենի՝ նրանք չեն կարողանում սխտեմատիկ կերպով աշխատել, արդիւնաբերել։ Նրանք չեն կարողանում իրենց համար տանելի, բարեկեցիկ կեանք ստեղծել։ Եւ քաղաքակիրթ ու աշխատասէր տարրերի հանդէպ՝ նրանք ներկայանում են մի կործանարար ուժ, հանգիստանում են իսկական շարիք։ Գողանում են, խրաջնում են աշխատող տարրերի ճակատի բրտինքը, և դրա համար գրեթէ չեն պատժոււմ, չեն ենթարկոււմ արդարադատութեան։

Այսպիսի պայմանների մէջ էր ապրում պարսկահայը, հասարակական այսպիսի արտասուելի միջավայրում։ Մի ժողովուրդ, որ ուներ իր հին քաղաքակիրթութիւնը, որ ստեղծել էր մտաւոր ու բարոյական այնպիսի նշանակելի արժէք, որ աշխատում էր, արտադրում, որ ձգտում էր դէպի կատարելութիւն, որ ուզում էր յառաջ ադիմել — հարկադրւած էր քաշ տալ իր ողորմելի գոյութիւնը ասիական, արևելեան այդ դժբաղակ միջնորոտում, այդ խաւար ու բիրտ, նախնական հասարակակարգի մէջ... Այստեղից էր սկզբնաւորոււմ նրա վիճակի բովանդակ դառնութիւնը, նրակեանքի մըշտընչեանական դրաման։

Բայց հայ ժողովրդի բոլոր տարրերը հաւասարապէս ու միակերպ չէին ազդոււմ տիրող ուժիմից։ Այստեղ էլ վերին շերտերը — շատ թէ քիչ կարողանում էին զերծ մնալ բռնապետութեան ու կամայականութեան հարւածներից։ Նրանք ամեն կերպ աշխատում էին իրենց դասակարգային անհատականութիւնը ապահովել զրօսից եկած զարկերի դէմ։ Նրանք ունէին մի տեսակ հասարակական շանթարգել, որ ընդունում էր սօցիալական միջնորոտի կայծերը և դուրս էր վանում իրենից նրանց բով ապրում էին ուրիշ դասեր — անգիտակից ու թշուառ — որոնց վրայ կենտրոնանում էին կայծերը և որոնք յաւիտենապէս շանթահարւում էին թող տարօրինակ չթւայ այս պատահական համեմատութիւնը։ Մեր կարծիքով նա բաւական պարզ կերպով պատկերացնում է հարստահարութեան միջավայրը և իսկական զոհերի կացութիւնը...

Հոգեւորականութիւնը, մեր ժողովրդի պաշտօնական ներկայացուցիչը ենթակայ էր զանազան տեսակ նեղութիւնների։ Սարդարներն ու խաները նրանցից էին պատիւներ պահանջում, դրամական նւերներ ուզում։ Եղմիածնի վանքը շատ յաճախ պարսիկ կառավարիչների շահատակութեան ասպարէզ է դարձել քեզ հայ մասնագիտները և թէ մինչև անգամ օտար ճանապարհորդները զանազան առիթներով նկարագրել են մեր բարձր կղերականութեան և մեր հոգեւոր կենտրոնի ցաւերը մասնագական տիրապետութեան ժամանակի Մասնագական տէրերը գնում էին Եղմիածին, ներս

խուժում վանքը, թախանում նրա հարստութիւնը, բռնագրաւում նրա սեփականութիւնը, շարաթններով նստում այնտեղ, լիանում, առատանում և ապա յղիացած ճանապարհ ընկնում դէպի իրենց տեղերը: Այս արշաւանքներն ու ասպատակութիւնները կրկնում էին յաճախակի, բնական երևոյթի կանոնաւորութեամբ: Եւ սակայն վանքը ամեն անգամ էլ կարողանում էր բաւականութիւն տալ կողոպտիչներին, և սակայն էջմիածնի հոգևորականութիւնը ապրում էր առանց նիւթական զրկանքի, առանց չքաւորութեան: Ո՞վ էր լցնում վանքի այնպէս շտեմարանները, որտեղից էր դալիս այն անսպառ հարստութիւնը, որի մասին զարմանքով են խօսել եւրոպացի գիտնական ճանապարհորդները և որ մտնում էր մեր հոգևոր հայրերի և մեր քաղաքական տէրերի որկորը: Քաղաքների առաջնորդ եպիսկոպոսները, վարդապետները, մինչև անգամ գիւղական բաճանաները ընդհանրապէս բարեկեցիկ կեանք էին վարում: Անշուշտ, նրանք էլ, այսպէս թէ այնպէս, իրեն յետաձեաց ու անիրաւական պետութեան բնակիչներ՝ որոշ նեղութիւններ կրում էին, բայց նրանց փոխարէն միշտ կանգնած էր ժողովուրդը, հատուցանում էր ժողովուրդը, տառապում էր ժողովուրդը:

Հայկական ազնւականութեան մնացորդները—մելիքները ևս նիւթական բարելու վիճակի մէջ էին: Լինելով ընդհանրապէս խաների օգնականներ, ներկայացուցիչներ հայ գիւղերում՝ նրանք ամեն կերպ օգտւում էին իրենց դիրքից և պաշտօնից: Նրանք փոքրիկ խաներ էին: Մելիքները հայ հասարակութեան անմիջական տէրերն էին, նրա անմիջական հարստահարիչները: Գատական և վարչական որոշ գործառնութիւններ և իրաւունքներ ունենալով՝ նրանք սովորաբար չէին խնայում ու չէին խղճում իրենց հայրենակից գիւղացիներին: Յաճախ նրանք խաների և պարսիկ պաշտօնեաների չափ անողորմ, անսանձ էին: Գիւղացիների չքաւոր, թշուառ կացութիւնը չէր ազդում նրանց մելիքական հոգեբանութեան վրայ, և նրանք ամեն կերպ քամում, ծծում էին ոսկրացած հայ ազգաբնակչութիւնը: Եթէ խանութիւնը մի իսկական աղէտ էր, իսկական պատուհաս գիւղացիութեան համար՝ մելիքականութիւնն էլ մի փրկութիւն չէր, ազատում չէր...

Քացի այս երկու դասակարգից — հոգևորականութիւնից և մելիքութիւնից — որոնք ապահով ապրում էին պարսկական արքայատոմարի տակ՝ կար նաև բաւական զարգացած վաճառականութիւն: Թէև մահմեդական աւանդութիւնների և նախապաշարունակների համաձայն՝ քրիստոնեաները չէին կարող ամեն տեսակ ապրանք վաճառել, այնուամենայնիւ հայ առևտրականները կարողացել էին իրենց համար տանելի կեանք ստեղծել: Նրանց նիւթական դրութիւնը բնաւ մասհոգի չէր: Քաղաքների մէջ հայ վաճառական դաս-

ակարգը բաւական աչքի ընկնող դեր էր կատարում, հասարակական-տնտեսական կառուցածքի մէջ բաւական նշանակելի տեղ ունէր: Ընդհանուր միջավայրի յետամնացութիւնը ի նկատի առնելով և միւս ազգերի հետ համեմատելով՝ հայ վաճառականութիւնը ևս շատ չէր նեղւում տիրող ռէժիմից...

Եւ այսպէս՝ հոգևորականութիւնը՝ մելիքութիւնը, վաճառականութիւնը ընդհանրապէս ազատ էին մնում սօցիալական անիրաւութեան, Շահերի ու սարգարների հարածներից: Ըրհետաւորները միջին տեղն էին բռնում: Նրանց մի մասը, որ շատ թէ քիչ գրամ վաստակելով կարողանում էր զարգացնել իր արհեստը՝ մտնում էր մանր վաճառականների բարեկեցութեան: Հայերի մէջ կային տնտեսապէս կայուն ոսկերիչներ, զերձակներ: Միւս մասը հազիւ էր իր օրական հացը ձեռք բերում: Սրանք ընդհանրապէս չքաւոր ու կարօտ կեանք էին վարում:

Պարսկական ռէժիմի ամբողջ ծանրութիւնը, բարբարոսութեան ու անիրաւական պետութեան բոլոր հետեանքները կենտրոնանում էին գիւղացիութեան վրայ, որ աշխատում էր կենդանու համբերութեամբ և տառապում էր յաւիտենապէս: Պարսկաստանի հողը գտնւում էր տիրող դասակարգերի՝ խաների, ազնւականների ձեռքում: Հասարակ ժողովուրդը մշակում էր այդ հողը, դնում էր նրա վրայ իր բոլոր կարողութիւնը — և միշտ էլ սոված, միշտ էլ մերկ էր մնում:

Գիւղացուն տանջում էին, գիւղացու արիւնը քամում էին հարկահանները, մելիքները, ազնւականները, խաները, սարգարները: Նրա կեանքը պատկանում էր երկրի տէրերին. նրա ճակատագիրը գտնւում էր սարգարի և խաների ձիրաններում: Նրա պատիւն էլ, նրա կինն ու աղջիկն էլ ապահով չէին այդ բիրտ ու դժոխք-աշխարհում: Նա հանդիսանում էր պարսկական հարստահարութեան առաջին զոհը:

ԱՎՎՐՈՎԻ ՊԱՏՄԱՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆԸ

I

ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Պատմափիլիսոփայութեան նախապայմանները. — 1. փիլիսոփայական մտածողութիւն — նա նախորդ է: — Փասերը նրա միակ օրինական առարկան — ան-բայօյօզիզմի սեռակէր. — Սկզբնապատճառների նախորդութիւնը անկարելի և անկարելի. — Մտաւոր կազմակերպութեան նախապատճառն է անխոստակի էակէր. — Անպայման սիւս էլակէրի պատճառը՝ ու-անհրաժեշտ. — Կենսաբան, ինքնակոնսոլուտ կիլիսոփայական յոյնաւաճի մէջ — Չու գտնուողներ փիլիսոփայական մտածողութեան և զիսական մնացած օրհանների միջև — սաւոր նախապայմանը — Չ. Պատմութիւնը որպէս գիտութիւն. — Երեկ կարգի էլէմենտը՝ նախապայմանական կեանքում. — Պատմութիւնը պատմագրութիւնից. — Պատմագրութիւնը՝ զարգացման և նրա կիլիսոփայական գիտութիւն. — Անալոգիաներ. — Իրանց արժէք. — Բնագիտութիւնը օճանակող պատմագրութեան. — Վ. ինքի նարգեր. —

Պատմափիլիսոփայութիւնը պատմութեան գիտական-փիլիսոփայական ըմբռնողութիւնն է: Նա պայմանաւոր-

րում է նախ՝ մի պատմութիւն, որպէս գիտութեան ճիւղերից մէկը. և ապա՝ փիլիսոփայական մի մտածողութիւն, որ էապէս համադրող, ընդհանրացնող է: Եւ ամեն մի պատմափիլիսոփայական յօրինածք, որ գիտական լինելու յուսկնութիւնն ունի, ամեն մի այդպիսի փորձ, որ դրական հետեանքների է ուզում հասնել, առաջուց պիտի պարզէ իրեն, թէ ինչ է փիլիսոփայական ըմբռնողութիւնն առհասարակ և ինչ է պատմութիւնը՝ մասնաւորաբար:

Պ. Լավրովը ևս կանգնում է այդ գիտական հողի վրայ և նախ քան պատմափիլիսոփայական պրօբլեմների վերլուծումը, իր ընդհանուր փիլիսոփայական տեսակէտն է լուսաբանում: Երկրորդ կարգում՝ բնում է նա այն հարցը, թէ ինչ պահանջներ կարելի է անել պատմութիւնից՝ որպէս գիտական մտքի ծաւալուն հունի մէջ մտնող մի ինքնուրոյն գիտելիքից. և ինչ պահանջներ՝ որպէս զարգացողական (էվօլյուցիական) գիտութիւնից:

Փիլիսոփայական ըմբռնողութեան հարցը հետախուզելով նա յանգում է այն հետեանքին, որ փիլիսոփայական միտքը տեսական մի առանձին, ստեղծագործող միտք է: Նրա նիւթը մատակարարողը գիտութիւնն է, գործնական մղումները, կենսական խնդիրները և հասարակութեան մէջ կազմաւորած բարոյականութեան ձևերը: Նա էապէս ընդհանրացնող միտք լինելով, նախապատրաստել է ընդհանուր պատկերացումներ և ըմբռնողութիւնների բնազդական-հոգեբանական հողի վրայ: Իր սաղմային վիճակում նա հանդէս է գալիս նատուրֆիլի (բնապաշտամունքի) և անիմիզմի (հոգեպաշտամունքի) հաւատալիքներով, որոնք ճգնում են մի ամբողջականութիւն մտցնել աշխարհի ըմբռնողութեան և կուլտուրայի ձևի մէջ: Նա — փիլիսոփայական, ընդհանրացնող միտքը — իր զարգացման բարդ պրօցէսի ընթացքում ստանում է մերթ կրօնական, մերթ բնազանցական բնոյթ. բայց երբեմն էլ այնպիսի գունաւորում, որտեղ գերազանցողը գիտական պահանջներն են: Իր էվօլյուցիայի բոլոր շրջաններում, սակայն, նա պահպանում է իր բնորոշ յատկանիշը. նա իր համար ոչ մի ինքնուրոյն բովանդակութիւն չէ ստեղծում. նրա ստեղծագործական աշխատանքը ընդհանրացումը, համադրումը, ամբողջականութիւնն է: Ինչպէս գիտութիւնների մէջ, այդպէս էլ ընդհանրացնող փիլ. մտածողութեան օրինական առարկան կարող է լինել միայն և միայն փաստը (fact): Միշտ և ամեն տեղ միայն փաստերն են, որ մեր վերջնաբակացութիւններն և մեր գործելակերպերը որդարացնում են, նրանց գիտականութեան և բանական գործողութիւնների ուժը տալիս:

Բայց մինչդեռ փաստերը գիտութեան մասնակի ձևերի մէջ գոյութիւն ունին յաճախ առանձնակի-առանձնակի, կամ միացում են համեմատաբար սեղմ գրուպ-

պաներում, փիլիսոփայական մտքի ստեղծագործող բովում գիտութիւնից և գործնական կեանքից եկած բոլոր տարրերը պիտի հետեւին ամբողջականութեան, հետեղականութեան և ներդաշնակութեան անխուսափելի պահանջին՝ մեր ըմբռնողութեանը մատչելի ամենապարփակուն ձևի մէջ: Միացում, ընդհանրացում կամ ամբողջականութիւն՝ մտածողութեան շրջանում, հետեղականութիւն՝ մտքի և կեանքի մէջ. ներդաշնակութիւն՝ ըմբռնողութեան և գործունէութեան միջև, — այս ձրգաւանները անբաժան են գիտական-փիլիսոփայական մտածողութիւնից:

Ե. յսպիսով, փիլիսոփայական ըմբռնողութիւնը պիտի ընդգրկէ կեանքի ամբողջական պրօցէսը իսկ այդ պրօցէսը կազմում է ճանաչողութիւնից, մտքի ստեղծագործական աշխատանքից և կենսական գործունէութիւնից: Մի մտածողութիւն, որ կարողանում է այդ երեք սկզբունքները ամբողջական, կուռ յօրինածքի մէջ առնել և ներդաշնակել, համբարաշխել իրար հետ — մի այդպիսի մտածողութիւնն է, որ իր կազմակերպած վիճակում փիլիսոփայական սիստեմ է արտադրում:

Փիլիսոփայական ըմբռնողութեան այդ տեսակէտը Լավրով անարօպօլօգիզմի տեսակէտ է անւանում և իր փիլիսոփայական յօրինածքին անարօպօլօգիզմ անունը տալիս: Այդ տեսակէտէն նա յաճախ է անդրադարձել, նոր լուսաբանութիւններ աւել, ընդարձակ մանրամասնութիւններով փաստաբանել, բայց ինչ սկզբունքներով հիմնաւորել է նա անարօպօլօգների տեսակէտը գեո 60-ական թւականների սկզբին, այդ նոյն սկզբունքներին հաւատարիմ է մնացել նա իր ամենավերջին գրածներում:

Շատ յատկանշական է անարօպօլօգիզմի տեսակէտի համար, որ Լավրով դրա հիմքի մէջ դնում է «մարդկային ամբողջական անձնաւորութիւնը, կամ բնահոգեբանական անհատը՝ որպէս անխուսափելի իրօղութիւն»⁴: Այդ պահանջին անկարող են բուսաւորութիւն տալու զօգմատիկ սիստեմները, որովհետեւ դրանք այնպիսի սկզբունքներից են մեկնում, որ մարդուց դուրս գտնւած աշխարհիցն են վերցրած:

Թէօրիական և գործնական աշխարհները իրենց էութեամբ անձանաչելի են և կը մնան, որքան որ դրանց էութեան ճանաչումը սկզբնապատճառների ճանաչումը պէտք է նշանակէ: Փիլիս. զօգմատիկ կառուցւածքները մազաչափ անգամ առաջ չլարժելով մեզ դէպի այդ ճանաչողութիւնը, ժամանակաւորապէս յետ են պահում մարդկային մտածողութիւնը հնարաւոր ճանաչողութեան ճանապարհից: Մեզ մատչելի է միայն ճանաչելի երևոյթների ամբողջականութիւնը՝ անձանաչելի նախահիմքի վրայ: Այդ «էութիւնը»⁵, որ մեր կեանքի համար առանձին արժէք չի կարող ունենալ, ոչ թէ շնայած նրան, որ գեո չի ճանաչւած, այլ առաւելապէս այն պատճառով, որ անձանաչելի է, կա-

րող է միայն մետաֆիզիկայի նիւթ լինել և եթէ մեր ժամանակներում մտածողութեան այդ ձևը, որ անցեալ խորհրդապաշտական շրջանների մնացորդն է հանդիսանում, իր աղօս գոյութիւնը դեռ պահպանում է, ապա պատահական և ժամանակաւոր մի խմբակցութեան (կոմբինացիա) շնորհիւ է, որ տեղի ունի այդ երևոյթը:

Թէ՛ մեր հոգեկան-բնախօսական կազմութեան և թէ՛ դրսի աշխարհի կազմի պատճառով մեզ համար անհրաժեշտ է ոչ թէ մի «անպայման ճշմարիտ» ելակէտ՝ փիլիս. թէօրիական շէնքը կառուցանելու համար, այլ մեր մտածողութեան կազմաւորման համապատասխանող մի անխուսափելի ելակէտ: Այս կենտրոնական կէտից մեկնելով և մեր մտածողութեան ամենահաւանական սկզբունքները կշռադատելով, դրանց համեմատ և զբանց շուրջը պիտի դասակարգենք մտածողութեան մնացած շրջանները՝ իրենց հաւանականութեան աստիճանաւորման կարգով:

Այս մտքով փիլիսոփայական կոնստրուկտիւնի (յօրինւածքի) միակ բէկ էլ ելակէտը — շեշտում է Լավրով — իրեն թէօրիապէս և գործնականօրէն վերստուգման, կոնստրուկտիւնի ինտերկոնտրոլի, հասարակականացողի մէջ զարգացած անհասն է:

Ինքը իրեն և իր շրջապատը քննադատող, հասարակականացողի մէջ կազմաւորւած և զարգացած Եւրոպական մեղմ փիլիս. կենտրոնաձիգ ուժը, մի կողմից արդարութիւնն է այն ամենի, ինչ մտածելի է, և միւս կողմից ստեղծագործողը այդ բոլորի: Այդ ստեղծագործումը իրականութիւն է դառնում նրանով, որ քննադատող և շրջահայեաց Եւրոպիան մշտական ձգտումի մէջ կամենում է ամենամեծ ճշմարտութիւնը և արդարութիւնը միացնել անհասի և հասարակութեան անհրաժեշտ փոխադրութեան վրայ խարսխած ամենալու կենսաձևերի հետ: Եւ որտեղ մենք պատմութեան մէջ մտած մարդկային հասարակութիւն ենք ճանաչում, այնտեղ տեսնում ենք մենք նաև ստեղծագործական այդ աշխատանքը:

Անարօպօլօգիզմի տեսակէտը մօտիկից որոշելով, բացայայտ կերպով հակառակ կանգնելով հին և նոր ժամանակների այն բազմաթիւ փիլիսոփաների դէմ, որոնց համար փիլիսոփայութեան բաղաբացիական իրաւունքը հիմնւած է նրա, իբր թէ ունեցած ուրոյն փաստական բովանդակութեան վրայ, Լավրով փայլուն կերպով հիմնաւորում և պաշտպանում է վերև ակնարկած այն միտքը, որ փիլիսոփայութիւնը միայն մտային (ինտելեկտուել) գործունէութեան այն շրջանն է, որտեղ մտածողութեան մի առանձին ձևն է գործում — ընդհանրացումը:

Երկրաչափութիւնը, կենսաբանութիւնը, հասարակագիտութիւնը հետազօտողից փաստերի հարադատութեան և նրանց մասնակի օրէնքների տեսակէտից նոյն պահանջներն են անում, ինչ «այսպէս անւանւած» փիլի-

սոփայական գիտութիւնները — տրամաբանութիւնը, հոգեբանութիւնը, բարոյագիտութիւնը: Չկայ ո՛չ մի «այսպէս անւանւած» փիլիսոփայական սկզբունք, որը ուշագիւր ուսումնասիրութիւնից յետոյ կարելի է չլինէր վերագրել կամ մարդկային կեանքի մի շրջանին պատկանող սովորութիւնների ու հաւատալիքների կօմպլէքսին և կամ գիտութիւններից որևէ մէկին: Չկայ ոչ մի հաստ «այսպէս անւանւած» փիլիսոփայական մեթօդ, որը չմտէր կամ միտերկայի (խորհրդապաշտութեան) ձևերի մէջ կամ էթիկայի (բարոյագիտութեան) կամ սօցիօլօգիայի (ընկերաբանութեան) շրջանը:

Միացման, ընդհանրացման շրջանն է միայն, որ փիլիսոփայութեան շրջանն է ստեղծում և նրան կենսունակութիւն տալիս և այդ պահանջը նոյնքան կարևոր և անյաղթահարելի է զարգացող մարդու համար, որքան գիտութեան շրջանում փաստերի և նրանց օրէնքների ճիշտ որոշումը, հիպօթէզներ առաջադրելը ու նրանց քննադատութիւնը, նոյնքան անհրաժեշտ, որքան բարոյականութեան շրջանում կենսական նպատակների մէջ աստիճանաւորութեան մտցնել, սեփական և օտար գործողութիւնները այդ աստիճանաւորութեան համեմատ քննադատելը: Շրջապատին քննադատօրէն նայող անձնաւորութեան վճռական հրամայականն է դա: Իր այդ ընդհանրացման մէջ փիլիսոփայական ըմբռնողութիւնը անհրաժեշտօրէն ընդառաջում է ամբողջականութեան, հետեղականութեան և ներդաշնակութեան մեր պահանջին և հէնց այդ պահանջների բաւարարման ձգտումով նա դառնում է անհամար փաստերի զօրաբանական կազմակերպիչ, ստեղծագործող ուժը:

Այն պատճառով, որ փիլիսոփայական կազմակերպող ըմբռնողութիւնը մտքի ստեղծագործական իր ճանապարհին կարգաւորման ենթարկւած փաստաշարքերից և միայն փաստաշարքերից է հանում հնարաւորին չափ լայն և համայնապարփակ ընդհանրացումներ և ապա՝ այն պատճառով, որ այդ ըմբռնողութիւնը կապակցող մտքի յաղթական նախից դուրս է թողնում հին և նոր ժամանակների խորհրդապաշտ և դօգմամուլ մտածողութեան և հաւատալիքների ծանր բեռը — այդ պատճառներով հէնց այդ ըմբռնողութիւնը դառնում է փիլիսոփայական-գիտական ըմբռնողութիւն:

Գրական փիլիսոփայութեան — պօզիտիվիզմին — ծանօթ ընթացողը, անշուշտ նկատում է, թէ ընդհանուր փիլիսոփայական ըմբռնողութեան խնդրում որքան մօտ առնչութիւն ունի Լավրովը Օգիւստ Կօնտի և յետագայ պօզիտիվիստների հետ: Ան այժմ մեզ համար կարևոր է այստեղ շեշտել միայն այն, որ նորագոյն պօզիտիվիզմի նախահօր պէս Լավրովը մինչայժմայ ամբողջ փիլիսոփայութիւնը առանց վերապահութեան դէն չէ շարտում և դօգմատիկ դիրքի մօտեցող մի անպայման բացասական տեսակէտ բռնում դէպի այդ փի-

լիստփայութիւնը, այլ ինչ որ անպէտք, միստիկական և մնացանցական էր փիլիսոփայական մտքի զարգացման ձևերի միջոցով յաղթահարելու Կոնստան փիլիսոփայութիւնը բաւականաչափ տառապում էր փիլիսոփայական արեան պակասութիւնից՝ որպէս զի մեր մտածողը փիլիսոփայական ըմբռնողութեան խնդրում անշեղօրէն նրան հետևել կարողանար:

Անցնելով պատմափիլիսոփայութեան միւս նախապայմանին, այն է՝ պատմութեանը, Լավրով յանգում է կրկին իր յետագայ վերլուծութիւններին համար որոշ և արժեքաւոր հետևանքներով Այդ գիտութիւնից անելիք հարցը քննելով, նա շեշտում է, որ հասարակական կենսոյցի ամեն գարեջրջանում գոյութիւն ունին էպպէս իրարից տարբեր մի բանի տարրեր, որոնց պիտի ջոկել, ամեն մէկին իր տեղը ցոյց տալ պատմական պրօզէսի մէջ:

Գրանք ամենից առաջ այն տարրերն են, որոնցով ըմբռնչում է աւած պատմական գարեջրջանը, էպոխան: Կրկնորդ կարգի տարրերը, որ գոյութիւն ունին առաջինների կողքին, կամ անցեալից նոր էպոխային փոխանցում, գարնել են միայն փաստարկ մնացորդներ և կամ նոր էպոխայում դեռ չեն կորցրել իրենց կենսունակութիւնը: Երրորդ կարգի տարրերը աւել կամ պակաս հետաւոր տպագայի սաղմեր են կրում իրենց մէջ: Այս երեք կարգի էլէմենտների փոխազդութիւնները և յարաբերութիւնները կազմում են պատմական պրօզէսի կարեւորագոյն մասը: Բայց այդ պրօզէսի իսկական իմաստը ըմբռնելու համար անհրաժեշտ է և անխուսափելի, ուսանանապէս զգալու այն դերով, որ խաղում են մի կողմից պատմութեան իրական կրողները և ստեղծողները — գիտակցող անձնաւորութիւնները — և միւս կողմից այն հաւարական կազմութիւնները, որոնց ձևի տակ պատմութեան իրական մղիչները պատմական պրօզէսի մէջ են մտնում:

Եթէ պատմութիւնից անելու լինինք այն պահանջները, ինչ անում ենք ամեն առանձին գիտութիւնից, ապա նա պիտի ներկայացնէ փաստերի մի շրջան, որտեղ մարդկային մտածողութեան տրամաբանական պայմանների շնորհիւ այդ փաստերը խտացում են օրէնքների մէջ և յետագայում դեռ աւելի ընդարձակ խմբակցութիւնների հնարաւորութիւններ ստեղծում:

Պատմութիւնը որպէս գիտութիւն նոյն յարաբերութիւնն ունի իր բնագաւառում եղած փաստերի և հիպօթեզների նկատմամբ, ինչպիսին գոյութիւն ունի ամեն ուրիշ գիտութեան մէջ: Պատմական պրօզէսի գիտական հետազոտութիւնը պահանջում է ամենից առաջ փաստերի ամենահոգատար և միանգամայն առարկայական քննադատութիւն, պիտի զատել ստուգաձևերը, հաւանականները և կասկածելիները իրարից, յուշարձանների և փաստաթղթերի հիման վրայ ապացուցածները առանձնացնել դեռ հիպօթեզների շրջանում գտնաւած-

ներից: Այդ հիպօթեզները գիտական մտքի առաջ մինչ այն ժամանակ կարող են մնալ որպէս գիտական, մինչև երբ ոչ մի փաստ նրանց չի հակասել և մինչև որ ամեն հարազատ իրողութիւն նոյնքան աւելի յարմարութեամբ կը բացատրի, որքան աւելի լազմակողմանի քննադատութեան կենթարկին իրենք, այդ հիպօթեզները: Պատմական քննադատութիւնը միակ գիտական հիմքն է թէ՛ գեղարեստագէտ. պատմաբանի և թէ՛ պատմաբան. մտածողի համար: Առարկայական ճանապարհով հաստատուած, վստահելի, գիտական-հիպօթեզային այդ իրողութիւնների վրայ է, որ լուսաբանում են անհատական և հաւարական (կոլլեկտիվ) հոգեբանութեան, հասարակագիտութեան և պատմութեան օրէնքները:

Բայց պատմութիւնը էպպէս էւօլիւսիոնի ենթակայ երևոյթների գիտութիւնն է և պատմական շարժման գիտական հետազոտողը կարող է միւս զարգացողական գիտութիւնների շրջաններում նմանութիւններ (անալօգիաներ) որոնել: սաղմնաբանութիւնը, օրգանական աշխարհի զարգացման թէօրիան, օրինակ, այդպիսի շրջաններ են ներկայացնում: Մեխանիկական-քիմիական գիտութիւնների խմբակը իր սահմանների մէջ է առնում կրկնուող այն փաստերը, որոնց կարելի է աւելի կամ պակաս ձշտութեամբ կամ ենթադրաբար շարժման մեխանիկական պրօզէսների վերածել: Թէև զարգացման իրողութիւններ այստեղ ևս կարող են պատահել, ինչպէս՝ երբ մենք գործ ունինք արեգակնային սիստեմի զարգացման հետ. սակայն պատմագիտութեան համար այդպիսի անալօգիաները չեն կարող առանձին արժեքներ ունենալ:

Պատմագիտութիւնը բնագիտութեան ընդարձակ շրջանից վերցնում է որոշ նախնական իրողութիւններ, որոնք սկիզբն են կազմում առհասարակ կենդանական աշխարհի ամեն պատմութեան: Ընդունելով այդ իրողութիւնները որպէս տրուած, անվիճելի, նա ցոյց է տալիս, գոնէ պիտի ցոյց տայ, որ պատմական պրօզէսը առաջ եկաւ նախ զգացած տհաճութիւնից ազատելու, ապա հաճոյք զգացածը ձեռք բերելու ձգտումից: Նա պիտի մեզ մատչելի դարձնի նոյնպէս, թէ ինչ փոփոխութիւններ են մտել „հաճոյք“ և „տհաճութիւն“ գաղափարների հետ կապուած ըմբռնողութիւնների մէջ. թէ այդ փոփոխութիւնները փիլիսոփայական մտածողութեան ինչպիսի ձևեր և հասարակակարգի գործնական ինչպիսի կերպեր ստեղծեցին: Նա պիտի պարզէ մեզ, թէ լաւի և արդարադոյնի ձգտումը տրամաբանական ինչպիսի ընթացքով արտադրեց բողոք և պահպանողականութիւն, ռեակցիա և առաջխաղացում: Նա պիտի ասէ մեզ, վերջապէս, թէ իւրաքանչիւր էպոխայում ինչպիսի յարաբերութիւն է եղել մի կողմից մարդկային ըմբռնողու-

Թեան, ճանաչողութեան, հաւատալիքի, փիլիսոփայական պատկերացումների և միւս կողմից լաւի, արդարի գործնական տեսութիւնների միջև:

Ահներև է, շարունակում է Լավրով, որ պատմական ըմբռնողութեան ամենակարևոր խնդիրը հասարակական կեանքի ֆազերի բնականոն հետևողականութեան օրէնքների յայտնագործման ձգտումն է կազմում: Այդ ձրգտման ճանապարհին նա բաղխում է, սակայն, մի շարք վիճելի խնդիրների, որոնց պէտք է բաւարարութիւն տալ, գիտական օպերատիւնը շարունակելու համար: Այդպիսի խնդիրներ են, օրինակ. կարելի՞ է մարդկային բոլոր հասարակութիւնների համար նօրմալ հաշուել զարգացման ֆազերի նոյն հետևողականութիւնը, բոլոր մնացած շեղումները վերապահելով պատահականութեան և այլասեռման. թէ՞ աւելի գիտական կը լինէր հասարակական զարգացման մեջ նոյնքան տարբեր տիպեր ընդունել, որքան բուսական և կենդանական օրգանիզմների տարբեր դասակարգումներ կան: Անհատների կամ հասարակական կապակցութիւնների ի՞նչ պահանջներն են պայմանաւորել պատմական երևոյթների չկրկնւող բնօրէնը և պատմական տարբեր ֆազերի իրարփոխարինումը: Ի՞նչ խնդիրներ, աւած մի որոշ մօմենտում, աւած կեանքի բնորոշ կողմերը պիտի համարել: Այս և նման մի շարք հարցեր կազմում են աւել կամ պակաս չափով հիմնաւոր, գիտական հիպօթեզների կուր ընդարձակ ասպարէզը. դրանց հաւանականութեան և գիտականութեան աստիճանը կախած է նախ այն փաստացի նիւթի քանակից և որակից, որի վրայ այդ հիպօթեզներն են կառուցւած. և ապա պատմական քննադատութեան գրաւումներից ու գիտական էրուզիսիօնի վիճակից:

Այս բոլոր նկատումներով առաջնորդող պատմագիտական օպերատիւնը, որ բաւարարում է մատնացոյց եղած բոլոր պահանջներին, կարող է կազմակերպել մի դիսցիպլինի մէջ, որի վերջնանպատակն է՝ հետևողականութեան օրէնքների յայտնագործում գիտակցական գործողութիւնների և մարդկային համբերաշխութեան տարբեր շրջանների մէջ. ըստ որում պատմագիտութեան էական պրօբլեմն է դառնում՝ անհատական գիտակցութեան հասարակական համբերաշխութեան շրջանում ամեն առանձին դարաշրջանի համար բնորոշ գծերը գտաւել անցեալի մնացորդներից և ապագայի ստղծերից:

Նիւթիս սահմանները չափազանց պիտի ընդարձակէինք, եթէ փորձէինք այստեղ ամբողջովին վերարտադրել այն մանրակրկիտ և խորը բաժանումները, որ անում է Լավրով պատմագիտութեան և մնացած գիտութիւնների միջև: Աւելի ընդարձակ էջեր կը հարկաւորուէին նաև իրենց ամբողջ մանրամասներով այն պահանջները թելելու և հիմնաւորելու համար, որ դնում

է մեր մտածողը գիտական պատմագրութեան առաջ: Ենզ անմիջապէս շահագրգռող տեսակէտից, կարծում ենք, բերած գիտողութիւններն էլ, որ արած են մեծագոյն մասով Լավրովի արտայայտութիւններով, բաւականաչափ պարզած պիտի լինին նրա գիրքը դէպի գիտական պատմագրութիւնը *):

Ս Ն Ա Ր

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԱՐՇԱԻԸ

ԵՒ

ԹԻԻՐՔԻՈՅ ԸԱԿԱՏԱԳԻՐԸ

IV

Եւ ահա այդ «արշաւը» հանում է արդէն հայկական Ցաւրոսին. «նա կերթայ լեռներն ի վեր մագլցելով, հազարաւոր խոշընդոտներ և խրամատներ յաղթահարելով՝ դէպի իր մեծ նպատակակէտը—միանգամայն տնտեսական և ռազմական»:

Այնտեղ, Եփրատի և Տիգրիսի լայնածաւալ ու արագասարք աւազաններում, ընչաքաղց «պանգրմանիզմը» կը գտնէ իր երազած գաղթավայրերը. այնտեղ նա կը թափէ իր հսկայ արդիւնաբերութեան շտեմարանները և, ի հարկին, իր յորդացող ազգաբնակչութեան հեղեղը. այնտեղից, իբրև սեփական գաղութներից, նա կը ստանայ ցորենի ու բամբակի իր անհրաժեշտ պաշարը, որ ստիպւած է որոնելու օտար երկիրներում. այնտեղ կը հաստատուի տնտեսան գորաւոր հմայքը, որ կը ձգտի մասունենալ թիւրքական աւարի բաժանութեան պարագային. այնտեղից, վերջապէս—և թերևս այդ է կարևորագոյնը—նա կը սպառնայ իր ահաւոր բրիտանական և արաբական զինուորներին, սիրանալով Հնդկաստանի լաւագոյն ճանապարհին...

«Իրապաշտ քաղաքականութիւնը», տեսանք, թէ ինչ մեթօդներով և հնարքներով, աստիճանաբար հարթեց այդ յաղթական առաջխաղացութեան ճանապարհը: Տեսանք, թէ ինչ արատաւոր միջոցներով գերմանական կայսրը սիրաշահեց Ելլզըզի մենաւորին, թէ ինչպէս նա զոհաբերեց արևմտաւոր և հոգեվարք ժողովուրդների դատը այդ գձուձ, գերազանցօրէն էգօիստ, ցինի-

*) Գիտամբը նիւթիս ընթացքում խուսափում ենք մէջբերումներից. դրանք չափազանց շատ լինելով, պիտի խանգարէին նրա ընթերցանութիւնը: Երևա կողմից Լավրովի գիտական, բառացի թարգմանութիւնը աւելի ևս պիտի դժւարացներ ընթերցանութեան գործը: Հէնց այդ պատճառով էլ արտայայտութիւնները պահելով, յաճախ աննպատակաբար դատանք բառացի լինելու նիւթիս վերջում պիտի տանք մենք այն բոլոր գրաւումների ցանկը, որոնց ձեռքի տակ եմ ունեցել աշխատութիւնս պատրաստելիս:

կորեն իրապաշտ քաղաքականութեան: Եւ տակաւին չսպասեցինք կաղզերական «սիրապործութեան» շարանը:

Ամենամեծը — նրա 1898-ի հոկտեմբերեան ուղեւորութիւնը դէպի Երուսաղէմ և Պոլիս Ամենաարտառօցը — Գամապոսեան նրա յայտնի ճառը, ուր ասում էր ի լուր ամբողջ երկրագնդի մահմեդականութեան:

« Թող զստահ լինի Նորին Եւծուխիւն Սուլթանը և այն 300 միլիոն մահմեդականները, որոնք յանձին նրա պաշտում են իրենց խալիֆին — թող զստահ լինին, որ Գերմանիայի թագաւորը նրանց բարեկամն է առ միշտ... »

Այն ժամանակն էր, երբ արևմտեան անկախ մամուլը որակում էր Աբդուլ Համիդին «մարդասպան» տիտղոսով... Բնական է, որ ամբողջ քուղաքակիրթ մարդկութիւնից նշաւակած, անարգած Խալիֆը չէր կարող անզգայ մեռլ արևմտեան հզօր հրամանատարի այդ բուն, արքայական ցոյցերի հանդէպ, չէր կարող չզնահասել նրա եղբայրական զգացումները և ընդառաջ չզնալ նրանց:

Այդ ցուցամոյ և ցուցարար ուղեւորութեամբ, կարելի է ասել, մի նոր ու փայլուն շրջան բացւեց գերմանական *Dr. Wiegand*-ի համար Եւծուք տեսանք նախորդ գլուխներում, որ սկզբնաւորութիւնը տրւած էր վաղուց, 80-ական թւականներից գերման արևելագէտները ներբողել էին անդադար Անատոլուի, Միջագետքի ընկան հարստութիւնները և ուղղել էին հանրութեան ու պետութեան ուշադրութիւնը դէպի այնտեղ: 1886-ին արևելագէտ դօքտօր Հայրենզեր հրատարակում էր մի գրքոյկ այսպիսի վերտառութեամբ.

« Բարեկամը, ամենահարուստ երկրավայրը՝ անցեալում և ամենաշահաբեր գաղթավայրը՝ ներկայում »:

« Երկրագնդի բոլոր հողերի մէջ՝ ոչ մէկը այնքան հրապուրել չէ գաղթականութեան համար, ինչպէս Սիրիան և Եսորեստանը: Չկան այնտեղ մեծ, կուսական անտառներ, որ հարկ լինի կարտել ու մարքել, չկան ընկան խոշրոցաններ յաղթահարելու, — պէտք է միայն բերել գետինը, սերմանել և հնձել: Արևելքը աշխարհի միակ երկրամասն է, որ տակաւին չի գրաված մի մեծ պետութեան ձեռքով: Եթէ Գերմանիան օգուտի առիթից, նախքան կողակները կը մեկնեն իրենց թափը դէպի այն կողմը, — նա կրտսանայ երկրագնդի բաժանման մէջ լաւագոյն մասը »:

Այս պերճախօս տողերի մէջ մենք տեսնում ենք պանգերմանիզմի իսկական բաղձանքը, բողարկւած տընտեսական ձեռնարկների վարագորով... Նախ՝ զօրացնել Թիւրքիան և մղել այն բրիտանական ոտնի դէմ, և ապա, օսմանեան «տակնուվրայութեան» ժամը հնչելուն պէս՝ գրոհ տալ յոշուաւոյ մարմնի վրայ և ճանկել լաւագոյն բաժինը...

Գրեթէ նոյն ժամանակները, մի ուրիշ գերման դօքտօր — Կերգէր — արծարծեց միևնոյն թեզը իր մի գլուխում, որ դարձեալ կրում էր ուշագրաւ մի վերնագիր.

« Փոքր Ասիան — գերմանական գաղթավայր »:

Կերգէր առաջարկում էր սկսել գաղթականութիւնը մեծ ընկերութիւնների միջոցով, հաստատուած Անատոլուի նոր շինելիք երկաթուղու մերձակայքում: Նա թե-

լագրում էր դաշն կապել Թիւրքիոյ հետ, ապահովել նրան՝ արտաքին ամեն մի արշաւանքի դէմ և դրա փոխարէն պահանջել Թիւրքիոյից մի շարք արտօնութիւններ, որոնցով գերմանացիք կարողանան ուղղել իրենց գաղթային հոսանքը դէպի օսմանեան կայսրութեան արգաւանդ շրջանները...

Նւաճողական տենզը աւելի ևս բորբոքեց, երբ սուլթանը գերմանական մի ընկերութեան զիջեց Անատոլուի երկաթուղիների արտօնութիւնը, պանգերման թէօքրեթիկոսները հասկացրին, որ անտեսական արտօնութիւնները բաւական չեն և բացայայտ կերպով առաջարկեցին մինչ այն վարագուրւած բաղաբաղան յաւակնութիւնները: Համագերմանական տիրապետութեան ձգտող՝ *Alldeutscher Verband* — ը իր հրատարակած մի բրօշուրի մէջ այդ նւաճողական քաղաքականութեան միտքն էր արծարծում *):

Գերմանական շահք պահանջում է, որ գէթ տսիական Թիւրքիան դրել գերման պրօտէքտօրատի, հոգանաւորութեան տակ, Ամենաշահաւետ մեզ համար կը լինէր՝ գրաւել Միջագետքը և Սիրիան և միտմանակ մեր հովանաւորութեան ենթարկել Թիւրքաբնակ տսիական ճաճկատարը **):

Իրենք Թիւրքերն ևս — շատ թէքիլ գիտակից, իմացական տարրերից — շատ լաւ էին ըմբռնում Գերմանիոյ անտեսական ծրագիրների ոգին, նրանց իսկական, վախճանական նպատակը: Միջագետքում կատարած իմ ուղեւորութեան միջոցին — ասում է դօկտօր Ռօօրբախ — մի կրթւած մահմեդական հետևեալ կարծիքը յայտնեց ինձ՝ գերման երկաթուղային ծրագիրների առթիւ (1900 — 1901 թ.):

« Եւծուք այժմ, այս, մեծ բարեկամներ ենք, բայց վախճանում եմ, թէ դուք էապէս ուսմանից ու անզիտայիններից աւելի լաւ չէք և նրանց պէս դուք ևս կուզեք մեր երկրին տիրանալ: Երկաթուղին այն պարանն է, որով պիտի բաշէք մեր երկիրը դէպի ձեզ » ***):

Փոքր Ասիան դարձաւ հոյակապ ծրագիրների ու երազների առարկայ: Բոլոր միւս գաղութային մտահոգութիւնները նսեմացան Բերլինում... Արևելեան Աֆրիկա, Կամբուոն, Կիտու-Չաու և այլն (գերմանական գաղութներ) — նրանք բոլորը յետ մղեցին Անատոլուի վարագոյն հեռապատկերի դիմաց: Արովհետև նրանք բոլորը թւում էին գերմանական իւնկերներին ու բուրժուազիային, իբրև խախուտ, օգային կառուցւածքներ, որ կարող էին վաղ թէ ուշ կուլ գնալ հզօր նաւային պետութիւնների Պէտք էր յենել գաղութային տիրապետութիւնը ցամաքային գօրբի վրայ, որ կազմում է Գերմանիայի հմայքը, նրա ճնշող գերազանցութիւնը:

*) Գարձեալ աշաղրութեան արժանի է գրւածքի խորագիրը. «Գերմանական յաւակնութիւնները Թիւրքիոյ ժառանգութեան վրայ»:

***) *André Chéradame, La Question d'Orient.*

***) *Dr. Paul Rohrbach, Die Bagdadbahn*, էր. Ա:

Ամեն տեսակետով աստիական Ցաճկաստանը հանդիսանում էր գերմանական «փորձերի» համար լուսադոյն միջավայրը:

Ահա թե ինչու ազգի իշխող գասակարգերը — իսկականներ, ազրաբեաններ, խոշոր, միջակ արգիւնաբերողներ, բուրժուական մասնատրականութիւն և ամենից առաջ նրանց բոլորի հրամանատար, ինքը *commissaire-voysageur* թագաւորը, այնքան բուռն եռանդով ու խանդավառութեամբ գրկեցին այդ համեղ պատար, նւիրւեցին այդ թանկագին, խոստումնալի միջավայրի ուսումնասիրութեան:

Ահա թե ինչու «իրապաշտ քաղաքականութեան» (*Realpolitik*) աւհիւրները այն աստիճան ստորացան, քննեցին ու շոյեցին Մարգասպանին, գարշանքի տիղմի մէջ թաթախելով արևմտեան քաղաքակրթութեան դրօշը... Քաղաքակրթութեան բուրժուազիայի ամենամարդ սիրագործութիւններից մէկն էր դա, գուցէ մեծագոյն փաստը նրա բարոյական սնանկութեան... 1898-ին օգոստոսի ամիսին Ֆրանսիայում քննարկութեամբ սեղմում էր Ստրասբուրգի արևմտաթափառ ձեռքը և շատում մտերիմ «բարեկամութեան» արտայայտութիւնները, առանց բնաւ անդրադառնալու «բարոյական սնանկութիւնների» և բոլոր նման վերացական ու ցնորական բաների վրայ Բաւարիան էր, որ կապիտալիզմի ափերիստները շահագործման ընդարձակ վայր էին գտնում և կարող էին յազուրդ տալ իրենց թալանի սիրտակներին: Բաւարիան էր, որ կրօնապի թնդանօթները մեծաքանակ փոխադրւելին գէպի Արևելք, որ *Deutsche Bank*-ը հիմնէր իր մասնաձեռքերը Ցաճկաստանի ծովեզերեայ քաղաքներում, որ Գերմանիայի առևտրական նաւատորմը ծածանեցնէր իր դրօշը Արշիպելագոսի ջրերի մէջ, և որ, վերջապէս, գերմանական շահեկառքերի սուլոցը հնչէր Անատոլիի խոպան դաշտերում, ազգաբարեւոյ կիսափայրենի ժողովուրդներին գալոց յաղթական թատերաժուար տեսնեան աշխարհակալողներին...

Մեծ, անսովոր ճարպկութեամբ և մեթօդով առաջ գնաց «ռեալական քաղաքականութիւնը» *): Նա տես-

*) Ք. Գրան, թիւրքերի և մրցակից պետութիւնների կասկածները շարունակելու համար՝ Բերլինի կառավարութիւնը աշխատում էր բոս կարելու չեղարանալ թիւրքերի ներքին խնդիրների վերաբերմամբ, հետո պահել պաշտօնական միջամտութիւններից, բոս կարելու փոքրացնել նաև իր պաշտօնական ներկայացուցչութիւնը Ա. Պոլսում և թիւրքերի, ուստի այս միայն տնտեսական ներթափանցումը (penetration) իր ծրագրին, գրաւել Ցաճկաստանը՝ իր գերազանց ճարտարապետների, առևտրականների ու արգիւնաբերողների ճիգերով, նրանց յամառ կորովի աշխատանքով: Բերլինը բնաւ չէր հոգում բազմացնելու իր հիւպատոսների և այլ պաշտօնական ներկայացուցիչների թիւը օսմանեան կայտութեան մէջ. այդ թիւը 5—6 անգամ նազ է մրցակից պետութիւնների պաշտօնական ներկայացուցչութիւնից: Ընդամենը երկու գերման ընդհանուր հիւպատոսարաններ՝ Պոլսու ու կրօնապետ և շորս հիւ-

նում էր մի երկիր, որ անսահման հարստութիւններ էր պարունակում իր մէջ, որ կարող էր դառնալ մի վիթխարի, նախանձելի շահաստան, բայց որ վաղուց, դարերից ի վեր մատուած էր մի անսանձ բունկալութեան աւերիչ քմահաճոյքին, աշխատանքը միանգամայն անգամալուծւած, արգիւնագործութեան աղբիւրները ցամաքած... մի տխուր, համատարած, ամայնութիւն՝ ուր բըրգերի, չէրքէզների, թափառական բեզուիւնների աւարտունչ հօրգաները մրցում էին բունկալութեան պաշտօնական ներկայացուցիչների հետ՝ իրենց անյազ ու բնաջնջող սիրտակներով... Ի՞նչ էր պէտք՝ այդ բարբարոս կացութիւնը արգիւնաւորապէս օգտագործելու համար, ի՞նչ էր պէտք ամենից առաջ՝ որպէս զի այդ գոեհիկ, նախապատմական բաօսը վերածւէր նորագոյն արգիւնաբերական միջավայրի, որպէս զի ստեղծւէր նրանից ապահով ու արգասաւոր շահաստան: Ի՞նչ էր պէտք ամենից առաջ՝ որպէս զի գերմանական ազդեցութիւնը ճառագայթէր թիւրքերի վրայ և նախապատրաստէր գալոց բաղձալի տիրապետութեան գեպինը:

Պէտք էր նախ — երկաթ ու շաքար: Պէտք էր նախ հաստատել հաղորդակցութեան զարկեր:

Երկաթուղային արանութիւններ ձեռք բերեց Գերմանիան՝ թե եւրոպական և թե ասիական թիւրքերի մէջ: Նրա ձեռքն ընկաւ 1890 թիւն Մալոնիկ-Մանասիր գիծը 220 կիլոմ. երկարութեամբ: Այս գերմանացիք տիրացան և Անատոլիի ցանցին: Վերջինը մի քանի ճիւղեր ունէր, որոնցից ամենահինը՝ Հայաստանի փաշա-Իզմիլի շինուել է թիւրք կառավարութեան ձեռքով. սկսած տակաւին 1871 թիւից: Աշխատանքները ղեկավարում էր գերմանացի ճարտարապետ Ա. Իլհէլմֆօն Պրեսսել, որին վիճակւած էր նշանաւոր դեր խաղալ բերլինեան «արշաւ» ծրագրի ներքին մէջ:

Հայաստանի փաշա-Իզմիլի գիծը պատրաստ էր 1873-ին. սակայն թիւրքերը, իրենց յոռի վարչութեամբ անկարող եղան — յարասե կերպով շահագործել երկաթուղին: 1888-ին, երբ գերմանական ազդեցութիւնը սկսել էր արդէն «ներթափանցման» իր պրօցէսը, սուլթանական երկու իրատեղով գերմանացի Ալֆրեդ Վառլէլա ձեռք բերեց իրաւունք՝ շահագործելու Հայաստանի փաշա-Իզմիլի գիծը: Բացի դրանից՝ նա ստացաւ 99 տարի ժամանակամիջոցով արտօնութիւն՝ կառուցելու 485 կիլոմետր տարածութեամբ երկաթուղային գիծ՝ միացնելու համար Իզմիլը-Էնկիւրիի:

Ասուլլա գործում էր ոչ իբրև մասնաւոր անհատ, պատոսարաններ՝ Բէյրութ, Չիւսուիա, Մալոնիկ և Կոնիա: Ընդամենը եօթ փոստային բիւրօներ, իսկ կրթիչ զինուորականների թիւը (*instructeurs militaires*), որ առաջնորդ լէգէօն էր, այժմ՝ Իջևէ մի տասնեակի (*Alexandre Ular, La Weltpolitik Allemande et le Monde Musulman, La Revue, 1 Juin 1905*):

այլ իրրև յանձնակատար բերլինեան «Գերմանական Բանկ» (Deutsche Bank) և Շտուտգարտի Württembergische Vereinsbank-ի Այդ թերու հաստատութիւնները մի քանի ամիս յետոյ, 1889-ին հիմնեցին այսպէս կոչուած «Անաուրեան երկաթուղիների սամանեան ընկերութիւնը», որ գտաւ Գերմանիայում իր խոշոր գործառնութիւնների համար անհրաժեշտ միջոցները:

Ձուտ գերմանական այդ ընկերութիւնը արագ-արագ ընդարձակեց իր գործունէութեան գաշտը: 1893-ին նա ստանում էր արտոնութիւն շինելու երկաթուղային գիծ Էսկի-Շէհիրից—Կոնիա և Էնկիրիից—Կեսարիա (Վերջին գծից Գերմանիան յետագայում հրաժարեց):

1896-ին, երբ վերջացած էր Էսկի-Շէհիր-Կոնիա գիծը, Անաուրուի երկաթուղային գերմանապատկան ցանցը բաւական արդէն լայնացած էր.

1. Հայդար փաշա-Իզմիթ	91	կիլոմետր
2. Իզմիթ-Էնկիրի	485	"
3. Էսկի-Շէհիր-Կոնիա	444	"

Այդ բոլոր մասնակի արտոնութիւնները, սակայն ոչինչ էին, համեմատած այն հսկայ նւաճումի հետ, որ յետոյ եկաւ, իրրև արդիւնք գերմանական տնտեսային ձիգերի, թագաւորի, դեսպանների, ընկերութիւնների յամառ և անդուլ աշխատանքի:

Մեր խօսքը Բաղդադի երկաթուղու մասին է, որ պիտի շարունակէր Անաուրուի գիծը Կոնիայից դէպի արաբական խալիֆների հռչակաւոր կենտրոնը և դէպի Պարսից ծոցը:

Այդ մեծ ծրագրի յղացումը և առաջին ուսումնասիրութիւնը պատկանում է նոյն գերման ճարտարապետ Ֆոն Պրեսսելին, որ կառուցել էր Հայդար փաշա-Իզմիա գիծը 1871-ին Փոն Պրեսսելի գաղափարով այդ հսկայ զարկերակը (Ռոսֆոր-Պարսից ծոց) պէտք է անցնէր հետևեալ խոշոր հանգրւաններով. Սեբաստիա, Տիգրանակերտ, Մարդին, Մոսուլ, Բաղդադ, Բասրա և Կովէյա:

Անթիւ խոչընդոտներ պէտք էր յաղթահարել՝ այդ մեծ ծրագրի արտոնութիւնն ստանալու համար: Պէտք էր նախ չէզոքացնել սուլթանի դիմադրութիւնը, ապա և միջազգային դիւանագիտական արգելքները: Բաղդադի ճանապարհի վրայ պատնէշի պէս կանգնած էր նախ Անգլիան, որ ինչպէս տեսանք մեր նախորդ յոդւածներում—տեղիք ուներ անհանգստանալու՝ հանդէպ գերմանական այդ խիզախ արշաւի... դէպի Հնդկաստան:

Մի երկրորդ պատնէշ—Ռուսաստանն էր, որ չէր կարող բարեկամական աչքով նայել հզոր Գերմանիայի այդ յաղթական առաջնադասութեանը՝ իր կովկասեան, հայկական սահմանների մօտ: Բերլինի վեհաժողովում կրած ձախորդութիւնից յետոյ Ռուսաստանը կորցրեց

իր յոյսը՝ գրաւելու երբեքէ Ռոսֆորն ու Գարդանէլը. սակայն նա միանգամայն չհրաժարեց Ռոսանոսիների վաղեմի երազից—ուեննալ մի նաւահանգիստ Միջերկրակն ծովի վրայ եւրոպական թիւրքիան փակած լինելով նրա առջև՝ նա յառեց իր աչքերը դէպի Հայաստան... Տարաւ երկաթուղային իր գծերը մինչև Ղարս և Երևան և այնտեղից յոյս ունի Տարսուի վրայով հասնել մի օր Ալեքսանդրեաի ծոցը, Կիպրոսի դէմ յանգիման *):...

Սակայն, այդ տարածալ յոյսերն ուեննալով հանգերձ՝ Ռուսաստանը նախկին տենդով չէր զբաղւում այլ ևս մերձաւոր Արևելքով, նա ուրիշ մասհոգութիւններ ունէր այժմ, նա ուրիշ, աւելի հոյակապ, նապօչեօնեան ծրագիրներ էր փայփայում... հեռաւոր կամ Ծայրագոյն Արևելքում, և դրա համար հե ի հե շինում էր Անդրսիբիրեան երկաթուղին՝ ֆրանսիական առատաբուխ միլիարդներով:

Ռուսական քաղաքականութեան առանցքը փոխադրուել էր Սև ծովից—Մանջուրիա. եւ այդ հանգամանքը քիչ չնպաստեց Գերմանիայի անկաշկանդ առաջնադասութեանը՝ ասիական ծածկաստանի մէջ: Պետերբուրգի գիմադրութիւնը ընդհանրապէս թող իղաւ, նա սահմանափակեց պահանջելով որ Բաղդադի գիծը հեռու մնայ հայկական վիլայեթներից, ուր նա ինքն էր ստանձնում—Գերմանիոյ աջակցութեամբ իսկ—երկաթուղիներ կառուցանելու միստիօնը:

Հապա Անգլիան Թուում է, թէ սկզբից ի վեր Գերմանիայի անհաշտ ախոյեանը յամառ գիմադրութիւն պիտի ցոյց տար գերմանական այդ վիթխարի ծրագրին: Այդպէս չ'եղաւ, սակայն Մի յայանի ժամանակ բրիտանական քաղաքագետները անտարբեր աչքով էին դիտում այդ ծրագիրը. նրանք թերևս չէին հաւատում, թէ Գերմանիան կարողանար յաղթահարել ճանապարհի հսկայական խոչընդոտները և հասնել Պարսից ծոցին: Եւ իրօք դիւրին բան չէր ծակոտել Տարսուի լեռնաշղթան և հարթել Եփրատի կիրճերը: Մի առ ժամանակ Անգլիան գուցէ նոյնիսկ գոհ էր—ինչպէս ենթադրում է Վիկտոր Բերար—գոհ՝ որ գերմանական այդ ծրագիրը կը գիմագրուէր Ռուսաստանի տենչանքներին, նրա գալոց հնարաւոր ոտնձգութիւններին՝ թիւրքիոյ մէջ **):

Այսպէս թէ այնպէս՝ Գերմանիան ըստ ամենայնի նպաստաւորեց իր առաջնադաս արշաւի մէջ: Աւելի ևս նպաստաւորեց, երբ Անգլիայի ուշագրութիւնն ևս շեղեց մերձաւոր Ասիայից, ուղղելով դէպի հեռուն, դէպի հարաւային Աֆրիկա, ուսկից ոսկու անսպառ հանքերը բորբոքում էին Չեմբերլենների և ջինգօնների

*) F. Delaisi, L'axe de la politique Européenne-La Revue, 1 Nov. 1907.
 **) Victor Bérard, Vers Bagdad, La Revue de Paris, մայիս-յունիս 1907:

ախորժակները Անգլիայի դիմադրութիւնն ևս այդպիսով շատ թող եղաւ երբ քրիտանական առիւծն սթափեց, այլ ևս ուշ էր: 1903-ին ստորագրեց այդ նշանաւոր, պատմական արտոնութեան թուղթը: 1903-ի մարտ ամսու՛մ Արդիւլ Համիդ, մի մանրամասն, վերջնական և վճռական ֆիրմանով տւեց իրաւունք գերմանացիներին— և միմիայն գերմանացիներին— շարունակելու Անատոլոսի գիծը մինչև Բաղդատ և Բասրա:

Ինչ վերաբերում է Ֆրանսիային՝ նա ոչ միայն չդիմադրեց գերմանական ծրագիրներին իրագործման, այլ և շնորհիւ Բերլինի ճարպիկ քաղաքականութեան, նա դարձաւ— բաղդատեան երկաթուղու ձեռնարկի մէջ— գերմանիայի գործակիցը, դնելով իր կողմից դրամագլխի 400/0-ը— մի բան, որ բացարձակապէս անհրաժեշտ էր ձեռնարկի իրագործման համար, քանի որ Գերմանիան սոսկ իր ֆինանսական միջոցներով չպիտի կարողանար գլուխ բերել այն (Բաղդադի երկաթ. գծի շինութիւնը այժմեան հաշուով պիտի նստի մօտաւորապէս 500 միլիոն ֆրանկ):

Կասկածներն ու դիմադրութիւնները չէզոքացնելու նպատակով Ալիշէլմ 11-ի կառավարութիւնը այդպիսով առերևոյթս մ'իջազգային բնոյթ տւեց ձեռնարկին. ներկայումս— *Deutsche Bank* ի տնօրէն Գվինների ասելով *)— Բաղդատեան երկաթուղային Անկերութեան վարչական Բիւրօն կազմած է 27 անդամներից, որոնցից 11 գերմանացի, 8 ֆրանսիացի, 4 օսմանցի, 2 զւիցերացի, 1 աւստրիացի և 1 իտալացի: Սակայն իրօք մեծ աշնորհը մնում է Գերմանիային, *Deutsche Bank*-ը կանգնած է գործի գլուխ և վարչական խորհրդի մէջ տոն տուող գերմանացիք են:

«Բաղդադի ձեռնարկը գերմանական գործ է և պէտք է մնայ գերմանական — ասում է մի այլ գերմանացի հետազօտող *Die Deutsche Bagdadbahn*» վերնագրով իր թրօշիւրի մէջ... Լսելով հեռուից շոգեմեքենայի մոնչոցը՝ արարը և թիւրքը չպիտի մտածեն այլևս ֆրանսիայի մասին, այլ պիտի ողջունեն մեծափառ Գերմանիան... Մի այլ տեղ նոյն գրքի մէջ, աււած է.

«Բաղդադի երկաթուղու կառուցումը ամենամեծ յաղթանակն է Գերմանիայի արեւելեան քաղաքականութեան... Նա գլուխ եկաւ մանաւանդ շնորհիւ *Deutsche Bank*-ի տնօրէն՝ դոքտոր Միմենսի հազազիւտ ընդունակութեան, նրա ձեռնարկու ոգուն Նա է, որ կարողացաւ համաձայնութեան գալ մի խումբ հարուստ և ազդեցիկ ֆրանսիացի կապիտալիստների հետ, որոնց ներկայացուցիչն էր Բանկ Օտտօմանը... Այդ բախտաւոր ձուլումով՝ Բաղդատի ձեռնարկը միջազգային բնոյթ ստացաւ, առանց որի՝ դժւար կը լինէր արտօնութիւն ձեռք բերել Բ. Գունից»:

Ինչպէ՞ս լուծեց ռուսական շահերի հարցը՝ Գերմանիան տւեց ցարի կառավարութեանը՝ պահանջւած բաւարարութիւնը: Հիւսիսային գիծը նա թողցոյ

*) *The Baghdad Railway and the question of British Cooperation. The Nineteenth Century* June 1909.

Հայաստանի կենտրոնները չպիտի մտնէ երկաթուղին «նոյն Գրեմիա» ն զարկել էր ահազանգը այդ խոշոր վտանգի դէմ... Գերմանացիք — ասում էր ռուսական կիսապաշտօն օրգանը— գրաւում են մի երկիր, որ ռուսները մինչև օրս համարել են, իբրև իրենց սեփականը... Երզրումը պիտի դառնայ բազ, խարխու՛ Երևանի վրայ յարձակելու համար... Գերմանացիք կուզեն մրցել ռուսական ցորենի ու նաւթի հետ... Ռուսները հաստատուել են Հայաստանում նրա համար՝ որ այնտեղից իջնեն դէպի Ալեքսանդրետ, հասնեն մինչև Միջերկրականը... Գերմանացիք, վերջապէս, իրենց նօր, Բաղդատեան երկաթուղով պիտի մրցեն Անգլոսիւրիան գծի հետ, որ պիտի շինեն ապագայում... Հնդկաստանի և Հնդկական Ավիանի ուղղութեամբ *):

Դիմադրելու շատ պատճառներ ունէր ցարի կառավարութիւնը, նրա համար բնաւ ձեռնտու չէր գերմանական արշաւը Թիւրքիայում, բայց ի վերջոյ ստիպւեցաւ համակերպել Բերլինն էլ, չափից դուրս չգրգռելու համար իր զօրաւոր դրացիին՝ ծոնց գիծը հայկական բարձրավանդակից դէպի հարաւ: Մենք ասացինք, որ Բաղդադի երկաթուղին— իր սկզբնական ուրւագծով — պիտի անցնէր Էնկիւրիից— Սեբաստիա-Խարբերդ-Ցիգրանակերտ-Մօսուլ: Դա այսպէս կոչւած հիւսիսային գիծն էր, որին Ռուսաստանը կորուկ կերպով հակառակեց: Նա ցոյց տւեց իր հակառակութիւնը նաև երկրորդ, այսպէս կոչւած միջին կամ կենտրոնական գծին, այն է՝ Էնկիւրի-Կեսարիա-Խարբերդ-Ցիգրանակերտ: Պետերբուրգը միաժամանակ յանձնառութիւն ստացաւ սուլթանից, որի զօրութեամբ այդ վերջինը իրաւունք չունի Ռուսաստանից զատ՝ որևէ օտար պետութեան զիջել երկաթուղային գծերը Փոքր-Ասիոյ հիւսիսային և հիւսիս-արևելեան շրջաններում: Եթէ Բ. Դուռը իր սեփական միջոցներով անկարող լինի այդ գծերը կառուցանելու՝ նա պէտք է տայ արտօնութիւնը Ռուսիային:

Գերմանիան ի վերջոյ ընտրեց հարաւային ուղղութիւնը: Փոխանակ շարունակելու Էնկիւրիի գիծը դէպի Սըլմազ կամ թէ դէպի Կեսարիա— այդ երկրորդ ուղղութիւնը, անկախ ռուսաց դիմադրութիւնից՝ ունէր նաև տեխնիկական ու ֆինանսական խոշոր դժւարութիւններ — նա իջաւ Կօնիայից դէպի Ադանա, ուսկից պիտի դիմէ դէպի Մօսուլ, Բաղդատ և Պարսից ծոց:

Այդպէս ահա իրագործեց Ալիշէլմեան թագաւորութեան մեծագոյն երազը՝ իրագործեց նա, շնորհիւ բացառիկ, նպաստաւոր հանգամանքների, շնորհիւ գլխաւորապէս այն իրողութեան՝ որ Երզրդի մէջ երկու նախ-

*) Քաղ. *Questions diplomatiques et coloniales* հանդէսից, 1 յունւար 1907:

կին տիրապետող ազդեցութիւնները — ուսականը և անգլիականը — նւագել էին, գրեթէ մարել... Ծայրագոյն-արեւելեան և հարաւ-աֆրիկային գերիշխող մտահոգութիւններէ, ծրագիրներէ ու պատերազմների հանդէպ գերմանիան ի գործ դրեց այդ նշանաւոր, պատմական շրջանի մէջ իր բոլոր գիւտագիտական կարողութիւնները, իր բիսմարկեան մակիավէլիզմի և չոր, գործնական էգոիզմի ամբողջ պաշարը: Եւ նւագագոյն գեր շխաղաց այդ հանդարտիկ ու հսկայ նւաճումի մէջ՝ թիւրքական հռչակաւոր „բախշիշը“... Տիրահամբաւ իզգէթը, Երզրզի այդ հզոր ու ազդեցիկ մտերմը, որ անարգաբար փախուստ աւեց Յեղափոխութեան որոշը լսելուն պէս, — ահագին գործ է տեսել „Բաղդատեան ձեռնարկի“ պատմութեան մէջ, ինչպէս և բոլոր նման պատմութիւնների մէջ, զիջելով անդադար եւրոպական ոսկիները իր անյատակ սնդուկներում:

Յնծութիւնը ընդհանուր էր գերմանիայում: Բաղ-գատի երկաթուղին նոր դարագլուխ էր բաց անում երիտասարդ կայսրութեան մեծագործ պատմութեան մէջ: Գերմանական մամուլը չէր թագցնում իր բերկ-րանքը և ամբողջ շարաթներով „Բաղդադ“ը, „Միջագետք“ը հօլովում էին նրա էջերում: Գերմանական բուրժուազիան, *Weltpolitik* ի սրընգահար գերմանական ինկերութիւնը, բերկրանքով նշմարում էին հօրի-զօնում՝ Հայրենիքի յաղթական հեզեմօնիան, գերիշխանութիւնը... տարածւած էնկիւրիի, կօնիայի, Ադա-նայի, Գիարբեկիւրի, Մօսուլի, Բաղդադի լայնարձակ վերայէթների վրայ...

Տեսնենք այժմ կառուցելիք երկաթուղու հաւանա-կան անգրագարձումները՝ ժողովուրդների և ամբողջ պետութեան ճակատագրի վրայ:

չունեցաւ: Բայց նա ուներ և զգալի առաւելութիւններ Յիսուսեան կրօնի հանդէպ: Աւելի պարզ և աւելի ժո-ղովորական՝ նա դրժեց սկզբից ի վեր բրիտանական զօգմերի վերանցական բնաւորութիւնը, խտտաբարոյ տակեւիզմը, ճգնութեան ու ապաշխարութեան դաժան պատուիրանները, գրկեց կեանքը նրա վարդագոյն կող-մերով, շեշտեց նրա բնական, հաճոյապաշտ պահանջ-ները, մարմնաւոր, զգայական ախորժակները — և այդ պատճառով ծաւալեց այնքան ուժով ու արագութեամբ, գտաւ այնքան խանգաժառ ընդունելութիւն՝ պարզ, նախ-նական ժողովուրդների մէջ: Պարզ էր զօգմը, պարզ էր, մատչելի ու կենսական — նաև մօրալը, բարոյախօսու-թիւնը:

Այստեղ ևս, սակայն, անելու ենք մի փոքրիկ վե-րապահութիւն: Այդ ծայրայեղ պարզութիւնը — մէկ վերացական Ասուածութեան գաղափարով — և այդ զգայապաշտ, հաճոյամոլ բարոյախօսութիւնը՝ գալոց դրախտի հեշտանքներով, երանութիւններով, այդ բոլորը հիանալիօրէն յարմարեցրւած է, ինչպէս ասում է Փօն Հարտման, միմիայն յետաձեաց և խոպան ցեղերի կեանքին ու պահանջներին... Իսլամի կրօնական աշխար-հահայեացքը չունի բնաւ խորութիւն ու ինքնուրոյնու-թիւն, որպիսին յայտնի չափով մատնում են բրիտան-նէութիւնն ու մոսկիտականութիւնը: Երկուսի խանուրդ է նա, երկուսի ընդօրինակումն, բայց առանց ստեղծա-գործելու և խորացնելու նրանց երկուսի շօշափած պոր-լեմները, առանց բերելու մի նոր տարր, մի նոր մօմենտ՝ մարդկութեան կրօնական գիտակցութեան մէջ *):

„Փանատիկոսացած հրէութիւն“ — ասում է Հեգել իս-լամի մասին: Այդ կրօնը այն աստիճան անինքնուրոյն է մեծ փիլիսոփայի աչքում, որ սա գրեթէ չի էլ զբաղ-ւում նրանով իր „Պատմութեան փիլիսոփայութեան“ մէջ, ուր ահագին տեղ են բռնում միւս կրօնները:

Իսառնուրդ է Ղուրանը — նաև դրական ու բացասա-կան պատգամների, լոյսերի և սուերների գրական կող-մերի վրայ բաւական արդէն ծանրացել ենք „Պրօշակ“ի № 7 — 12-ի տեսութեան մէջ, այժմ հարկ է վեր հանել ս աւ եր ն եր ը:

Նա ևս, այո, հրահանգում է բարիք գործել և դատապարտում է չարք. նա ևս ըմբոստանում է հա-սարակական մի շարք տարկանոնութիւնների, արատների դէմ, նշաւակում է վաշխառութիւնը, գողութիւնը, սպա-նութիւնը, մերժում է կաստերի գոյութիւնը, բարոգում է հաւասարութիւն: Սակայն, այդ մեծ հրահանգ-ները, և մանաւանդ վերջինը, կիրառելի են հ աւ ա տ ա ց ե ա լ ն եր ի շրջանում՝ միայն: Ն ր ա ն ք են միայն հ աւ ա ս ար իրարու միջև... Թէև այդտեղ

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Շ Ա Ր Ժ Մ Ա Ն

Դ Ա Խ Ա Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

II

ԿՐՕՇԱԿ ԱՆ ՀԱՎԱՍՏԱՐՈՒԹԻՒՆ

Բ.

Իսլամ և Երիտմեծիւն — Ղուրանի լոյսերն ու սուերները. — Ինֆո-կրաիզմը և հաւասարութիւնը՝ միմիայն „հաւասարակների“ օրջա-նում. — Ձեռք. — Հալաստութեանց միկնութիւնները. — Անհամբժոգութիւնը՝ արարական սրտապետութեան օրով. — Օմար՝ երուսաղէմի պաւերի սակ. — Իսլամի ռազմական օգին — Մարդ մեկնանքի լեզուները. — Ֆասալիզմ և միլիտանցութիւնը. — Իսլամի և արարական խղամակը-րութիւնը. — Արեւմուտք և Արեւելք. — Երկու նախամարտ ուղղութիւն-ներ. — Ղուրանը՝ հրամանատար և կանոնաւորիչ ամբողջ կեանքի. — Իսլամ և պրօգրէս. —

Իժէ բրիտաննէութիւնը գէթ սկզբունքով հռչակել էր բոլոր մարդկանց հաւասարութիւն ու եղբայրու-թիւն, Իսլամը այդ թէօրիական առաքինութիւնն ևս

*) Ed. von Hartmann: Das Religiöse Bewusststien der Menschheit, էջ 542—43.

ևս կայ բացառութիւն, ի գա կան սեռը, որ շատ հեռու է տղամարդկանց հետ հաւասարելուց: Բարւոյ և շարի հասկացողութիւնների վերաբերմամբ՝ մահմեդական ասուածարանների մէջ տիրում է խոր տարաձայնութիւն: Միայն սրբազան ասացւածքը կայ: Դրարի էլ լուս է այն ամենը, ինչ որ մահմեդականները ընդհանրութիւնը դիտում է իբրև այդպիսին՝:

Այլ է մօրալը՝ «անհաւատների» վերաբերմամբ: Այդտեղ Մահմեդի աւետարանը հակասական է մերթ հաշտարար և զիջող, մերթ թշնամի և շանթող: Այդ է պատճառը, որ նա կարող է բուրբիւն էլ գոհացումն տալ. — և՛ նրանց՝ որոնք Ղուրանի մէջ փնտրում են համբերողութեան ապացոյցներ և՛ նրանց որոնք հռչակում են Մահմեդին անհամբերողութեան քարոզիչ: Այդ գուալիզմը, երկուութիւնը միմիայն Ղուրանին չէ վիճակւած: Մենք այն գտնում ենք նաև քրիստոսի վարդապետութեան մէջ: Այդտեղ ևս իրենց պաշտպանած թեզիսներին ապացոյցներ կարող են գտնել գաղափարական ամենածայրայեղ հակոտնեաները — և ժամանակակից սօցիալիստը և ժամանակակից բուրժուան, միապետականը և կղերականը: Իւ նոյնիսկ երկու տեսակ քրիստոնէութիւն կայ — մէկ՝ հիմնարկի քարոզածը, մէկ էլ՝ նրա յաջորդներինը: Կղերական քրիստոնէութիւնը, չը նայած մի շարք անհարգատխառնուրդներին, էապէս առկա վարական էր և համարեա կօմոնիստ. առաջին քրիստոնեայ համայնքները ապրում էին մեծ մասամբ կօմոնիզմի — թէկուզ և բիրտ, նահապետական կօմոնիզմի — աէթիմի տակ. չէր ճանաչում մասնաւոր, անհատական սեփականութիւնը: Բայց ո՛ր սլացաւ այնուհետև Յիսուս նազովրեցու այդ մաքուր և առակաշունչ ոգին... Ժամանակը խեղաթիւրեց այն և այսօր նա դարձել է պաշտպան հարստահարութեան ու շահագործման, նեցուկ մեծերի ու հզօրների, անգամ կարմրագգեստ դահճապետների...

Նոյն ճակատագիրը կրել է մասամբ և Իսլամը: Եթէ սկզբում, իր հիմնարկութեան օրերի մէջ, նա ունեցել է մի քանի ազնիւ, համակրելի ներշնչումներ — ապա յետագայում իրականութեան տարրալուծող կոհակների մէջ նրանք ևս մաշել, խեղաթիւրել են և հեռաւոր երկրպագուները, օսմանցիք, հանդէս են եկել, սպառազինւած՝ գրեթէ միայն Ղուրանի բացասական, հակահասարակական հրահանգներով: Մի կողմն են թողել լոյսի հազւագիւտ ցոլքերը և փարել են... միայն սաւեբընբերին: Յետ են մղել մարդավայել քաղաքականութիւնը «գիւալուրների» վերաբերմամբ և դուռտել են ատելութիւնը, հալածանքը...

Եթէ հանդիպէք անհաւատների — ասում է Մահմեդ իր Ղուրանի մէջ — կուեցէք նրանց դէմ, մինչև որ մեծ ջարդ առաջ բերէր, ապա շղթայեցէք գերիներին... Այդպէս է երկնքի հրամանը... Նրանք, որոնք կը նահատակին հաւատի

համար կուեցի, շպիտի մեան առանց հատուցման... Ասուած նրանց կը մօցնի երանութեան պարտէզի մէջ...

«Իսկ դժոխքը — անհաւատների բնակավայրը... Ամենակարողը կը ջնջէ նրանց...»

Երկնքի հոփանաւորութիւնը ապահով է հաւատացեալների համար, իսկ անմաքուրները բնաւ չունին հոփանաւոր:

«Վ՛ հաւատացեալներ, ես ձեզ հրաւիրում եմ զոհարելի ձեր հարստութեան մի մասը սրբազան պատերազմի համար:

Նրանք, որոնք չեն հաւատում Աստուծու և նրա տաքեալին, թող նրանք իմանան, որ մենք բացել ենք կրակարաններ անհաւատների համար՝ *)...»

Ահա բառեր, որ ելեբարական հոսանքի պէս ցնցել են ծայրէ ի ծայր հսկայական զանգւածները և դարեր շարունակ իրենց աղէտալի ներգործութիւնն են ունեցել թէ՛ Իսլամի և թէ՛ մանաւանդ նրա հպատակ քրիստոնեայ ժողովուրդների բախտի վրայ:

«Զհարը», սրբազան պատերազմը տիրական մտահոգութիւնն է այդ կարմիր աւետարանի մէջ, որ ամբողջապէս տոգորւած է ռազմական ոգով, արշաւելու, կուեցու և ջնջելու սրամազրութեամբ:

Կան, ասացինք, դրա հանդէպ և մի քանի հաշտարար պատգամներ... ասես՝ ահամայ մի սուրբ ու մեծարանք, հատուցած մի ուժեղ ու հակառակորդ կրօնի... Այդ մի քանի հաշտարար ֆրագները մեծ դեր, ի հարկէ, չեն խաղացել անցեալի մէջ, ուր գրեթէ միշտ գերակշռել է հալածողական սրամազրութիւնը **)... Բայց

* Le Coran, trad. p. M. Savary (Paris 1821) էջեր 265—66:

** Գիտնական ճանապարհորդ Վիլեամ Պալգրաֆ, որ Նապօլէոն III-ի օրով և նրա խրախուսանքով դնացել էր ուսումնասիրելու իսլամիզմը Էնկղատանում, Պարսկաստանում, Թիւրքիայում և նոյնիսկ Արաբիայի սրտում, յայտարարում է, որ Մահմեդի ամբողջ քաղաքականութեան զբաղապատճառը նրա խորունկ ատելութիւնն էր դէպի քրիստոնէութիւնը: Գիտնական անգամ, ասում է Պալգրաֆ, Մահմեդը մերժեց իբրև անմաքուր մի բնակելի լուս այն պատճառով, որ նա համարում էր քրիստոնեայ աշխարհի մէջ կրօնական մի սրբութիւն, խորհրդանշան միութեան, բարեկամութեան ու քաղաքակրթութեան, խորհրդանշան հասարակութիւնների և բնատնիքների...

Նոյն պատճառով պէտք է բացատրել և Մահմեդի ատելութիւնն ու զարշանքը դէպի քանդակները, արձանագրութիւնը, պատկերներն ու զարդարանքները, որոնք անբաժան յատկանիշներն են արեւելեան քրիստոնէութեան, ինչպէս վկայում են յոյն ու հայ եկեղեցիները: Մարգարէն դատապարտեց նրանց անողոր խտուրթեամբ և ջանաց ներշնչել մուսուլմաններին մի սուրբ զարշանք դէպի այդ պիղծ զարդարանքները: Նմանապէս և գանգալն երբ անէճքի, անաթեմայի երթարկւեցին ոչ այն պատճառով՝ որ իբր թէ նրանք խանդարում են հրեշապկների բուռը, այլ սրովհետև նրանք ամենուրեք գործածում են հակառակորդ դաւանութեան մէջ: Վերջապէս, նոյն շարժառիթով՝ Մահմեդ դատապարտեց երաժշտութիւնը, իբրև խաւարի սղինների մի և յղացումն, որ կուեցու է մարդկութիւնս կործանելու: Այդպիսով նա կանխադէս վաւերում էր այն գեղեցիկ խօսքերը, որ Շէքսպիրը գրել է Լորենցոյի բերանում. — «նա որ չունի իր հօգու մէջ ոչ մի երաժշտութիւն, նա որ անմատչելի է

Ղուրանի այդ հաշտարար պատգամներին վերապահուած է, ի շարս նրա միւս գրական, մարդկայնական ֆորմուլաների, դեր խաղալու ներկայում և ապագայում, երբ մահմեդական նորակառոյց սահմանադրութիւնները պիտի ձգտեն համաձայնեցնել Մահմեդի կրօնը եւրոպական քաղաքակրթութեան հրամայականների հետ...

Ինչպէ՞ս են բացատրուում «հաշտարար» հրահանգները «անհաւատներին» վերաբերմամբ։ Աւշագրաւ է 17-րդ դարի ճանապարհորդ Ռիկօի կարծիքը Ղուրանի այդ դուալիզմի, այդ հակասական երկուութեան մասին. մի կարծիք, որ կրկնում են և ուրիշները։ Քանի դեռ Մահմեդի տիրապետութիւնը թող էր — ասում է Ռիկօ — նա քաղցրութեամբ էր վերաբերում քրիստոնեայ ժողովուրդներին, և մինչև իսկ նրանց հետ կապած մի դաշինքի մէջ խոստանում էր չը հալածել իր իշխանութեան սահմաններում ապրող քրիստոնեաներին, աւելի անգամ չ'առնել նրանցից, չը դիմել բռնի կրօնափոխութիւնների և այլն. խոստանում էր կատարել համերաշխութիւն քրիստոնեաներին և ասում էր.

«Մի անհաւատներ, եթէ դուք չէք պաշտում իմ պաշտածը, թող ձեր կրօնը ձեզ մնայ և իմ՝ ինձ»:

Բայց հէնց որ ամրապնդեց իր դիրքերը, ուժեղացաւ — նրա վերաբերմունքը հիմնականապէս փոխեց. նա դարձաւ գրգռիչ ու ամբարտաւան, գրեց Ղուրանի երկու ծանօթ գլուխները «Սուր» և «Կուի», ուր ասում էր.

«Նքր հանգիպէք գիպուորների, կորեցէք նրանց գլուխները, սպանեցէ՛ք, գերեցէ՛ք, կապեցէ՛ք, շղթայեցէ՛ք, մինչև որ յարմար դատէք ազատութիւն շնորհելու նրանց, կամ թէ փրկանք վճարել տալու. և մի դադարէք հալածելու նրանց, մինչև որ վար դնեն իրենց զէնքերը և հպատակեն ձեզ»:

«Հպատակելուց» յետոյ, Մահմեդ ընդհանրապէս խնայել է քրիստոնեաներին:

Պատմութիւնը արձանագրում է մահմեդական անհամբերողութեան փաստեր՝ նաև վաղեմի, արաբական տիրապետութեան օրերով։ Այն բոլոր բացառիկ օրէնքները, որ սահմանել են օսմանցիք Հայաստանում ու միւս քրիստոնեայ երկրներում և որոնց մասին երկարօրէն խօսեցինք նախընթաց գլխի մէջ, — նրանք գրեթէ բոլորն էլ գալիս են հին դարերից, մահմեդական արաբներից։ Վաշինգտոն Իվրինգ իր «Successors of Mahomet» գրածքի մէջ նկարագրում է իսլամի ոգին, նախ քան օսմանցոց թատերամուտը, նկարագրում է այն պայմանները, որ Օմար գրել էր Երուսաղէմին՝ նրա կապիտուլացիոնի, անձնատուութեան ժամանակ, — պայմաններ՝ որ յետոյ դարձան մի տեսակ մօզէլ, կա-

ղապար մահմեդական իշխողների համար՝ իրենց ամեն մի աշխարհակալութեան միջոցին:

«Քրիստոնեաներին արգելում էր շինել նոր եկեղեցիներ՝ նւաճւած (Երուսաղէմի) հողի սահմաններում, Եկեղեցիների գուները պէտք է միշտ բաց մնային ուղևորների առջև և մահմեդականները ազատ մուտքի իրաւունք ունէին օր ու գիշեր։ Չանդերը պէտք է հնչէին կամացուկ, մեղմաձայն, բայց երբէք զօղանջէին։ Այ մի խաչ չպէտք է տնկէր ժամերի վրայ և ոչ էլ ցուցադրէր փողոցներում։ Քրիստոնեաները չպէտք է աւանդէին Ղուրանը իրենց զաւակներին, ոչ էլ խօսէին հրապարակով իրենց կրօնի վրայ, ոչ էլ փորձէին կինւորագրելու համախոհներ, ոչ էլ արգելէին իրենց կրօնակիցների իսլամացումը։ Նրանք չպէտք է հազնէին մուսուլմանի զգեստ, ոչ էլ գլխարկ, ոչ էլ շալկէին իրենց մագերէ մուսուլմանի պէս, ոչ էլ սղջունէին նրա ձևայի, ոչ էլ կրէին մուսուլման անուն։ Նրանք պէտք է ստրի կանգնէին մուսուլմանի մտնելուն պէս և պէտք է մնային ոտքի վրայ, մինչև նա նստէր։ Նրանք պէտք է սնուցանէին, պահպանէին ձրիաբար և երեք օր ամեն մի մահմեդական ուղևորի՝ Նրանց արգելում էր գինի վաճառել, զէնք կրել և թամբ գործածել ձի հծծնելիս» *):

Ահա այն դրականներ, նւաստացուցիչ պայմանները, որ Իսլամը դրել էր հպարտ և ընկճւած Երուսաղէմին։ Եւ նոյն դոժման, այլասեռող պահանջները դրել են միշտ մահմեդական բռնաւորները իրենց նւաճած քրիստոնեայ ազգութիւններին:

Օսմանեան ցեղը նոր ոչինչ չէր հնարում իր սրի առջև փուռած Բիւզանդի ու Հայաստանի մէջ. նա կըրկնում էր իր համակրօն և ռազմապաշտ նախնիներին, պատւաստում էր նրանց տարամերժ աւետարանը, նրանց մոլեռանդ, ստրկացուցիչ օրէնսդրութիւնը։ «Կրկնում էր» — գերազանցելով։ «Պատւաստում էր» — աւելի ուժգին շնչտելով այդ տարամերժ, խարոզկան ոգին, աւելի ևս լարելով թունաւորելով քրիստոնեայի ու մահմեդականի յարաբերութիւնը... և դրանով իսկ մղելով աստիճանաբար ինքզինքը դէպի քաղաքական ու սօցիալական տարալուծում, դէպի անկում...

Արաբներն ևս անկարող եղան հաստատելու յարստե տիրապետութիւն. իսլամական դաւանանքը իր երկայարի բնաւորութեամբ և իսլամ օրէնսդրութիւնը՝ նրանց ձեռքում ևս միջոց եղան ծաւալումի, ապա և անկումի:

Արդէն իսկ — ասում է Կրէմեր — դեռ արաբական պետական կեանքի պատրիարքալ շրջանի մէջ — Օմարի մահից յետոյ — երկու մեծ, հաւասարազօր մղիչներ կային այդ պետական գոյութեան ծոցում, երկու մղիչներ, որ իրարու հետ հակամարտելով, պահպանում էին մի առ ժամանակ հաւասարակշիռ. մէկը բղխում էր ազնիւ, վեհանձն բնազդից, կրօնական ցնորքներով թեւաւորւած տենչանքից՝ իրականացնել մեծ գաղափարը, ի մի ձուլել բոլոր արաբներին, իրրև ազատ և հաւասար եղբայրների՝ մէկ ընդհանուր ու հոյակապ կրօնա-զին-

մում նւագայուն հնչիւնների ներդաշնակութեան համար, նա ընդունակ է դաւաճանութիւնների, ռազմադաւերի ու բռնութիւնների։ Նրա սրտի շարժումները արևուր են, գերեզմանային, որպէս գիշերը... (W. Palgrave, Une année de voyage dans l'Arabie centrale).

*) Armenia, A historical sketch, by an Old Indian. էջ 89:

ւորական համայնքի մէջ Միւսը, հակադիր հոսանքը, արբած իր աջողութիւններով ու նւաճումներով, միշտ աւելի և աւելի խորասուզեց աւազակութեան ու աշխարհակալութեան յարածուն տենդի մէջ *)

Այդ երկրորդ հոսանքը ի վերջոյ գերակշռեց և տարաւ ամբողջ օրգանիզմը դէպի կործանում

Այդ նոյն երկրորդ հոսանքն էր, որ շեշուեց առանձնապէս օսմանեան օրգանիզմի մէջ և այդտեղ ևս ունեցաւ մօտաւորապէս նոյն աւելիչ, ճակատագրական հետեւանքները...

Կարելի է ասել, իսլամը աւելի ևս ուժ աւելց օսմանցիկների մի շարք բացասական, հակակուլտուրական գծերին, որ նրանք արդէն ունէին առաջ, իբրև սաղմիկ, աւարառու մի հօրդա: Մահմեդի կրօնը բնաւ չխրատուեց այդ առողջ կենսաթարմ, աշխարհակալող ցեղի առաջադիմութիւնը, կուլտուրական նախաձեռնութեան օգին, արդիւնարար աշխատանքը, ընդհակառակը, աւելի ևս խորասուզեց նրան լեթարգիական բնի մէջ, անշարժութեան ծոցում...

Հրահանգներ կան այդ կրօնի մէջ, որ կարծես մատնում են նոյնիսկ որոշ հակակրանք՝ անգամ դէպի տրեստեսական կեանքի ու առաջադիմութեան տարրական անհրաժեշտութիւնները: Այդպէս, օրինակ, նաւարկութիւնը, առևտուրը, երկրագործութիւնը, շատ էլ յարգի չեն Ղուրանի մէջ: Այդտեղ ասւած է. «Ով որ երկու անգամ նաւ է նստում ծովի վրայ, անհաւատ է»: Մի այլ տեղ. «Հրեշտակները չեն այցելում այն տունը, որի մէջ կայ մի արօր»:

Թուում է թէ այդ բոլոր պարապմունքները անարժան են սեպւել Մարգարէի կողմից, անարժան իսլամ հաւատացեալներին. թուում է թէ այդ Մարգարէի միակ մահահոգութիւնն է եղել՝ մարդել իր լեգիօնները սոսկ հաւատի և սրբազան պատերազմի մէջ, կենտրոնացնել նրանց ուշքն ու միտքը այդ երկու իրողութիւնների վրայ և հեռու վանել այն բոլոր մարգանքները, որոնք կարող էին այս կամ այն ձևով ցրւել այդ կենտրոնացած ուշադրութիւնը, բաժանել այդ խտացած կորովը հաւատացեալներին...

Կրօն և ջհադ — անհրաժեշտագոյն և գերագոյն պարտաւորութիւնները... Երբեմն նոյնիսկ թուում է թէ երկրորդը գերակշռում է և յարմարեցնում առաջինի հրահանգներն ու ծէսերը իր հրամայական պահանջներին... Դիտեցէ՛ք միայն այդ խորհրդաւոր, զինւորական հանդիսաւորութիւնը, որ տրւում է կրօնական արարողութիւններին, այդ կարգապահ լեգիօնները, որ խոնարհագին տարածում են գետնի վրայ՝ ասես տրւած ազդանշանով, այդ պարբերական և պարտադիր աղօթքները, նամագ-

*) A. von Kremer, Geschichte der herrschenden Ideen des Islams. էջ 335:

ները, որ կատարւում են ամեն օր մի քանի անգամ, այնքան կոյր հնազանդութեամբ ու դիսցիպլինով... այդ բոլորը նախատաճած և զօրաւոր մի սխտեմի թարգման է, արտայայտութիւն, մի սխտեմի՝ որ նպատակ ունի շնորհակալել և գերել հաւատացեալների երևակայութիւնը, դաստիարակել նրանց միտքը զինւորական ուղղութեամբ, ստեղծել մարդ մեքենաներ — անպայման, ստրկական հնազանդութեամբ — որ պատրաստ լինին ազդանշանը լսելուն պէս՝ բեմ նետուելու արիաբար և անտրտունջ՝ մղելու «գիւղութի» դէմ սրբազան պատերազմը, թափելու արիւնը «աստուածային դատի» համար...

Իսլամը — մի հսկայական զօրանոց: Ղուրանը — միլիտարիզմի մի գերազանց ձեռնարկ...

Այդպէս էր նա երբեմն, Մարգարէի ու արաբների տիրապետութեան օրով. այդպէս է նա և ցայսօր: Եւ այդ սարսփելի իրողութիւնը դարեր շարունակ ցուազինօրէն անդրադարձաւ միւս, այլակրօն ցեղերի վրայ:

«Հասարակութիւններ» երբէք չ'եղան հաւատացեալների այդ բազմամիլիօն զանգւածները, այլ միայն մարդմեքենաների ողնազուրկ համախմբումներ: Ազգայնութիւն երբէք նրանք չկազմեցին, այլ միայն կրօն և միայն «համայնք հաւատացեալների»: Ահա պատմութեան մի ահագին տարկանոնութիւնը, նրա մեծագոյն պատուհաններից մինը...

Մահմեդական Կօլօսի այդ սրբաշաւ աճումն ու տարածումը, յիբաւի, իր նմանը չունի մարդկային պատմութեան մէջ և Մահմեդը, որ ստեղծեց արաբներից զիւն ուրն երի մի ազգութիւն, կարող էր գուցէ դեռ շատ ծաւալել իր իշխանութիւնը, կարող էր թերևս դարձնել այն՝ մի երկրորդ հոմէական կայսրութիւն, եթէ փոքր ինչ բանաւոր և տանելի սխտեմ իշխէր իսլամական բաղաբականութեան մէջ:

Զինւորների և աղօթողների ազգութիւն... Այդպէս — գրեթէ բոլոր իսլամադաւան համայնքները: Անհատը կառարելապէս կուլ է գնում նրանց մէջ, թագաւորում է մարդմեքենան: Անկամ, անգիտակից մի խամաճիկ, մի ավտօմատ, որ գիտէ միայն բացարձակ, դիակնային հնազանդութեան օրէնքը, որ վարժւած է միայն կոյր, անպայման, մեքենական կարգապահութեան, բայց որ չգիտէ մտածել, բարձրանալ իր երամ-զանգւածի մակերևութից, դուրս նետուել բարացած դօգմերի ու սովորոյթների շրջանակներից, բնադատել, հարւածել, յեղաշրջել... Քննադատական միտքը, որ մէկն է — և թերևս մեծագոյնը — արևմտեան բաղաբակրթութեան պարծանքներից, որի զարգացման հանգրւանները համաշխարհային պրօգրէսի, առաջադիմութեան հանգրւաններն են, բնադատական միտքը, որ հետզհետէ բարձրանալով կոպիտ նախապաշարուածների ու սնապաշտութիւնների ճահիճներից, ծնունդ աւելց էւրոպայում խղճի ազատութեան դաւանանքին — այդտեղ,

մասնեզական արեւելքի մէջ, նա միանգամայն անդամա-
լուծել էր դարերի ընթացքում, հաշկանդւել էր խաւ-
մական Փատաւի գմի ու Փանատի գմի խեղ-
դուկ մեծոգրութեամբ

Գանատիգմ... և Փատաւիգմ... Մոլեռանդութիւն և
ճակատագրականութիւնը կրկու ազգակից գաղափար-
ները ոչ մի ուրիշ կրօնի մէջ չեն հաստատել արեւմտ
մտերիմ համակենցող, ինչպէս այդտեղ, իսլամի մէջ
դիտւում՝ բոլոր արգէն իսկ նշանակում է համա-
կերպումն, նշանակում է կոյր, մոլեռանդ, ճակա-
տագրական հնազանդութիւն՝ Աստուծոյ և բոլոր գեր-
բնական Ֆէախներին Մարդիկ, ըստ Մարգարէի, նա-
խասահմանած են յաւիտենական երջանկութեան կամ
անբախտութեան, դեռ երբ գանուում են մօր արգանդի
մէջ, Գոհասուն, որ առհասարակ ջերմ համակրանքով
է խօսում մասնեզական կրօնի ու պետութեան մասին
որ երկար տարիներ ուսումնասիրել է իսլամ մարգհու-
թիւնը, հետեւեալն է վկայում մասնեզական Փատա-
ւիգմի առթիւ.

Չնայեան, սուում է, գործարներ իսկայի մեկութիւն-
ներին (մասնեզ. օրենքի վերաբերմամբ), որոնք սահմանափա-
կում են նախասահմանութեան գոգմը, — մարերի վրայ տե-
րում է մի նախազարմարում ջրեթէ ամբողջ ազգը դուա-
նում է անփոփոխելի մի ճակատագրի սկզբունքը, սահմանած
երկրի վճիռներէ մէջ, և ազատ կամքի գործադրութիւնը
ընդունում է միայն թող շափերով ինչ ժողովուրդը և թէ
թագուորները տողորում են այդ «ճակատագրով» նա ազ-
գում է թէ իրաքանչիւր անհատի մասնաւոր բայերի և
թէ հասարակական մարմնի հարմային գործողութիւնների
վրայ Այդտեղից է առաջանում այն լեթարգիական թմբու-
թիւնը, որի մէջ ապրում է մուսուլման Ազգը և այն կա-
տարեալ համակերպումը, որով նա սանում է — առանց եր-
կար ու բարակ բնութիւնների — ամեն տեսակ ճակտը անց-
քեր, հարմային գծրախտութիւններ, Ամեն բան վերադրելով
Յաւիտենականի գերադոյն կամքին, մի երկնային ու աներե-
ւոյթ ձեւի, որ հրամայարար կառավարում է և իրա-
քանչիւր մասկանացուի բայերը, և՛ քաղաքական կազմա-
կերպութեան ընթացքը, նա (մասնեզական ազգը) զանց է
սանում բանականութեան միջոցները, առողջ գառտողու-
թիւնը... Իր սպանողին, իր գծրախտութեան հեղինակին՝
մասնեզականը գրում է, որպէս գործիք «նախախնամու-
թեան ձեւքում» որը գործադրում է ճակատագրի անզրդ-
ւելի վճիռը. մի վճիռ՝ որ նրա կարծիքով, գրւած է ճակատի
վրայ, նախ քան ծնւելը» *).

Ահագին է ճակատագրի, «զամեթի» ուժը Ահագին
է և նրա հակամարտ, դիմադրական գորութիւնը —
համակերպումը, Թող այդ վերջինը լինի սոսկ
կրաւորական. նա դարձեալ մնում է մի ամենհի
ուժ, որով իսլամը լեռներ է շարժել... Եւ սակայն,
այդ ուժի վրայ յենւելով, իսլամը քողովութեամբ մղել է
միայն իր գոյնութեան պայքարը, բայց երբեք
քաղաքակրթութեան... Կոյր զկուրայն հնա-
զանդւելով կրօնական և աշխարհիկ քուրմերին — կրօնի
մէջ Աստուծութեան գաղափարին, քաղաքական

* J. Ohsson, Tableau général de l'Empire Otto-
man, հատ 1. էջ 57.

կեանքի մէջ՝ Պետութեան գաղափարին — մշակե-
լով, ծայրագոյն կատարելագործման հասցնելով զուս
հօրդային, երամական դիւցիպլինը, — մասնեզական մարգ-
հութիւնը յամուեցաւ մշտապէս այն յետամնաց վի-
ճակում, որ Ապեններ անանում է ընկերաբանական իր
սխտածի մէջ «մի ի ի տարի գմի շրջան» — մի շրջան,
որ հակագրում է «ի ն գ ու ս տ ր ի ա լ ի գ մ ի ն»
կամ ճշմարիտ յառաջդիմական հոսանքին, տնտեսա-
կան ու քաղաքական թախքներին ու ազատութեան, ան-
հատների ու խմբութեան գիտակցական գործունեու-
թեան... Մասնեզական աշխարհը մնաց միշտ այն մուս-
տան սկզբունքը, այն գորշ, դիմազուրկ, միտպազող զանգ-
ւածը — որի մասին քիչ առաջ ակնարկեցինք — ուր չկան
արգասաւոր հակամարտութիւններ ու բաղխութեան, ուր
անհատը արժէք չունի և կյանում ու կորչում է աե-
սակի մէջ — ինչպէս որ այդ տեղի ունի կենդանական
աշխարհում — ուր չկայ տոկուն, համբերատար, արդիւ-
նարար աշխատանք, յարատե, ստեղծագործող կորով,
ուր չի գործում վերլուծող, բննագաւազան
միտքը ոչ կրօնի և ոչ պետութեան այլազան կնճիռ-
ների լարերինմասում...

Եղել է, սակայն, արարական ամբողջ քաղաքակրթու-
թիւն միջնագարում — կ'առարկէ մեզ իրազեկ ընթերցողը

Եղել է, այո, սակայն պէտք չէ չափազանցնել և այդ
քաղաքակրթութեան արժէքն ու հմայքը՝ նա երեան
եկաւ քրիստոնէական կուլտուրայի աննախարար շրջա-
նում Օգերեւոյթի պէս փայլեց նա դարերի անեղր տա-
րածութեան մէջ և մարեց՝ գրեթէ առանց հետք թող-
նելու... Իրով հետեւ այդ փայլն ևս սեփական չէր, ինք-
նաւորն չէր, այլ փոխառւած, — մի փոխառութիւն, որ
ընդհանրապէս մնաց անուշ, անարգասիր Արարական
հանճարը քիչ թէ շատ յարատե արդիւնք ունեցաւ, ուցե
միայն ճարտարապետութեան մէջ, Կարծիքները, իրաւ է,
մեծ մասամբ սուրճեկտիվ են, ենթակայական, այնուամե-
նայիւ, նման պարագաներում արժէք ունին հեղինա-
կաւոր կարծիքները, ևս առաւել՝ վկայութիւնը մի այն-
պիսի աշխարհահռչակ հեղինակութեան, որպիսին է
սեմիտաբան Էրնեստ Ռընանը

Ահա թէ ինչ է սուում «Եթսուսի կեանք» ի հեղի-
նակը արարական հանճարի բարձրագոյն արգասիք՝
փիլիսոփայութեան մասին (նվ. վերջոյէս և
Նվ. վերջոյէս՝ իր աշխատութեան նախաբանի մէջ).

Իս ստաջիւնը կը խոստովանիմ, որ մեռք ոչինչ, գրեթէ
ոչինչ բան չունինք սովորելու՝ ոչ Ավերրոսեոսից, ոչ արարնե-
րից... Փիլիսոփայութիւնը սեմիտների մաս եղել է միշտ սոսկ
արտաքին մի փոխառութիւն, առանց մեծ արդատաւորու-
թեան, սոսկ ընդ-րինակումե յայն փիլիսոփայութեան *).

Աւելի ևս հետաքրքրական են նոյն Ռընանի յետա-
գայում գրւած տողերը, որ գանում ենք նոյն գրքի
Ազգաբարութեան մէջ Այդտեղ նա սուում է, որ թէեւ

* E. Renan, Averroès et Averroïsme, հրատ. 1866 թ.

աւելի է ուսումնասիրել խնդիրը, բայց չի փոխել իր կարծիքը արարական փիլիսոփայութեան բնոյթի վերաբերմամբ: Անշուշտ, ասում է, այդ փիլիսոփայութիւնը մի ահագին իրողութիւն է, որ 12-րդ դարում նա հասել էր ճշմարիտ ինքնուրոյնութեան, որ այդ դարի վերջում նա նորիսկ բարձր էր բրիտանեական մտաւոր զարգացումից սակայն՝

«Աստածարանութիւնը ցցեց նրա առջև անանցանելի պատեւէ, թոյլ շուեց, որ այդ փիլիսոփայութիւնը մտնէ հաստատութիւնների մէջ: Մասնագետական փիլիսոփայութեան միջոց մի ահագին (amateur) կամ պայտասական մի պայտասեայ... Գամատիստութիւնը երկիւղ ազդեց իշխաններին, փիլիսոփայութիւնը չքայտա նրանց հրամանով, ձեռագիրները ընջեցին... Արար փիլիսոփայութիւնը հեար շխոզեց և իրենք արարները մտացան այն... Խոյամիզը մերկացրեց այդ պարագայում իր անգարմանելիորէն նեղ հանձարը... Անբնդունակ կերպարանափոխելու և առնելու իր մէջ քաղարացական ու աշխարհիկ կեանքի որևէ տարբեր՝ իսլամականութիւնը դուրս պտկեց իր ծոցից բանապաշտ բնագաւկերթութեան ամեն սագմ: Այդ ճակատագրական ձգտումի գէմ մարտում էին, բունի գեռ Խոյամի հրամանատարութիւնը մեռւ էր նուրբ և սրամիտ արար յեղի կամ պարսիկների ձեռքում: Բայց նա տիրապետեց առանց զիմարութեան այն ժամանակից՝ երբ Խոյամի ղեկավարութիւնն անցաւ թիւրքերի, բերբերների և ալլոց ձեռքը: Մասնագետական աշխարհը մտաւ այնուհետև ազէս անտանայցման այն շրջանը... (le monde musulman entra dès lors dans cette période d'ignorante brutalité)... որին հեռուեց այժմեան հոգեկարբը...»

* * *

Անշարժութիւն՝ կրօնի մեջ, անշարժութիւն՝ պետութեան մեջ, անթիւ հողեր և ուրագուններ անցան մի շարք դարերի ընթացքում արևմտեան Եւրոպայով, ոչ հեռու ասիանեան սահմաններից, տակնուվրայ արին ժողովուրդների քաղաքական ու հասարակական կենցաղը— իսլամ Արևելքը մնաց միշտ անյոյզ ու անփոփոխ, բութօրի ալիքները պահպանեցին յամառաբար իրենց մահաշունչ անգործութիւնն ու անտարբերութիւնը: Ասես բոլորովին ջոկ, տարբեր մի մարդկութիւն էր, տարբեր կերպով մտածող և զգացող, տարբեր օրէնքներով շարժւող— աւելի ճիշտ՝ չը շարժւող, միանգամ ընդմիշտ քարացած՝ հանգեպ փնտրող, անհանգիստ, յաւիտենօրէն փոթորկւող Արևմուտքի...

Արևմուտքում քաղաքակրթութեան պրօցեսը առաջ է ընթացել, շնորհիւ, այսպէս ասած, երկու կարգի ապահովումի:

1. Անջատել են իրարից — վերացական մտքի աշխարհում— Կրօնը և Փիլիսոփայութիւնը կամ ուրիշ խօսքով աստուածաբանութիւնը և մետաֆիզիկան (բնագանցաբանութիւնը):
 2. Անջատել են — հասարակական պետական կեանքում— հոգևոր և աշխարհիկ գործունեքը:
- Անջատել և մտել են հակամարտութեան, մրցման մեջ և դրա շնորհիւ իսկ թաւալել է կուլտուրայի,

առաջագիծութեան անիւր: Աւելի քան ուրեկեց, անգին է այստեղ Հեգելի ծանօթ խօսքը. «Der Widerspruch ist das Fortleitende!»: «հակասութիւնը յառաջատար ուժ է»: Արդարև, եթէ հակամարտ գործունեքից մինը կամ միւսը շքանային հրապարակից, — առաջագիծութիւնը թերևս գաղար աններ և կեանքը լճանար ու ճահճանար բողոքականութիւնը — որ հանգեա կհախրրև ազատ, քննադատական մտքի՝ ճիւղաւորութիւններից մեկը— երբէք լիովին չյաղթանակեց կաթօլիկութեան գէմ երկու մոլեգին հակաանեաները շարունակեցին առաջ սահել զուգահեռաբար:

Նմանապէս և՛ հակամարտ հասանքները փիլիսոփայութեան, գիտութեան, գեղարւեստի մեջ, ապա նաև հասարակական, քաղաքական կեանքի ասպարէզներում: Ընդհանրացնելով նոյնը կարելի է ասել երկու խոշոր հասանքների վերաբերմամբ— Կրօն և Բնագիտութիւն և Լիբերալիզմի պահպանողականութեան և ազատականութեան, ռեակցիայի և յառաջագիծութեան: Մինը միսին երբէք չի աղոյում վերջնականապէս խորտակել և ստպալել, հակաանեաները յարատևում են և անգույ մրցակցութեամբ ու բաղխումներով առաջ են մղում պատմութեան պրօցեսը:

Արևմտեան քաղաքակրթութեան արշալոյսին ևս՝ կրօնը, կարելի է ասել, ամեն բան էր. նա բովանդակում էր մարդկային բոլոր ծանօթութիւնների, գիտութիւնների: Աստուծոյ կամ աստուծների շուրջն էին պտուում մարդկանց բոլոր վերացական դասողութիւնները: Գիլիսոփայութիւնը չունէր անկախ, ուրոյն գոյութիւն. նա մի ճիւղն էր աստուածաբանութեան, նա ձուլւած էր այդ վերջինի հետ:

Կամաց-կամաց, անտեսական կեանքի զարգացման հետ, առաջ կհաւ և մտաւոր գործունեութեան ճիւղաւորում կամ, ինչպէս ասում են, զանազան աւորումն (differentiation): Մարդկային աշխատանքը բաժանեց, մասնաւորեց՝ նաև այդ ասպարէզում: Կրօնի համայնակուլ արգանդից զատեց փիլիսոփայութիւնը կամ մետաֆիզիկան, իբրև մաքի մի ուրոյն ճիւղաւորութիւն և զարգացաւ ու առաջագիծեց իր յատուկ օրէնքներով: Դա ազատ մարի յաղթանակն էր կոյր, անպայման հաւատի գէմ: Դա գիտութեան յաղթանակն էր գագմի գէմ: Կրօնը, սակայն, շարունակեց մօր և իր խորթ զաւակի միջև: փիլիսոփայութիւնը միշտ աւելի և աւելի դիմադրական դիրք բռնեց գէպի կրօնը... Այդ կրօնը մի առանձին սաստկութեամբ բողոքեց գիտութեան ու կրօնի միջև. նա տակաւին շարունակում է:

Նոյն ապահովանքներ երկու հակամարտ սկզբունքների միջև գիտում ենք և պետական, քաղաքական էալիւցիայի մեջ: Այդտեղ ևս, արևմուտքում, երկար դարեր ժողովուրդները ապրել են հոգևոր, կրօնական իշխա-

երկրաւոր իշխանութեան և իր սեփական, դասակարգային տիրապետութեան Պահպանողական և զօգմապաշտ կրօնի մէջ՝ նա եղել է խորապէս պահպանողական և իր ընկերային-քաղաքական աշխարհայեացքի մէջ... Աւելի ևս խտացած, չափազանցած ձևերով՝ նա արծարծել է Ղուրանի մի այլ բացասական հրահանգը, որ թողարտում, սրբագործում է հաւատացեալի ըմբոստացումն ու նահատակութիւնը՝ միմիայն կրօնի խնդիրն երոււմ, միմիայն հաւատար պաշտպանելու և տարածելու նպատակով: Առանձնապէս շեշտուած է կղերի այդ շարաշուք դերը օսման և պատմութեան մէջ: Հին արաբական շրջանում, ինչպէս և նորագոյն Պարսկաստանում, իսլամ կղերը փոքր ինչ տարբեր կերպարանքով է երևան գալիս Պարսկաստանում նա, ինչպէս տեսանք, աջակից էր սահմանադրական շարժումներին, թեպէտ և այդ աջակցութիւնը աւելի մասնակի կցկաւոր ու վաղանցուկ էր, բան սխտեմատիկ, շարուս, նակական և հաւաքական:

Ամեն տեղ, սակայն, գրեթէ բոլոր իսլամական հաստատութիւններն ու աղանդներին ընդհանուր է և յատուկ է մեր նկարագրած կրօնական անհամբերողութիւնը, ճակատագրապաշտ ֆատալիզմը, զանգաւածային մոլեռանդութիւնն ու զօգմայնութիւնը գրեթէ բոլոր հաստատութիւնների մէջ՝ Ղուրանը գլխաւոր կանոնադրիչն է հանրային յարաբերութիւնների և պետական մեխանիզմի: Մասնաւորապէս թիւրքերիցում՝ իսլամական իրաւագրքի Շէրիատի սխտեմատիկ միջատուութիւնները ցեղային և միջցեղային կնճիւններում՝ ստեղծել է վաղուց ի վեր, մանաւանդ հայ տարրի համար, անհանգուստեղի մի կացութիւն, որ մասամբ շարունակուած է, անգամ այսօր, սահմանադրական ռեժիմի տակ:

Այո, ամեն տեղ իսլամի և բրիտանի յարաբերութեանց մէջ շեշտուած է այդ տարկանոն և տարամբժ շէրիական օրէնքը, որ բղխում է նոյն Ղուրանի մշտադաւար աղբիւրներից և որ միշտ կաշկանդում է իսլամ պետութեան զարգացումը, թոյլ չի տալիս, որ նա յարմարի եւրոպական իրաւակարգին, թոյլ չի տալիս, որ պետական հաստատութիւնները ազատին, մաքրին ասիականութեան ժանգից և գրկեն անկեղծօրէն արևմտեան գաղափարները: Իսլամադաւան «միլլեթը» ունի արդէն իր իրաւական կեանքը, միանգամ ընդմիշտ բիւրեղացած իրաւագիտական կօդէքսը, որ չի բղխում — արևմտեան կօդէքսների պէս — մարդկային բանականութիւնից, այլ թարգման է «աստուածային կամքի», արևած է ի վերուստ: Մարգարէի ու Ղուրանի միջոցով, արևած է, իբրև անձեռնմխելի, յաւիտենական և անսխալական օրէնսգիրք: Կառավարութիւններ և սուլթաններ պէտք է շարժւին համաձայն այդ գրքի, քաղաքական, պալատական վերիվարումները չպէտք է հակառակեն նրա տառին, և այսօրևան նորաբողջող

թիւրք ու պարսիկ սահմանադրութիւնները ձգտում են ամեն վայրկեան համաձայնութեան մէջ դնելու երկու հակամարտ, անհաշաւելի էութիւնները — իսլամի այդ յետադէմ ու քարացած իրաւագիրքը և արևմտեան ազատաշունչ իրաւակարգը: Օսմանեան պարլամենտի և պարսից մէջլիսի մէջ մշակուած օրէնքները չպէտք է հակասեն շէրիական օրէնքին... Իսլամի պատճառով եւրոպան միշտ սկեպտիկ է մահմեդական յեղափոխութիւնների նկատմամբ, թերահաւատ է դէպի նրանց բարենորոգչական, «ռեֆորմային ընդունակութիւնը»:

Բրիտանիութիւնը զբաղւում է գրեթէ միայն հաստացեալի ներքին կեանքով, նա չունի յաւակնութիւն կանոնաւորելու մարդկանց բոլոր յարաբերութիւններն ու գործողութիւնները, նա արձակում է մի քանի ընդհանուր բարոյակրթական հրահանգներ, բայց հրաժարուած է սահմանելու և որոշելու անհատական իրաւունքների և պարտաւորութիւնների բովանդակ ու այլազան ամբողջութիւնը, թողնում է այն — պետութեան, օրէնքին: Օրէնք՝ որ ծնունդ է բնական ու սօցիալական միջավայրի, մարդկային բանականութեան ու կամեցողութեան: Իսլամի մէջ՝ Վրօն և իրաւունք բղխում են նոյն աստուածային կամքից, հիւսուած են ազգակցութեան ամենանուրբ թելերով: Վրօնը և «միլլեթը» (ազգը) — միևնոյն բանն է... Ալլահը միանգամ ընդմիշտ գծել է իրաւունքներն ու պարտաւորութիւնները, որոնցից շեղւելը մահացու սրբապղծութիւն է... Ղուրանը միանգամ ընդմիշտ և ամենայն մանրամասնութեամբ սահմանել է հաւատացեալի թէ ներքին և թէ արտաքին կեանքը, նրա յարաբերութիւնը իր իշխանի, իր նմանների, կրօնակիցների, թշնամիների հետ: Ղուրանը մշտնջենապէս նրա ձեռքում կամ գլխումն է, թէ այն ժամանակ, երբ նա ծում ու նամազ է անում, թէ այն ժամանակ, երբ նա իբրև գործի մարդ, գնում է ու վաճառում, կապում է, ստորագրում պայմանագիրներ, դաշինքներ, կամ թէ երբ նա, իբրև զինուոր, կատարում է իր պարտաւորութիւնները, կամ իբրև յանձաւոր, քաւում է իր յանցանքը *): Շէրիատը նրա գլխումն է — իբրև գերագոյն ուղեցոյց — իր ամուսնանական, ընտանեկան և քաղաքացիական կեանքի բոլոր պարագաներում, երբ նա իբրև հարկատու, վճարում է իր տուրքը կամ գնում է վկայելու գատական ատեանի առաջ: Շիրիատը այդ ատեանի առջև է միշտ, երբ մանաւանդ պէտք է լինում ընդունելու — աւելի ճիշտ, չընդունելու — բրիտանից վկայութիւնը այս կամ այն ծանրակշիռ, ժառանգական ու այլ տեսակ խնդրի մէջ... Շէրիատը մահուան պատժի սպառնալիքով արգելում է ուղղափառին բրիտանեայ կին առնել, արգելում է բրիտանեային՝ ամուսնանալ մահմեդական կնոջ

*) Johann Kresmarik, Beiträge zur Beleuchtung des Islamitischen Strafrechts, Leipzig 1904. էջ 73.

Հետ, առանց նախապէս իւրամտնալու... Եւ ահա այդ գրականեան, բարբարոս սպառնալիքով իսկ՝ խղճի ազատութեան դաւանանքը տոնահարած ու խողովորած — յայտնի չէ մինչև երբ...

Ամեն տեղ, Ղուրանի տառի զօրութեամբ, բրիստոնեան «նայեալ» է, հպատակ է, «ստոր ցեղ» է ուղղափառ մահմեդականի աչքում: Ամեն տեղ օգտարդաւան հպատակները բաղաբացի չեն, այլ սոսկ հարկատու և իսլամի պաշտպանութիւնը վայելող օտարներ^{*)}: Եւ անգամ Պարսկաստանը, որ իր ազատութեան նւաճումը պարտական է մի զգալի չափով, հայ բազուկին, իմացականութեան և զոհողութեան, — անգամ պարսիկ սահմանադրական պետութիւնը անբռնակայելի փոքրագութեամբ ղլանում է հայ տարրին ամենահամեստ շինումները, նայում է այդ տարրի վրայ, որպէս օտար ստորադրեալ՝ որ երբէք չպիտի բարձրանայ մինչև տիրող ցեղի մակերևոյթը, որ երբէք չպիտի մասնակցէ զինուորական ծառայութեան, չպիտի վարէ մինիստրական պաշտօններ և այլն:

Ահա ասիկ իսլամի այն «անդարմանելիօրէն անձուկ ոգին», որի վրայ «կնարկում է Ռընանը»:

Եւ մենք կը տեսնենք մեր տեսութեան ընթացքում, թէ ինչպէս այդ «ոգին», այդ խտրական և չարաշուք պատուհասը մոլեգնօրէն ծառանում էր ամեն անգամ, երբ այս կամ այն սուլթանը, Եւրոպայի ճնշման տակ, փորձում էր կիրառելու հաւասարութեան սկզբունքը տարբեր, այլադաւան ցեղերի միջև...

Երկու տարբեր ուղղութիւններ — անտարակոյս: Այդպէս բնորոշեցինք արևմտեան և արևելեան — մահմեդական բաղաբարկութիւնը: Չափազանցած, սխալ ձևով չը մեկնաբանելի այդ բնորոշումը: Արևմտեան բաղաբարկութեան գերազանցութիւնը, հարկաւ, չի պայմանաւորում սոսկ կրօնի առաւելութիւններով, բրիտանեական զօգմի ու բարոյախօսութեան յատկանիշներով:

Բրիտանեակութիւնն ևս դարեր շարունակ հալածեց ազատ մտքը, թշնամական դիրք բռնեց դէպի գիտութիւնն ու ռացիօնալիզմը, բանագրանքի ենթարկեց Կալիլէյներին ու Բրունօներին, խարոյկներ բարձրացրեց հարիւր հազարաւոր «հերեաթիկոսների» դէմ և ինկվիզիցիայի, հաւատաքննութեան ոճիրներով սեւացրեց բովանդակ միջնադարեան պատմութիւնը:

Միւս կողմից՝ մահմեդական անշարժութիւնն ևս չի կարելի վերագրել միմիայն իսլամ կրօնի առանձնայատկութիւններին:

Մէկ թէ միւս պարագայում՝ պատճառների ամբողջութիւնը ընդգրկելու համար, պէտք կը լինէր իշնել

*) Այդ խօսքերով էր պատասխանում մի պարսիկ հեղինակուր երեսփոխան — մի երկու տարի սրանից առաջ — Մէլիխի մէջ բնկեր Յ. Միրզայանցի արտասանած ճառին, զինուորագրութեան առիթով:

մինչև այդ երկու տարբեր հասարակութիւնների օրօրոցները, ճանաչել, ուսումնասիրել նրանց՝ ամենանախնական ժամանակներում, ուսումնասիրել սերտ կապերը, յարակցութիւնը շրջապատող բնութեան հետ, այն յարասե ու բռնակալ ազդեցութիւններն ու հակազդեցութիւնները, որ գործել են՝ տիեզերական միջավայրը, կլիմաներն ու աշխարհագրական դիրքերը, ծովերն ու գետերը, հողերի որպիսութիւնը, բուսականութիւնը, սնունդը և հարիւրաւոր այլ պայմաններ ու պատճառներ, որոնք կոել և դարմնել են հասարակութիւնների ֆիզիկական և հոգեբանական տիպը այն անդրագոյն շրջաններում:

Ոչ կրօնը միակ վճռական ազդակը չէ, — մանաւանդ արևմտեան բաղաբարկութեան մէջ: Բայց և, անշուշտ, մեր յիշատակած կրօնական տարբերումները ունին իրենց որոշ տեղը երկու բաղաբարկութեան ուղղութիւնների — արևմտեանի և արևելեանի — ուժգին հակամարտութեան մէջ: Անտարակոյս, բրիտանեակութիւնը — շնորհիւ գուցէ իր սկզբնական կորիզի յարաբերական մաքրութեան, շնորհիւ թերևս իր հիմնադրի բարոզած մի շարք վեհանձն, համամարդկային սկզբունքների, որոնք այլանդակօրէն խեղաթիւրեցին յետագայում կղերի դասակարգային տիրապետութեան բուրայի մէջ — անտարակոյս, ասում ենք, քրիստոնէութիւնը ցոյց տուց ինքզինքը պատմութեան մէջ շատ աւելի ձկուն, առաձգական, հաշտարար ու յարմարող՝ հանդէպ ամեն տեսակ նոր, «մօզերն» հոսանքների, հանդէպ ժողովրդապետութեան, հասարակութեան և եղբայրութեան նշանաբանների: Նա յարմարեց անգամ ամենամօզեղուն հասարակական հոսանքին — Սօցիալիզմին: Ո՞վ չգիտէ, որ հին ու նոր սօցիալիստական ու հիւրաններից շատերը կոչ են արել յաճախ նախնական բրիտանեակութեան հաւասարապաշտ հրահանգներին: Ո՞վ չգիտէ նաև, որ այդ նոյն նախնական բրիտանեակութեան և հաւասարապաշտ կամուրջով անունով բռնկել են միջնադարեան Եւրոպայում մի անվերջ շարք սօցիալական շարժումներ, անաբապախտ աղանդաւորների, տաբօրիաների, գիւղացիների մեծածաւալ, զանգւածային շարժումներ, որոնք արեան հեղեղներով ռոտեցին հասարակական զարգացման ճանապարհը, ցանցեցին արգասաւոր սերմերը աւելի երջանիկ ապագայի համար, նախապատրաստեցին ժամանակակից սօցիալիզմի համաշխարհային հոսանքը:

Իսլամիզմը սկզբից արդէն նեղ, տարամերժ ոգի մատնեց և դրանով իսկ շեշտեց իր անբարեհաճ դիրքը դէպի ճշմարիտ քաղաքակրթութեան հրամայականները:

Մարդկանց, բոլոր մարդկանց, հաւասարութեան և եղբայրակցութեան նշանաբանը, — որ այդ բաղաբարկութեան վախճանական ու գերագոյն նպատակներից մինն է — խորթ էր միշտ իսլամի համար, խորթ է մնում և ցայսօր:

կրօնական խարութիւնը, իշխողի և հպատակի, ուղղափառի և «ոայեա»ի խորունկ անազօնիզը՝ ղեկավարող սկզբունքն է միջցեղային քաղաքականութեան քրիստոնեայ հայութիւնը գեռ ազգ էլ չէ, այլ սոսկ միայն կրօնական համայնքը և թէ անգամ նա ստանայ էլ ապագայում աւելի լայն ազգային ինքնուրոյնութիւն, եթէ նա *de facto* օժտւի գործադիր իշխանութեան և գործն ազգայնութեան ստորոգելիներով—նա դարձեալ *de jure* գիտւելու է միշտ, իբրև կրօնական մի համայնք:

Դեռ թիւրքիայում՝ քրիստոնեայ ազգերը շօշափելի թւական ու օրական ուժ կազմելով, կարող են ապագայում մի յայտնի յեղաշրջում մտցնել ուժերի փոխյարաբերութեան մէջ. կարող են նւաճել թերևս լիակատար իրաւահաստրութիւնը Իսկ այնտեղ, ուր քրիստոնիաները կազմում են մի շնչին թիւ (ինչպէս, օրինակ, Պարսկաստանում), այնտեղ նրանք դատապարտւած են—յայտնի չէ, մինչև երբ—կրելու «ոայեա»ի, իրաւական և իրական ստորագրեալի ոչ պատուար ճակատագիրը:

Այդպէս — միջցեղային յարաբերութիւնների մէջ չապա ներսո՞ւ... Ի՞նչ պիտի լինի բուն իսկ իսլամ մարգկութեան վիճակը: Ե՞րբ արդեօք կը խորտակի վերջնականապէս նրա դարաւոր անշարժութեան սառուցը, այդ սարսփելի մտայնութիւնը, որի վրայ արձիճային լեռան պէս ծանրացած է իսլամական դօգմը: Ե՞րբ արդեօք կը թօթափւի այդ ահաւոր լուծը: Ե՞րբ կը ծնէ մահմեդական աշխարհը... մի լուծէր:

Եւրոպական լուծէրը իր ծաւալուն, վերանորոգչական շարժումով արգիւնք էր թէ քննադատական մտքի բազմադարեայ զարգացման և թէ տնտեսական գասակարգային որոշ պայմանների ու մղումների, արդիւնք էր մասամբ այն խուլ, երկարատև ու յարաճուն դժգոհութեան՝ որ մի՞թեւեւ էր արևմտեան զանգւածների մէջ, ընդդէմ պապական հարստահարիչ և կեղբրիչ տիրապետութեան:

Ե՞րբ կը գայ, կը հասունանայ այդ բնական միտքը և այդ փրկարար դժգոհութիւնը մահմեդական մտաւորականութեան և տրորած, ֆանատիզմի ու ֆատալիզմի թոյնով մշակած զանգւածների մէջ...

Բուում է թէ մինչ այն՝ բոլոր կատարած ու կատարելիք տղատական նւաճումները պիտի մնան հարկադրաբար կիսատ ու երերուն. թւում է թէ մինչ այն իսլամ մարգկութիւնը չպիտի կարողանայ հաշտել անկեղծօրէն արևմտեան բարաբակրթութեան իրական նշանաբանների հետ, գրկել անկեղծօրէն համամարդկային ազատութեան և հասարակութեան աւետարանը:

Ռ Ո Ւ Ս Ա Ս Տ Ա Ն

Ա Զ Գ Ա Ր Ա Ը Ո Ւ Թ Ի Ի Ն

Միջազգային ընկերվարական Բիւրօն խնդրում է մեզ՝ հրատարակութեան տալ հետևեալ երկու ծանուցումները, որ գալիս են ռուսական Սօցիալ-Դեմօկրատիայի երկու հակամարտ հասւածների կողմից.

1

(ԵՒՆՈՒՑՈՒՄՆ ԼԷՆԻՆԻՆ)

Աւերջին տարիներս Ռուսաստանի սօցիալ-դեմօկրատական բանւորական կուսակցութեան մէջ տիրում էին շփոթութիւն և կազմալուծում: Երեք տարւայ ընթացքում կուսակցութիւնը չկարողացաւ գումարել ոչ կօնգրէս, ոչ իսկ խորհրդաժողով, և երկու ձիգ տարիներ՝ նրա կենտրոնական կոմիտէն բնաւ չպաշտօնավարեց:

Կուսակցութիւնը շարունակում էր ապրել, բայց ցրիւ, կղզիացած խմբումների ձևով (բանի որ չկար կենտրոնական կոմիտէ), ապրում էր բիշ-շատ կարևորութիւն ունեցող քաղաքներում:

Սակայն, մի բանի ժամանակից ի վեր, ռուսական պրօլետարիատի զարթնումի ազդեցութեան տակ, կուսակցութիւնը սկսել է վերակազմել և նորերս կարողացանք, վերջնապէս, գումարել կուսակցութեան խորհրդաժողով, կօնֆերանս (մի բան, որ անկարելի էր եղած 1908 թւականից ի վեր), որին ներկայ էին երկու պատգամաւորներ՝ երկու մայրաքաղաքների կազմակերպութիւնից, հիւսիս-արևմտեան և հարաւային սահմաններից, կովկասից և կենտրոնական Ռուսաստանի արդիւնաբերական վայրերից. ընդամենը 20 կազմակերպութիւն յայտնեցին իրենց համերաշխութիւնը կազմակերպիչ Գանձնոթիմի հետ, որ գումարել էր այդ խորհրդաժողովը: Երկուսն էլ գրեթէ բոլոր կազմակերպութիւնները—մինչև վիկիթ է բոյշնիվիկ—որ ներկայումս գոյութիւն ունին Ռուսաստանում:

Խորհրդաժողովը ինքզինքը հռչակեց, որպէս կուսակցութեան միահեծան օրգան. 23 նիստի մէջ նա քննեց օրակարգի մէջ նշանակւած բոլոր խնդիրները, որոնցից մի բանիսր ունին կենսական կարևորութիւն: Նա խորապէս և կատարելապէս գնահատեց ներկայ քաղաքական կացութիւնը և կուսակցութեան քաղաքականութիւնը: Մի գնահատութիւն՝ որ կատարելապէս համաձայնում է 1908-ի խորհրդաժողովի և 1910-ի Անար. կոմիտէի համադուժար ժողովների օրակարգերի հետ: Նա մասնաւոր ուշադրութեան առաւ Պետական Գումայի ընտրութիւնները, որ տեղի պիտի ունենան մի բանի ամսից յետոյ և այդ աւթիւ մշակեց երեք բաժնից բաղկացած մի օրակարգ, որը շատ կօնկրեալ ու մարմանան ձևով նախատեսում է մեր ընտրական օրէնքի բազմապիսի բարացումները, կարծիք յայտնեց ընտրական համաձայնութիւնների մասին ուրիշ կուսակցութիւնների հետ և բննեց բոլոր կողմերից կուսակցութեան գիւրքն ու գործունէութիւնը առաջիկայ ընտրողական արշաւանքի ընթացքում:

Սովի հարցը, բանւորական ապահովագրութիւնը, սինդիկատներն ու գործադուլներն ևս բնութեան առարկայ եղան և լուծոււն ստացան:

Խորհրդաժողովը բննեց նաև «Տաշեյարդարներ», «Իկվիդատորներ» խնդիրը: Այդ հոսանքը մեծում է գաղտնի, իլլեգալ կուսակցութեան գոյութիւնը, յայտարարում է, որ նա արդէն վերջացած է (կուսակցութիւնը լուծւած է), որ նրա վերականգնումը սոսկ մի յետադիմական ցնորք է և պնդում է, որ նա կարող է վերածնելի միայն իբրև լեգալ, օրինական կուսակցութիւն: Եւ այնուամենայնիւ, այդ հոսանքը, որ հրաժարել է գաղտնի կուսակցութիւնից, մինչև օրս չի կարողացել հաստատել օրինական կուսակցութիւն:

Խորհրդաժողովը արձանագրեց, որ կուսակցութիւնը չորս տարուց ի վեր պայքարում է այդ հոսանքի դէմ, որ 1908-ի կօնֆերանսը և 1910-ի կենտրոնական կոմիտէի համադուժար ժողովը ժխտական գիրք են բունել դէպի լեկվիդա-

տօրները, որ շնայեալ ի գործ դրած բոլոր ջանքերին, նրանք շարունակում են պաշտպանել իրենց առանձնացած դիրքերը և յարձակումներ գործել կուսակցութեան դէմ օրինական մամուլի մէջ:

Խորհրդատուները, հետևապէս, յայտարարեց, որ իրենց ամբողջ գործունէութեամբ լիզվիդատօրները, համախմբւած «նախ ժիզն» և Դիէլյո ժիզնի» օրգանների շուրջը (որոնց պէտք է այժմ աւելացնել Ժիզյոյէ Դիէլյո») իրենք գիրքներ գուրս են ձգել Ռուսաստանի Ս. Գ. Բանւորական կուսակցութիւնից:

Ի վերջոյ ընտրւեց՝ կենտրոնական կոմիտէ և սօցիալ-դեմոկրատ կենտրոնական օրգանի խմբագրութիւն: Աւելի ևս, քանի որ մենք ունինք արտասահմանում ահապահ թւով խմբուածներ, որոնք սօցիալիստ են քիչ թէ շատ, որոնք յամենայն դէպս կատարելապէս կղզիացած են սուս պրօլետարիատից և նրա սօցիալիստական գործունէութիւնից, ուստի և միանգամայն անպատասխանատու, — Խորհրդատուները յատկապէս որոշեց, որ այդ խմբուածները ոչ մի կերպ չեն կարող ներկայացնել Ռուսաստանի Ս. Գ. Բանւորական կուսակցութիւնը, որ վերջինը պատասխանատու չէ, ոչ էլ երաշխաւոր նրանց համար և որ բոլոր յարաբերութիւնները Ռուսաստանի Ս. Գ. Բանւորական կուսակցութեան հետ պէտք է պահպանել կենտրոնական կոմիտէի միջոցով:

Տրոււմ է Վլադ Ուլեանովի հասցէն)

Սոյն ծանուցման դէմ հրապարակ է նետուում Լենինի հակառակորդ խմբերի կողմից հետևեալ բողոք-ազգարարութիւնը.

Նկատելով

Ար նորերս (Լինինի խմբի կողմից) ծանուցւած Խորհրդատուները գումարել է մի մասնի կողմից, որ ինքզինքը անւանում է Ռուս կազմակերպիչ ԅանձնախումբ, որի ծուցում սկզբից ի վեր ոչ մէկը ազգային ս. գ. կազմակերպութիւններից (բունդ, լենական և լատիշական սօցիալ-դեմոկրատիա) չէ ունեցել ներկայացուցիչ:

Ար կուսակցութեան մի շարք տեղական մարմիններ և կովկասեան նահանգային կոմիտէն ընաւ չեն ծանաչել այդ ԅանձնախումբը:

Ար նրա գործունէութիւնը ներշնչւած լինելով հասուածային ոգով և մերժելով ընդունել իր մէջ իբրև լրացում, միև, տարբեր ուղղութիւնների ու կազմակերպութիւնների ներկայացուցիչներին, հրել ու հեռացրել է իրենցից վերջնական անպայման բոլոր ազգային ս. գ. մարմինները և անց բացառութեան և կուսակցութեան բոլոր ուղղութիւնները, բացի միայն մէկից, Լենինի ուղղութիւնից:

Ար Խորհրդատուները ներկայացնել է կուսակցութեան մարմինների և գումար և սուսական կազմակերպութիւնների մի մասը միայն և որ, բացի այդ, վերջիններից շատերը — և կարևորագոյնները բոլորքն են ազգէն իրենց ներկայացուցչութեան դէմ այդ կոմիտէի մէջ, նկատելով այն, որպէս անկանոն:

Ար շնայեալ այդ բոլորին, կոմիտէի անստիճանութիւն է ունեցել անւանելու ինքզինքը «Ամբողջ Ռուսաստանի Խորհրդատուներ», հաշակելու ինքզինքը կուսակցութեան վարիչ օրգան և ընտրելու կենտրոնական կոմիտէ:

Խորհրդակցութիւնը (Լենինի հակառակորդների) հետևապէս, դիտում է այդ կոմիտէի անստիճան, որպէս անկերև փորձ բանագրուելու, յափշտակելու (usurper) կուսակցութեան դրօշը մի խումբ անհասանելի ձեռքով, որոնք միանգամայն գիտակցաբար ձգել են կուսակցութիւնը դէպի պառակտում և նա իր խորին ցան է յայտնում, որ կուսակցութեան մի քանի մարմիններ և քնկերներ հրապարակ են այդ խաբէութեանը և գրանով իսկ նպատակւորել են պառակտումի բազմակամութիւնը և Լենինեան թափախել յափշտակութիւնը:

Խորհրդակցութիւնը գտահուում է զանազան կուսակցութեան բոլոր մարմինները ուժգնօրէն պիտի բողոքեն այդ նոր նիւթւած coup d'etat-ի դէմ, որ նրանք պիտի մերժեն ծանաչելու այդ Խորհրդատուները ընտրած կենտրոնական մարմինները և որ նրանք իրենց արժանագրութեան տակ գանւած բոլոր

միջոցներով պիտի նպաստեն վերականգնելու կուսակցութեան միութիւնը, գումարելով մի Խորհրդատուներ, որ լինի իրօք կուսակցութեան Խորհրդատուներ:

Ընդունւած է միաձայն հետևեալ խմբուածների ու ներկայացուցիչների կողմից.

Ա. Բերգման (Բունդ). Շ. Ռապպոպօրա և Բարին՝ այն փոքրամասնականների կողմից, որոնք մնում են կուսակցութեան հողի վրայ (Պլէխանովի խումբը). Ա. Լուսնաշարսկի՝ ռուսներին կողմից. Լեօվա և Մարի — այն մեծամասնականների կողմից, որ մնում են կուսակցութեան հողի վրայ. Ռ. Իգօրև, Պօլոս Սօցիալ-դեմոկրատիա՝ ի կողմից. Տրօցկի՝ Պրօլետարիատի կողմից:

Կուսակցութեան անդամների ընդհանուր ժողովը, գումարւած Պարիզում մարտի 12-ին, յարել է ներկայ որոշումին՝ 137 ձայն՝ թեր. 8 ձայն՝ դէմ և 13-ը ձեռնպահ:

Հատիչեան սօցիալ-դեմոկրատիայի արտասահմանեան կոմիտէն, 1912-ի մարտ 17-ին, երկու ձայնով 1-ի դէմ նորպէս յարել է այդ որոշումին:

Լ Ո Ւ Ր Ե Ր

Պետերբուրգի դատաւարութեան և մերկայւած կեղծիւների առթիւ՝ մեր խմբագրութիւնը հրատարակեց մի կոչ, ուղղւած Եւրոպայի հանրային կարծիքին:

Տեղի ունեցաւ ժընէվի մէջ Եւրոպայի Հ. Ե. Գ. ուսանողական Միութեան IV Համագումարը: Պատգամաւորներ եկան էին՝ Պարիզէն, Նանսիէն, Լայպցիգէն, Յիւրիխէն և Լօզանէն: Համագումարը տեւեց մէկ շաբաթ:

Ն Ի Ի Ր Ա Տ Ի Ո Ւ Թ Ի Ի Ն

Արեւմտեան Բիւրօն տացած է՝
 Լիվրպուլէն՝ հայ պանդուխտներ հանգանակւած 88 դոլար, յօգուս կովկաս. բանարկ. — Նիդրալանդներ 161, Նալսուր Մամսեան 200 դր., Ելիին Մամսեան 102, դուսր Մամսեան 100, Մարտս Մ. Պետրսեան 123, Պետրս Մ. Թալէտեան 156, Նալարէր Բիւնիպիլեան 126, Պետրս Յովհաննիսեան 90, Գեորգ Մետրպեան 72, Մարգի Մուելեան 51, Վալիմակ Արզումանեան, Յակոբ Չաղոյեան, Սերո Մարկոսեան, Մելիոն Արզումանեան 60-ական դր., Մարի: Գոյսեան, Գրիգոր Մարտեան, Յակոբ Բարեղեան, Իսայի Կօւկարեան, Յակոբ Չախամեան, Նեան Գոլոյեան, Մարտիրոս Թալանեան, Յարութիւն Կօւկարեան, Համարձում Մ. Համարձումեան, Պետրս Թուսեան, Յովհաննէս Դուկասեան, Մարտիրոս Տէրոյեան, Ոմն, Համարձում Մանուկեան, Նաս Մանուկեան, Յարութիւն Պետրսեան, Պետրս Պետրեան, Յակոբ Մ. Նալսուրեան 30-ական դր., Եղիազար Դաւանեան, Սեդակ Համոյեան 24-ական դր., Պաիր Օմար 19, Արեակ Նանասեան, Աստուր Նանասեան, Չաղար Գլեբիլեան, Մանուս Ալիմ 18-ական դր., Նալարէր Խօնիլեան, Յարութիւն Նեանեան, Վարդէտա Մարկոսեան, Մանուս Նալի, Մասաձա Մանուս Վոլլայ Մանուս Ալիմ, Մանուս Ալի, Մասաձա Հիւսի 15-ական դր., Գեորգ Մելիոնեան, Յակոբ Մարտեան, Յովհաննէս Մ. Աստուրեան, Պաղղասար Արզումանեան, Մարտիրոս Պիտեան, Մար Հանրի Արախաձ (անգլիացի), Իսրայիմ Մանուս, Հուսէն Չալու Մանուս, Մանուս Պալլա, Ալի Հուսէն 12-ական դր.:

Լիվրպուլէն հայ. Մամսեան 10 դոլար:
 Կոնստանցայի Կօմիտէն՝
 1910—1911, Մեմարանի զոյնէն արտո մը, մալի մեմնայ մը ետար մը 14. 30 լիվ, Մարտիրոս Ժամկոյեանէ ի հաշիս սեմարանի 19. 50, Արմենակ Յակոբեանէ ի հաշիս սեմարանի 100 Գրօսակի բամբեկիցներէն 45, խմբիւրէ՝ Պետեան 40, Սերմեան 62, Դեմոկրեան 43, Սերո 60, Արմաթեայ տուր Եանդիէն 5 լիվ: Գումար 388 լիվ 80 սր.: